

ՀԱՅ. Կ. Կ. (Բ.) XV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Կ. ԲՈԳՈՎՈՅ

ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՖՖԱԿՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ
ՅԵՎ
ՊԱՅՔԱՐԸ ԿՈՒԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Թարգմ. Ա. Ա.

1928.

ВОЗВРАТИТЕ КНИГУ НЕ ПОЗЖЕ
обозначенного в здесь срока

БЦК Госиздата РСФСР.

Зак. 1954. Р₄ .Л.

39 — 7 — 704 704

ՀԱՅ. Կ Կ (Բ) XV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

33
F-78

Հ. ԲՈԳՈՎԵԱ



ԳՅՈՒՂԱԿԱՆ


ԶԲԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ՅԵՎ


ՊԱՅՔԱՐԸ ԿՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ

A 19152

Թարգմ. Ա. Ա.



Պետական Հրամակիչություն. — Տեղավաճ. 1928



N 758

Գրառեպիալ N 770 (բ)

Տիրած 2000

Գետհրատի առաջին տպարան Կաղարշապատում

Ի՞նչ ուղիով և քնրանում գյուղի զարգացումը,
կապիտալիստակա՞ն, թե՞ սոցիալիստական.

Կոմմունիստական կուսակցությունը գլուղական պրոլետարներին և կիսապրոլետարներին (բատրակներին և չքավորներին) միշտ համարել և համարում է քաղաքի արդյունաբերական պրոլետարիատի հենարանը գլուղում, գլուղացիության վրա ունեցած պրոլետարական ազգեցության հաղորդիչը:

«Մեր հենարանը չքավորությունն եւ բատրակն ել հետը: Դա մեր ազգեցության ամենաշհավատարիմ հաղորդիչն եւ Մեր գաշնակիցը, վորին կարող ենք գրավել այդ չօտախորության միջոցով, դա միջակ գլուղացիությունն եւ Մեր թշրինամին կուլակն եւ Առանձին-առանձին չի կարելի հարուցել չքավորության վերաբերյալ խնդիրները և միջակի վերաբերյալ խնդիրները»:

...— այսպես և համառոտակի վորոշում ընկ: Բուխարինը կուսակցության քաղաքականության սահմանումը գլուղում: Կուսակցության նոր կուրսը, խորհուրդների աշխուժացման վերաբերյալ կուսակցության քաղաքականությունը չի կարելի համարել (ինչպես միքանի ընկերներ աշխատում են անել) վորապես փորձ պրոլետարիատի ձեռքով միություն հաստատելու գլուղացիության հիմնական մասսայի, մեր լերկրագործության կենտրոնական դեմքի՝ միջակի հետ առանց չքա-

վորության և բատրակության մասնակցության և նրա կողքից անցնելով: XIV կուսկոնքերենցիալի և կենտրոնական կոմիտեի 1925 թ. հեկտեմբերի ամսականում պարունակվության համապումարի կողմից, հիմնականում ուղղված են լեզել այն բանին, վոր կուսակցության և խորհրդավորներին իշխանության միջոցով գլուղացիական չքավորությունը բաժան-բաժան լեզած, ապրուստի տրամադրություններով համակված խումբ լինելուց դարձընեն իսկական կազմակերպված քաղաքական ուժ, գլուղում պրոլետարիատի հենարան՝ կուլակի, գյուղական եկոնոմիկայի կապիտալիստական տարրերի դեմ մղվող կազմակերպված պալքարի մեջ, միջակ գյուղացիության համար, պրոլետարիատի ու գյուղի չքավորության և միջակ գյուղացիության միության համար մղվող պալքարի գործում:

1927 թ. գեկտեմբերին տեղի ունեցած կուսակցական ԽV Համագումարն ամփոփեց կատարած մեր շինարարության աշխատանքները և սահմանեց գլուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ուղիները: Գյուղի գասակարգային շերտավորման վերաբերյալ նյութերի մանրակրկիտ ուսումնասիրության հիմունքով Համագումարը միաձայն ջրեց մեր գյուղի կապիտալիստական զարգացման մասին տրոցկիստական ոպպոզիցիան պնդում եր, թե

«գյուղի շերտավորումը նրանում և կայանում, վոր միջակալին մասսան իրանից արտադրում և մի կողմից մարդիկ, վորոնք մտնում են ունկոր

կուլակալին խումբը, մյուս կողմից պրոլետարացնում և իր չքավորական-սակավազոր թեր»¹: Ի՞նչ բան և գյուղի կապիտալիստական զարգացումը: Դա այնպիսի զարգացում և, վորի ժամանակ գյուղի միջակալին մասսան կլանվում և (քշվում և) յերկու խմբերի մեջ, յերկու բնեոների մեջ: Այդ բնեոներից մեկի վրա աճում և աղքատությունը, աճում և ավելի ու ավելի մեծացող թափով, աղքատացած գյուղացիական մասսաներին ստիպելով կամ գնալ քաղաք և գործարանատիրոջ համար աշխատել, վորն ոգտավելով այն բանից, վոր բանվորական ուժի առաջարկը պահանջից գերազանցում և, աշխատության համար այնպիսի վարձ և տալիս, վորը հազիվ-հազ և բավականացնում, վոր մարդ քաղցից չմեռնի, կամ կուլակի արևանի ճորտն և դառնում: Մյուս բնեոի վրա աճում և կուլակությունը՝ հետզհետե իր ազգեցությանը լին-թարկելով գյուղացիության աղքատացող մասը:

Ցարական կառավարության կառավարելու ամբողջ սիստեմը, հարկալին և վարկալին քաղաքականությունը և ընդհանրապես բոլոր միջոցները—այս բոլորն ուղղված եր գյուղի կուլակալին վերնախավին նպաստելու համար: Ցարական իրավակարգում հենց դրան ել ծառայում եր գյուղական կոռպերացիան, վորը կապիտալիստական տնտեսության սիստեմին եր հարմարվել:

Միանգամայն այլ դրություն և տիրում Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո գյուղում, խորհրդա-

¹ Կուսակցությունը և սպազմիցիան ԽV Համագումարի նախորյակին: Սմիլգայի ճառը ԿԿ-ի և ԿՎՀ-ի պլենումում: Մոսկվա, 1927 թ.,

լին գլուղում։ Հոկտեմբերիան հեղափոխության հետեւ վանքով գլուղը հավասարվել եւ կուլակալին վերնախավը պառակտվել եւ Զքավորության աճումը կանգ ե առել։ Հողագործության հիմնական դեմքը միջակն և զարձել։ Ալդ կենտրոնական դեմքը տարեցտարի ամրանում ե շնորհիվ նրան, վոր չքավորական տնտեսությունները բարձրանում ե աճում են։

Կուսակցության XV Համագումարում արած իր գեկուցման մեջ ընկ. Մոլոտովը շատ հետաքրքիր մի ազլուսակ ե բերել Խորհրդային Միության ազգաբնակության ըստ սոցիալ-տնտեսական խմբերի 1924/1925, 1925/1926 և 1926/1927 թ. թ. թվաքանակի և բաժանման վերաբերյալ (ալդ ազլուսակը կազմել ե ԽՍՀՄ Ժողկոմխորհի այն հանձնաժողովը, վորն զբաղվել է ազգաբնակության զատ-զատ սոցիալական խմբերի տուրքագրման ծանրության հարցերի ուսումնասիրությամբ)։ Ահա ալդ ազլուսակը (տես եջ 7-րդ)։

Այս ազլուսակից լերնում ե, վոր չքավորության քանակությունը փոքրանում ե. միջակալին խումբն աճում ե. միքիչ աճում կա նաև լերբորդ խմբում, թեև ալդ խումբն ամբողջապես չի կարելի համարել, վոր կուլակալին խմբին ե պատկանում (դրանում 2—3% միջակներ կան)։ XV կուսակցական Համագումարից քիչ առաջ տեղական շատ կուսակցական կազմակերպություններ են զբաղվել գլուղի դասակարգային շերտավորման ուսումնասիրության հարցերով։ Ալդ ուսումնասիրության արդյունքը կազմող նյութերը հաստատում են այն միացյալ նյութերը, վոր ընկ. Վ. Մոլոտովը ե մեջ բերել կուսակցության XV Համագումարին արած իր ղեկուցման մեջ։ Այսպես, Հյուսիսային-կով-

ԱԳՐԱՐՆԱԿՈՒԹՅԱՆ ԽՄԲԵՐԸ	1924—25 թ.		1925—26 թ.		1926—27 թ.		Հորդագործ աղջարնակներ, բյանի կամ հաղարքային աղջարնակներ (աղջարնակները՝ հանդիպումանը՝ զույգ 0,6—0,8 լ)	
	1924—25 թ.	1925—26 թ.	1926—27 թ.	1924—25 թ.	1925—26 թ.	1926—27 թ.	թվով	թվով
I. Պերկարգործական	—	—	—	2 700,0	3 000,0	3 200,0	4 ₄	100
II. Ժամանակակից բանդի ՀՀ արձող	19 059,0	18 470,0	18 743,0	88 ₇	87 ₄	85 ₈	5 ₃	5 ₃
1. Զքաղաքական խմբեր	6.070,0	5 441,0	5 212,0	24 ₀	21 ₆	20 ₄	—	—
2. Մեջակային խմբեր	12 989,0	13 029,0	13 261,0	64 ₇	65 ₈	60 ₄	—	—
III. Ժամանակակից բանդի կարձող	1 234,0	1 327,0	1 404,0	6 ₆	7 ₆	7 ₆	—	—

կատում ըստ անառանձների իմբարավորման հետեւյալ փոփոխություններն են են տեղի ունեցել. անասնազուրկ տընտեսությունները յեղի են — 1925 թվականին 42,7%₀, 1926 թ. 40,1%₀. մի գլուխ անասուն ունեցողները — 1925 թ. 27%₀, 1926 թ. 26,5%₀. յերկու գլուխ անառանձներն ունեցողները 1925 թ. 20,9%₀, 1926 թ. 22,2%₀. յերիք զլուխ անասուն ունեցողները — 1925 թ. 5,3%₀, 1926 թ. 6,3%₀. չորս գլուխ ունեցողները — 1925 թ. 4,1%₀, 1926 թ. 4,9%₀. Մերձվոլգան զերմանացիների հանրապետության մեջ անասնազուրկ տնտեսությունների քանակությունը կը առ վել ե 63,1%₀-ից (1922 թ.) մինչև 42,7%₀ (1926

թ.): Ռիազանի նահանգում յեղջերավոր անասուններից զուրկ տնտեսությունների քանակությունը պահանջել է 44,1% -ից (1925 թ.) մինչև 42,7% (1926 թ.): Պերմի շրջանում ձիազուրկների քանակը տարեցտարի փոքրանում ե. 1924 թ.—32,8%, 1925 թ.—30,7%, 1926 թ.—27,2%: Կովազուրկ տնտեսությունները ելավելի արագ են նվազում. 1924 թ.—18,3%, 1925 թ.—13,3%, 1926 թ.—11,6%: Մինչույն ժամանակ նկատվում ե լերկու կով ունեցող տնտեսությունների բավական արագ աճում, 1924 թ.—16,1%, 1925 թ.—20,9%, 1926 թ.—24,3%: Ոմսկի շրջան (Սիրիք). Հքավորական տնտեսություն լեղել ե—1925/26 թ. 42,2%, 1926/27 թ. 36,3%. միջակալին տնտեսություն համապատասխան թվականներին—45,4% և 50,1%: ամուռ միջակալին (արագիսի խումբ և սահմանել շրջկոմը)—8,4% և 9%: կուլակալին—6,2% և 4,6%:¹ Տարալի շրջան. 1925/26 թ. Հքավորներ—40,58%, միջակներ—57,74%, կուլակներ.—1,68%. 1926/27 թ. Հքավորներ—34,94%, միջակներ—62,68%, կուլակներ—2,38%²: Կուրսկի նահանգի Գրալվորոնի գավառ. տեղական կազմակերպությունների մշակած նյութերը ցուց են տալիս հետևյալ պրոցեսով. «գավառում Հքավորական տնտեսությունների քանակը փոքրանում ե գլխավորապես իրանց տնտեսությունների ամրացման և միջակալինին անցնելու հետևանքով. միջակալին տնտեսություններն ամրանում են, և միքիչ աճում են ունեցո՞րների և կուլակների խմբի տնտեսությունները»³:

¹ «Рабочий Путь», № 268, 1927 թ. 28 նոյ.

² «Советская Деревня», № 4, 1927 թ. 20 նոյ.

³ «Курская Правда», 1927 թ. 24 նոյ.

Ալսպիսի տվյալներ կարելի լե բերել Խորհրդավին
Միության շատ-շատ զրջանների վերաբերքավ, բայց մեզ
թվում ե, թե բերածներն ել լիսվին բավական են տես-
նելու համար գլուղացիության միջակ մասսավի աճու-
մը, չքավորական տնտեսությունների տնտեսապես բար-
ձրանալու հետևանքից առաջացած աճումը, տեսնելու
համար ոպազողիցիալի այն պնդումի անճշտությունը,
թե խորհրդավին գլուղի տնտեսական զարգացումն ըն-
թանալու լե և ընթանում ե կապիտալիստական ուղիով:

Մեր խորհրդավին գլուղի տնտեսական զարգա-
ցումը կընթանա և ընթանում ե սոցիալիստական ու-
ղիով: Կընթանա և ընթանում ե սոցիալիստական ու-
ղիով, վորովհետեւ ժամանակակից գլուղն ապրում ե
կատարելապես այլ պայմաններում, քան այդ յեղել ե
մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը, վորովհետեւ
կոմմունիստական կուսակցության և խորհրդավին կա-
ռավարության ամրող քաղաքականությունը գլուղում
ուղղված ե տնտեսության սոցիալիստական ձևերն ա-
մեն կերպ խրախուսելուն, կապիտալիստական տես-
դենցիաների դեմ մաքառելուն: Մեզ մոտ հողն ազգայ-
նացված ե և առների լենթակա չե: Խորհրդավին կոո-
պերացիան ոգնում ե չքավորական-միջակալին գլուղին
վերակառուցելու իր տնտեսությունը տեխնիկական ա-
վելի բարձր հիմունքի վրա և նախ ընդհանրացնելով
մատակարարման և սպառման պրոցեսսները՝ սկսում ե
ընդհանրացնել նաև արտադրության պրոցեսսները:
Չքավորական-միջակալին գլուղը կոոպերացիալի միջո-
ցով զոդվում ե պետական սոցիալիստական արդյուն-
աբերության հետ. խորհրդավին պայմաններում կոո-
պերացիան դեպի սոցիալիզմը տանող լայն խճուղի լե

հանդիսանում։ Խորհրդավին իշխանությունն իր հարկացին, վարկալին և առետրական քաղաքականությունն այնպիսի ձևով ե կիրառում, վոր քաղաքականությունը նպաստում և չքավորական-միջակալիին տնտեսությունների աճմանը, ամրապնդմանը և կոլեկտիվացմանը մի կողմից ե կանգնեցնում և զբուղում կուլակալին վերնախավի աճումը մյուս կողմից։

«Վերջին ատրիները կատարված պարզությամբ ցուց են տվել, վոր հողի համայնացման, խորհրդավին իշխանության տնտեսական և ընդհանուր քաղաքականության (ոգնություն զյուղացիության չքավորական և միջակալին մասսաներին, կոռավերացիալի աճում, հողաշինարարություն, վարկ, հարկավին քաղաքականություն և այլն) հիմունքով, ժողովրդական անտեսության ընդհանուր վերելքի պարմաններում, հիմնական զյուղացիական մասսաների տնտեսական վերելք և տեղի ունենում, նույն թվում նաև զյուղացիության չքավորական մասսաների մի խոշոր մասի—ծիազուրկ և սակավացանքությունների կրծատում» (XV կուսկոնֆերենցիալի վորշումը):

Ի՞սարկե, սխալ կլիներ մտածել, վոր մեզ մոտ բոլորին կուլակալին աճում չկատ Ալդտեղ մի փոքր աճում կա, ինչպես կա նաև չքավորական տնտեսությունների վորոշ չափով պրոլետարացում։ Սակայն այժմ մեղ մոտ միանգամայն բարեհաջող ոլայմաններ կան»

«Պարզացնելու տնտեսական և քաղաքական աշխատանքը գյուղի չքավորների շրջանում,

վորոնք միջակ գլուղացիության հետ միասին
հնարավորություն են ստանում կոռպերացիալի
միջոցով մաքառելու աղքատության և քայքայ-
ման դեմ և վճռական պայքար մղելու կուլակու-
թյան շահագործական ձգտումները սահմանափա-
կելու համար»:

Զբավորության ազգեցության անումը:
Զբավորությունը խորհուրդներում.

Գլուղի կուսակցական կազմակերպությունների
թուլությունը և գլուղական չքավորության մեջ նոր
ձևերով, նոր մեթոդներով աշխատելու համար նրանց
անպատճաստ լինելը վորոշակի անդրադարձան արդ
աշխատանքի առաջին քայլերի վրա։ Գլուղական կու-
սակցական կազմակերպությունները նոր մեթոդներով
գլուղական չքավորության մեջ աշխատելուն շատ թե
քիչ ընդհուպ մոտեցան միայն 1926 թ. խորհուրդների
ընտրության կամպանիայի ժամանակը Բնական ե, վոր
սկզբնական շրջանում բավականին թերություններ
կալին։ Կուսակցական կազմակերպություններից վո-
մանք անվերջ զրադիւմ ելին հաշիմներ դուրս բերե-
լով, գլուղի տարրեր միջախավերի տոկոսալին փոխ-
հարաբերությունները պարզելով. ուրիշներն իրանցից
բարձր կանգնած կազմակերպություններից «սպառիչ»
կոնկրետ, ամեն մի մանրամասնությամբ մշակված
ցուցումներ ելին սպասում. յերրորդները վախենալով
կուլակի մեջ պատասխան ռեակցիա առաջ բերելուց՝
չքավորության դռնփակ ժողովներ ելին կազմակերպում,
ներս չթողնելով նույնիսկ այն միջակալին տկտիվին,

վոր աշխատում եր կուսակցական կազմակերպության և խորհրդի շուրջը. չորրորդները չքավորության ժողովների ղեկավարությունը հանձնում ելին խորհրդավին, կոռպերատիվ և այլ հասարակական կազմակերպությունների. հինգերորդները գյուղական չքավորության ժողովները փոխում ելին գյուղացիների ընդհանուր ժողովների և այլն։ Զքավորությունը ժողովի ելին հրավիրում գյուղական կատարողների միջոցով։ Ժողովների որակարգը ծանրացնում ելին ընդհանուր վերացական հարցերով և այլն։

Թերություններ շատ կային, սակայն և այնպես հիմնականում խորհուրդների վերընտրական կամպանիան (1926 թ.) գյուղական չքավորության մեջ հարատև սիստեմատիկ աշխատանք վարելու լայն ծավալման վորպես սկիզբ ծառայեց։

«Զքավորության մեջ կատարած աշխատանքի, մանավանդ խորհուրդների վերջին վերընտրությունների ժամանակ կատարած աշխատանքի փորձն ամբողջովին հաստատեց չքավորության կազմակերպման վերաբերյալ ԿԿ-ի պլենումի սահմանած միջոցների ճիշտ լինելը։ Զքավորության ժողովները և չքավորության խմբերի աշխատանքը կարգի դնելու առանձին-առանձին փորձերը ցուց տվին, թե ինչ ահազին նշանակություն ունի խորհուրդների աշխատացման և լայն անկուսակցական ակտիվ ստեղծելու գործում վարած աշխատանքը։ Ամենուրեք, ուր վոր աշխատանք և կատարվել չքավորության հետ, նկատվում և չքավորության քաղաքական ակտիվության բարձրացում, կուսակցության և խոր-

հուրդների շուրջը չքավորական-միջակալին մասսաների համախմբումն և վերընտրությունների լավագույն հետեանքներ» («ոկտեմբերյան պլենումի վորոշումները կիրառելու կազմըլուրովի վորոշումը»):

1927 թ. խորհուրդների վերընտրության կամպանիան ստուգումն եր այն բանի, թե վորքան են առաջ շարժվել տեղական կուսակցական կազմակերպությունները գյուղացիական չքավորության քաղաքական և տնտեսական կշիռը բարձրացնելու գործում: Վերընտրական կամպանիալի հետեանքը լեղավ խորհուրդներում չքավորության աղղեցության աչքի ընկնող չափով ուժեղանալը: Ոպպոզիցիան ասում եր, թե «կուլակը հնարավորություն ե ստացել մուտք գործելու խորհուրդները», թե «կուլակի քաղաքական և տնտեսական նշանակությունը գյուղում անընդհատ բարձրանում ե, նրա ազգեցությունը գյուղական խորհուրդների վրա և հենց խորհուրդների մեջ աճում ե»: Սկզբում, մեկ-մեկուկես տարի սրանից առաջ, մենք խոսք ու զրույց ելինք լսում այն մասին, թե մեր պետությունն «այնքան ել պրոլետարական չե», թե խորհուրդների աշխուժացման «լոգունգը» «մեր լոգունգը չե» (*Տրոցկի*), թե «խորհրդային իշխանության ստորին հարկերը (գավառակային գործկոմները և գյուղական խորհուրդները--ի. Բ.) հեղեղվում են մանրբուրժուական տարերքով» (Կամենե) և այլն և այլն:

Թվերն ու փաստերը հակառակն են ասում:

Կուլակությունը և այլ անաշխատ տարրերը խորհուրդների վերընտրություններին մասնակցելուց հեռացվել են ընտրական իրավունքներից զրկելու միջա-

յով։ Ազսպես՝ 67.621.453 բնակիչ ունեցող ՌԽՖՍՀ
43.003 գլուղխորհուրդներում 1927 թ. վերընտրական
կամպանիալին ձայնի իրավունքից զուրկ ե լեզել 3,1
տոկոս, մինչ մոտավորապես նույնքան գլուղխորհուրդ-
ներում 1925/26 թ. վերընտրական կամպանիալին
«զրկվածները» կազմելիս են լեզել միայն $1,1^0/0$ ։ Այդ
զրկվածները բաժանվում են հետեւալ կատեգորիանե-
րի. ոգուտ քաղելու նպատակով վարձու աշխատանքի
դիմող անձեր— $10,2^0/0$, անաշխատ լեկամուտով ապրոդ-
ներ— $4,7^0/0$, առևտրականներ և միջնորդներ— $20,2^0/0$,
կրօնական պաշտամունքի սպասավորներ և վարդա-
պետներ— $9,3^0/0$, նախկին վոստիկանության, ժանդար-
մերիալի և նման բաների գործակալներ, վորոնք ընտ-
րական իրավունքներից զրկված են լեզել խորհուրդ-
ների վերընտրությունների վերաբերյալ հրահանգի
15-ըդ հոդվածի համաձայն,— $7,9^0/0$, դատարանով դա-
տապարտվածներ— $4,7^0/0$, խելագարներ և խնամակա-
լության տակ լեղողներ— $2,7^0/0$, ընտանիքի անդամներ
մինչև 18 տարեկան հասակը, վորոնք ապրելիս են լե-
զել ընտրական իրավունքներից զրկվածների միջոց-
ներով— $40,3^0/0$.

Ինչպես գլուղական, այնպես ել գավառակալին
գործկոմների մեծամասնությունը բաղկացած ե գլու-
ղացիներից, ինչպես վոր հարկավոր եր սպասել Բայց
իրանց գուլքալին դրությամբ հվեր են այդ գլուղա-
ցիները։ Մեր տրամադրության տակ են գտնվում
գլուղական խորհուրդների անդամ ընտրվածներին
միասնական գլուղատնտեսական հարկով տուրքադրե-
լու վերաբերյալ տվյալներ։ Այդ տվյալները թեև վերջ-
նական չեն, բայց և այնպես խորհուրդների անդամնե-

Եթ գուղքալին դրության վերաբերմամբ վորոշ հասկացողություն տալիս են: Այդ տվյալներից հետեւյալ ազուսակն ե կազմված:

ԽԸՆԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ	ԳԵՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՎՈՐ	Հ ա բ կ ա ա ս ո ւ ն ե բ					
		1— Ա մ է	2— Ա ռ ո ւ ր	3— Ա ռ ո ւ ր	4— Ա ռ ո ւ ր	5—10 Ա ռ ո ւ ր	10 Ա ռ ո ւ ր
Գյուղխորհուրդներ . . .	21 ₈	25 ₃	21 ₅	19 ₀	7 ₁	4 ₇	
Գյուղխորհուրդների նախագահներ	19 ₇	22 ₀	25 ₃	21 ₂	7 ₄	4 ₄	
Գյուղխորհուրդների վերստուգիչ հանձնաժողովն.	18 ₁	21 ₃	23 ₂	29 ₁	9 ₁	6 ₂	
Խորհուրդների գավառակային համագումարներ	18 ₁	16 ₁	24 ₅	25 ₃	11 ₀	5 ₀	
Գավառակային (վոլոստնե) գործկոմներ	20 ₀	14 ₁	24 ₃	25 ₄	10 ₀	4 ₇	
Գավառակային գործկոմների նախագահներ . . .	25 ₂	18 ₆	25 ₁	25 ₀	8 ₀	3 ₁	
Գավառակային գործկոմների վերստուգիչ հանձնաժողովներ	17 ₁	4 ₂	25 ₃	27 ₄	11 ₂	4 ₈	

Այս աղյուսակը բացատրությունների կարելք չունի. թվերն իրանք իրանց համար վկայում են¹:

1927 թ. գյուղխորհուրդների վերընտրությունները բանվորների աճման ավելացում տվին գյուղխոր-

¹ Այս աղյուսակում բերած թվերը և մյուսները վերցված են «Ռեժիմ Խորհուրդների 1927 թ. ընտրությունների հանրագումարները» տեղեկագրից: Համեմունքների կենտրոնական ընտրական հանձնաժողովի հրատարակություն, Մոսկվա, 1927 թ.:

հուրդներում, խորհուրդների գավառակալին համագումարներում, գավառակալին գործկոմիներում, այլև գլուղիուրդների և գավառակալին գործկոմիների նախագահների մեջ։ Այսպես, 1925/26 թ. ՌԽՖՍՀ գլուղիուրդներում բանվորները (ներառյալ գլուղատնտեսական բանվորներին և բատրակներին) $2,9^0/0$ ելին, 1927 թ. $4,3^0/0$, գլուղիուրդների նախագահներից բանվոր ելին 1925/26 թ. $2,2^0/0$, 1927 թ. $3,0^0/0$. խորհուրդների գավառակալին համագումարներում բանվորները 1925/26 թ. $4,6^0/0$ ելին, 1927 թ.— $6,8^0/0$. գավառակալին գործկոմիներում բանվորները 1925/26 թ. $6,9^0/0$ ելին, 1927 թ.— $9,0^0/0$. գավառակալին գործկոմների նախագահներից բանվորներ ելին 1925/26 թ. $8,4^0/0$, 1927 թ.— $10,0^0/0$.

Գլուղական խորհուրդներում կոմմունիստների և կոմիերիտականների քանակը մեծանում եւ։ Միքանի շրջաններում կոմմունիստների քանակն աչքի ընկնող տոկոսի լի հասնում։ Այսպես, որինակ, Ռւրալի շրջանում և Միքիրում գավառակալին գործկոմների նախագահները համարյա գլխովին կոմմունիստներ են (Ռւրալ— $96,7^0/0$, Միքիր— $99,2^0/0$)։ Հյուսիսալին կովկասում գլուղիուրդների նախագահների համարյա կեսը ($45,7^0/0$) կոմմունիստներ են։

Փաստերն այս են։ Մրանից հետո միթե կարելի լի լրջորեն պնդել թե կուլակի առաջ մենք բաց ինք արել խորհուրդների գուները, թե չքավորությունը սրբված ե խորհուրդներից, թե խորհուրդներում ուժեղանում ե կուլակության ազդեցությունը։

Մենք պետք ե ավելի ուժեղացնենք մեր ուշադրությունը դեպի խորհուրդները, պետք ե աշխատենք

ամրացնել բատրակության և գյուղացիական չքավու-
րության ազդեցությունը՝ խորհուրդներում, կոռպերա-
տիվների վարչություններում և այլ կազմակերպու-
թյուններում։ Անհրաժեշտ և այդ աշխատանքը դնել
այնպես, վորպիսզի հենց բատրակներից և չքավորնե-
րից դարձնվի անկուսակցական ակտիվը։ Ճիշտ չեն
վարվում այն ընկերները, վորոնք աշխատում են գյու-
ղական չքավորության և բատրակության կազմակերպ-
ման աշխատանքը հակադրել անկուսակցական գյու-
ղացիական ակտիվի իերեսան բերելու և դաստիարակե-
լու աշխատանքին։ Գյուղացիական չքավորության
կազմակերպման աշխատանքը կուսակցական ամրող
աշխատանքի որգանական մասը կազմելով՝ ըստ գոր-
ծի ելության նաև անկուսակցական գյուղացիական
ակտիվի վերաբերյալ աշխատանքի մի մասն և (և մեծ
մասը)։

Գյուղացիական քավորության ծովովները.

Տեղական կուսակցական կազմակերպություններն արդեն գլուղացիական չքավորության կազմակերպման աշխատանքում վորոշ չափով փորձ են ձեռք բերել։ Տեղերի գործնականը ցույց ե տվել, վոր չքավորության մեջ կատարվող աշխատանքի կազմակերպչական ձևերը, վոր գծել ե կենտրոնական կոմիտեի հոկտեմբերյան պլենումը և կոնկրետացվել են ԿԿ-ի կազմբարույրի հունիսյան (1926 թ.) վորոշումով, լիովին կենտական են։ Չքավորության մեջ կատարվող աշխատանքի ամենաստուգված ձեռքից մեկն ե չքավորության ժողովը, վոր հրավիրվում ե խորհուրդներին՝ կողմէ

պերատիմսերի վարչությունների, գլուղացիական կոմիտեների վերընտրություններից առաջ և տեղական խոռշոր հարցերի (հողաշինարարություն, բազմացանքսի անցնել, գլուղական կարիքների համար՝ ինքնատուրքադրում և այլն) դնելուց առաջ Ընկ. Ստ. Կոսսիորը կուսակցության XV Համագումարում արած իր զեկուցման մեջ ալսպիսի տվյալներ և բերում չքավորության ժողովների մասին. 10 նահանգներում և շրջաններում 1925/26 թվականին չքավորության 1.500 ժողովներ են տեղի ունեցել: Այժմ այդ նույն նահանգներում և շրջաններում գումարված ժողովները հասել են 18,000-ի: Չքավորության ժողովները հրավիրում և կայանալ ետավիս տեղական կուսակցական կազմակերպությունների միջոցով: Կուսակցականներն ու կոմիտականները չքավորության իմաց տալով ժողովի մասին՝ կարող են նրան նախորոք ծանոթացնել այն հարցերին, վորոնք դրված են որակարգում, չքավորին նախապատրաստել դրանց քննությանը: Չքավորական ժողովները լերըք գաղտնիք չպետք ե դարձնել: Չքավորության ժողովներին անհրաժեշտ ե հրավիրել միջակալին ակտիվին: Ժողովներում չի կարելի իշարը գործադրել ընդհանուր, վերացական հարցեր՝ չքավորության ժողովը քաղգրագիտության դպրոցի վերածելով: Անհրաժեշտ ե դնել տեղական նշանակություն ունեցող հարցեր, կոնկրետ հարցեր, վորոնք անմիջապես շոշափում

ին չքավորությունը, իհարկի, սրանից չի կարելի այնու
պիսի լեզրակացություն դուրս բերել, թի չքավորու-
թյունը չի հետաքրքրվում և ընդհանրապես չպիտի հե-
տաքրքրվի այն բոլորով, ինչ վոր տեղի լի ունենում
իր ցանկապատից դուրս: Տեղական կոնկրետ հարցի
մասին խոսելիս, քննության առնելով այն, միշտ կա-
րելի լի և պետք ե մատնանշել, թե այդ հարցին ինչ-
պես և նալում մեր կուսակցությունը, ինչպես և լուծ-
վում այն նահանգի մասշտարով, ամբողջ լեռկրի
մասշտարով: Ժողով հրավիրելու ու վարելը կուսակցա-
կան կազմակերպության ձեռքով, ժողովակայից (ամբոխա-
վարությունից) կտրականապես խուսափելը, անիրա-
գործելի խոստումներից հրաժարվելը, հարցերն այնպես
դնելը և լուծելը, վոր չքավորության քաղաքական և
տնտեսական կշիռն աճելով և ամրապնդվելով հանդերձ՝
ամրանա միությունը միջակ գլուղացու հետ,—ահա
այն հիմնականը, վոր անհրաժեշտ ե հիշել չքավորու-
թյան ժողովները հրավիրելիս և կայացնելիս:

Կուսակցության վորոշ բջիջներ վոչ մի կերպ չեն
կարողանում չքավորության մեջ աշխատանքը ծավա-
լելու առիթ գտնել: Բայց ալդպիսի առիթներ կան ինչ-
քան վոր կուզես: Վերցնենք թեկուզ ինքնատուրքա-
դրումների հարցը: Հողային ընկերությունն (օբщество)
ինքնահարկադրումն և կատարում շատ բազմազան
կարիքների համար (հովիվ վարձել, կամուրջը նորոգել,
գլուղը պահպանել, հրդեհաշեջալին սրահ պահել, ընդ-
հանուր ժողովների համար բնակարան վարձել, զանա-
զան դատական և հասարակական այլ գործեր վարելու

համար ծախսեր կատարել և այլն), վորովհետև հողալին ընկերության մեջ բոլոր հարցերի լուծման մեջ մասնակցություն են ունենում և կուլակները, և ընդհանրապես սահմանադրությամբ ընտրողական իրավունքներից բոլոր զրկվածները, միշտ և ամենուրեք հողալին ընկերությունների ժողովներում ղեկավարող դեր խաղալով, ուստի և գլուղական չքավորությունը և սակավազոր միջակությունը ճնշման ե լենթարկվում:

Ահա ինքնատուրքադրման վերաբերյալ տվյալներ: Այն գլուղացիական տնտեսությունները, վորոնք մի տնտեսության համար 4 ոռուրլի 34 կոպեկ գլուղատնտեսական հարկ են վճարում, ինքնատուրքադրմամբ զանազան տուրքեր են վճարում 5 ոռուրլի 38 կոպեկ. 10 ոռուրլի 11 կոպեկ գլուղատնտեսական հարկ տվողներն ինքնատուրքադրմամբ վճարում են 7 ոռուրլի 20 կոպեկ. 20 ոռուրլի 27 կոպեկ գլուղատնտեսական հարկ վճարողներն ինքնատուրքադրմամբ վճարում են 4 ոռուրլի 66 կոպեկ¹: Աղաղակող ալլանդակություն: Դա նրանից ե լինում, վոր ինքնատուրքադրման այս կամ այն տուրքի բաշխումը տեղի լե ունենում սովորաբար «տների վրա» (որինակ՝ փոխադրության միջոցների համար ամեն մի ծխից 50 կոպեկ)՝ անկախ տնտեսության կարողությունից և արդյունավետությունից: Այսպիսով ինքնատուրքադրման ե լենթարկվում նաև գլուղատնտեսական տուրքից ազատված չքավորությունը: Հողալին ընկերությունը խիստ միջոցների լե դիմում ինքնատուրքադրման վերաբերյալ զանազան տուրքեր չվճարողների դեմ: Չվճարողների վրա ազդելու միջոցների մեջ մենք տեսել ենք վորոշումներ զրկելու

¹ «Советское строительство», № 4 (9), 92 №ջ. 1927 թ., Մոսկա:

հողաբաժնից, մարզագետիններ հարելու իրավունքից, դրամական տուղանքի լենթարկելու, անասուններին հասարակական արոտատեղինները տանելու իրավունքից զրկելու, տեղական նշանակություն ունեցող անտառների փալտից ոգտվելու իրավունքից զրկելու և այլն:

Այսպիսով ինքնատուրքադրման գործնականն ի դերեւ և հանում կուսակցության քաղաքականությունը գլուղական չքավորությունը հարկերից ազատելու գործում, նրան հարկի վերաբերմամբ այս կամ այն արտոնությունը տալու գործում¹:

Այժմ մենք այն վճռական ուղղությունն ենք բըռնում, վոր գլուղական խորհուրդները հետզհետե ընդգրկեն հողալին ընկերության ղեկավարությունը: Կուսակցության կենտրոնական կոմիտեն իր հրահանգչական ցուցումների մեջ հողաշինարարության և հողոգտագործման վերաբերյալ միութենական որենք մշակելու համար առաջարկում ե որենքի մեջ մշակել գլուղիորհուրդների և հողալին ընկերությունների փոխհարաբերության հարցը, հասարակության ընդհանուր ժողովներին գլուղի պրոլետարական և կիսապրոլետարական տարրերի վճռական ձայնի իրավունքով մասնակցելն

¹ Յերբ այս գիրքն արդեն շարված եր, հրատարակվեցին ՌԽՖՍՀ և ՈւԽՍՀ կառավարությունների վորոշումները գյուղական ազգաբնակության ինքնատուրքադրման վերաբերյալ Վորոշման մեջ դասակարգային սկզբունքն ե կիրառվում: Հենց այդ վորոշումները կիրառելիս պետք ե անպատճառ կազմակերպել չքավորությունը, վորոշման կուսակցությունն աշխատելու յե իդերև հանել վորոշումները:

Ի. Բ.

Նման վորոշումներ են կայացրել նաև ԱՍՖԽՀ և ՀՍԽՀ կռավարությունները:

ապահովել (մինչև այժմ գործնականում այնպես ե լիդել, վոր հովիմները, բատրակները, դարբինները և այլն ժողովներին ձայնի իրավունքից չեն ոգտվել և հողալին ընկերությունների ընդհանուր ժողովներում ծեծվող հարցերի լուծման մեջ վոչ մի մասնակցություն չեն ունեցել և հողալին ընկերություններում (ժողովներում) ձայնի իրավունքից զրկել այն բոլորին, ովքեր ձայնի իրավունքից զրկվում են խորհուրդների ընտրություններին։ Այս հարցի վերաբերմամբ կուսակցության XV համագումարը վորոշ վորոշում ե կալացրել Համագումարը հանձնարարել ե Կենտրոնական Կոմիտեին

«մշակել խորհուրդների և հողալին ընկերությունների փոխհարաբերությունների բարելավման հարցն այնպես, վոր խորհուրդների ղեկավարող գերն ապահովվի, և հողալին ընկերություններում (ժողովներում) ձայնի իրավունքից զուրկ լինեն խորհուրդների ընտրողների ցուցակներից հանվածները»։

Խորհուրդների և հողալին ընկերությունների միջև այնպիսի փոխհարաբերություններ հաստատելու հարցը, վոր ղեկավարող գերն անբաժանելիորեն խորհուրդների ձեռքում գտնվի, — միմիալն համապատասխան ղեկրետ հրատարակելով չի լուծվիլ։ Այստեղ հարկ կլինի մեծ աշխատանք կատարել իհարկե, այս աշխատանքը մասամբ հեշտացնում ե դրույդական հասարակության ժողովներում կուլակներին և հակապրոլետարական, հակախորհրդալին այլ տարրերին ձայնի իրավունքից զրկելը, բայց միայն հեշտացնում եւ իսկ հիմնականը — խորհուրդների աշխատանքի ուժեղացումն ե, լայն չքավորական միջակալին մասսաների աչքում

Նրանց հեղինակության ամբացումն ե, խորհուրդներում, նրա սեկցիաներում և հանձնաժողովներում առողջա ակտիվ աշխատանք կատարելու համար վորքան կարելի յե շատ ընտրողներ ձեռք բերելն ե, չքավորության մեջ կատարվող աշխատանքի սաստկացումն եւ:

Հողալին ընկերությունների կազմի մեջ աեղի ունեցող գասակարգալին պալքարը տեղական կուսակցական կազմակերպությունները պետք ե առավելագույն չափով ժգտագործեն գլուղական չքավորության և բատրակական կազմակերպման և միացման համար (մինչև աժմ աշխատանքի այդ մասի վրա մեզ մոտ բավականաչափ ուշադրություն չեն դարձրել, ինթե ավելին չասենք): Ինչու տեղական կուսակցական կազմակերպությունը չկազմակերպի չքավորությունն՝ որինակի համար՝ ինքնատուրքագրման հարցերի միջոցով։ Շատ շահեկան աշխատանք եւ նախորոք հրավիրել չքավորության ժողով միջակալին ակտիվի հետ միատեղ։ Այդ ժողովում մանրամասն մշակել ինքնատուրքագրման նոր կարգը (որինակ՝ վճարվող գլուղատնտեսական հարկի վորոշ տոկոս նշանակել)՝ ինքնատուրքագրումից չքավորությունը կատարելապես ազատելով։ Իսկ ապա այդ առաջարկներով դուրս գալ հողալին ընկերության ժողովին։ Միջակների մեծ մասն այդ հարցում անպայման կպաշտպանի չքավորությունը, չքավորության, բատրակության և միջակների մեծամասնության միացած ճակատով ժողովի դուրս գալու հետևանքը կլինի կուլակին հաղթելը, պրոլետարական դասակարգալին գծի ուղղելը։

Հողալին ընկերության մեջ միայն ինքնատուրքագրման հարցերը չեն լուծվում։ Ահա, որինակի հա-

մար, գլուղթղթակիցների լերկու թղթակցութլուններ, վորոնք տպված են «Սելսկայա Պրավդա» լրագրում։ Առաջին թղթակցութլան մեջ պատմվում ե, վոր «Նովոսիբիրլան շրջանի Կոչենեսկի ռայոնի Յեպիփանովսկ շենում ազատ հողամասեր կան։ Ակստեղ թե կարգին խոտհարք ե լինում և թե կարելի է հարոս (խամ, հանգստացող վարելահող, ցել) պատրաստել։ Այս հողերը հողալին ընկերութլան կարգադրութլան տակ են։ Հողը կարգին չի բաժանվում։ Ամեն տարի լավ կտորներն ընկնում են միշտ միենուն մարդկանց—ամենից հարուստների ձեռը։ Այս կամ այն չքավորը դրներ ե մաշում—մի կտոր ե խնդրում խոտհարքի կամ հարոսի համար։ Նա բաժին չունի։ Բայց հաստքակ ունեցողներն ունեն։

Նամակի վերջում հեղինակն արդ դրութլունից դուրս գալու լելք ե առաջարկում - չքավորների ժողովներ։

Յերկրորդ թղթակցութլան մեջ պատմված ե այն մասին, թե ինչպես չքավորութլունը կուսակցութլան տեղական բջջի ղեկավարութլամբ պաշտպանեց իր շահերը խոտհարքները վերաբաժանելիս։

«Հարկավոր եր մարդագետին տալ չքավորութլան մի մասին և ունեոր գլուղացիների— այսպես կոչվող «զարեչնիկների» մի մասին։ Բայց մարդագետին ել կա, մարդագետին ել. կան չոր հովիտներ, կան հարմար տեղեր և կան մանր հովիտներ, վորտեղ խոտը լավ ե, բայց սալլով գնալը դժվար ե։ Զքավորութլան և «զարեչնիկների» մեջ կոիվ ընկալ. «զարեչնիկներից մինը նախ-

կին տանուտեր եր, մլուսներն առևտրականներ: Զքավորությունը գտնում եր, վոր ամենահարմար և խոտհարքի համար թեթև տեղերը պետք ե տալ թույլ տնտեսություններին: «Զարեջնիկները» պահանջում ելին վիճակ հանել. —ում ինչ բաժին ընկնի, նրան ել տիրանա... բջիջը ժողովեց չքավորներին: Վրդովվեցին «զարեջնիկները» և նույնպես շնորհ բերին ժողովը: Բայց բջջի պաշտպանությունն զգալով՝ չքավորներն իրանց շահերը պաշտպանելու համար համարձակ դուրս լեկան: Նրանք ասում ելին, ուժեղ տնտեսության համար հեշտ բան ե անհարմար խոտհարքից գլուխ դուրս բերել, բայց լեթե վիճակն իրանց ընկնի, կմաս վոր միանգամից իրանց տավարը ծախսին: միենույնն ե, ուժները չի պատիլ: Բջջի ոգնությամբ չքավորությունն իր ասածի վրա պինդ կանգնած մնաց և ավելի հարմար խոտհարքներն իր վրա հաստատեց:

Քանի վոր գյուղական խորհուրդները դեռ չեն կարողացել ամբողջովին ընդգրկել աշխատանքի բոլոր ասպարեզները, քանի վոր գյուղխորհուրդների աշխատանքը դեռ նյութական ամուր բազա (գյուղական ինքնուրուցն բյուջե) չունի, —ալստեղ, հողալին ընկերության մեջ են լուծվում և դեռ միառժամանակ լուծվելու լեն տնտեսական բնույթ ունեցող մի շարք հարցեր, վորոնց ուղիղ լուծումով (բատրակության, գյուղական չքավորության և միջակության շահերի պաշտպանության տեսակետից) խիստ շահագրգուլած ե գյուղացիության հիմնական մասսան: Յեվ գյուղական կուսակցական կազմակերպությունը այս բոլոր հարցերն վ

սղետք և կազմակերպի չքավորությունն ու բատրակությունը, իսկ իրանց շահերը զիտակցող և ալդ շահերը կազմակերպչորեն պաշտպանել սովորած չքավորությունն ու բատրակությունն իրանց լեռներից կտանեն միջակներին:

Զբավորության խմբերը: Գյուղում կատարվող աժխատանքի բաժինները.

Տեղական կուսակցական կազմակերպությունների ձեռքով հրավիրվող և կայացվող չքավորական ժողովներից հետո գյուղական չքավորության կազմակերպման լերկրորդ ձեն են հանդիսանում չքավորության խմբերը խորհուրդներում, կոոպերատիվների վարչություններում, գյուղացիական կոմիտեներում և այլն։ Մակայն լեթե գյուղացիական չքավորության ժողովները տեղերում վորոշ չափով արդեն պատվաստվել են, մյուս կողմից չքավորության խմբերի կազմակերպման և նրանցում աշխատանքը կարգի դնելու գործն այնքան ել կարգին չե։ Չնայած կե-ի կազմը լուրովի պարզ վորոշումին չքավորության խմբերի մասին, վոմանք մինչև վերջին ժամանակներս պարզ գաղափար չունելին վորպես ալդ խմբերի նպատակների մասին, այնպես ել գրանց կազմակերպչական հարցի վերաբերաւ՝ «Դերենսսկի կոմմունիստ» («Գյուղական կոմմունիստ») թերթի № 17—18-ում ընկ. Մ. Ռավենսկին դրել ե ալս հարցը—«Հարկավոր և արդյոք գյուղում չքավորության միասնական խումբ ունենալ»։

«Չքավորության խմբերի կազմակերպումներն են սկսում ամեն տեղ, — գրում ե նա։ — Ընտրու-

թյուններից հետո խմբի կաղմակերպչական ժողով են հրավիրում, խումբը կազմում, բայց գրանից դենք՝ վորպես որենք՝ չեն գնում»:

Այս լերենուկթի պատճառը հեղինակի կարծիքով կալանում ե նրանում, վոր խմբերը կազմվում են խորհուրդներում, կոռպերացիալում, գլուղկոմիներում: Խումբը փոքրիկ ե, ուստի և նաև

«չի կարող վոչ հարկավոր չափով հեղինակավոր լինել հենց չքավորության համար, վոչ բավականաչափ ազդեցիկ միավոր լինել»...

Յեվ հեղինակն առաջարկում ե չքավորության միասնական խումբ ստեղծել գյուղում: Չքավորության խումբը պետք ե կազմվի կուսակցության բջջին կից: Նրա մեջ ե մտնում չքավորական ակտիվը:

«Այդպիսի խմբի աշխատանքի բովանդակություն պետք ե դառնան այս կամ այն կերպ չքավորության շահերը շոշափող զանազան մարմինների աշխատանքի բոլոր հարցերը»:

Ի՞արկե, ընկ. Ուսկենսկին իրավացի չե: Կուսակցական բջջին կից չքավորական միասնական խումբ կազմել—դա նվազագույն ընդդիմադրության գիծն ե նախ, և լերկորդ՝ դա փորձ ե խորհրդի, կոռպերատիվի, գյուղկոմի աշխատանքը փոխարինել չքավորության խմբի աշխատանքով:

Ընկ. Գ. Սալնիկովը դիտելով կուբանի ստանիցաների կոմմունիստների տրամադրությունները՝ լեկել ե այն լեզրակացության, վոր տեղական միքանի կոմմունիստներ հոգուտ միասնական խմբի չեն արտահայտվում այն պատճառով, վոր

«չքավորության խմբի համար կատարվող աշ-

խատանքն անկասկած բարդացնում և վորոշ չափով ստանիցալի հասարակական կյանքի զեկավարումը՝ բջիջներից վորոշ լրացուցիչ ջանքեր պահանջելով։ Ահա հենց ալդ ել լերբեմն վախեցնում և բջիջներին, այսինքն գոլություն ունի այն վախը, թե խմբերի աշխատանքը չեն կարող ընդգրկել իրենց ղեկավարությամբ¹։

Ի՞նչ ե սա, լեթե վոչ նվազագույն ընդդիմադրության գիծ։

Ընկ. Ուվենսկու հավաստիացումը, թե քանակով փոքր խումբը հեղինակավոր, ազգեցիկ և այլն չի լինի, վոչ մի քննադատության չի դիմանում։ Այդ վժրտեղ, ով և լեռը և ապացուցել, թե վորքան մեծ լինի կոլեկտիվը, այնքան նա լավ կլինի գործնական աշխատանքի մեջ։ Յերբ հարկավոր ե ժողովել գլուղական չքավորության ամբողջ մասսան, կուսակցական բջիջը չքավորության ժողով և հրավիրում, ալդ ժողովում դնում են բրուրուում կամ բջջի ժողովում մշակված հարցերը։ Խալ գլուղական չքավորության շահերի պաշտպանության խորհրդում, կոռպերատիվի վարչության մեջ, իրենց առորյա գործնական աշխատանքում ալդ աշխատանքին ուղղություն տալ այնպիս, վորչքավորության շահերը լիովին հաշվի առնվեն, աշխատել, վոր խորհրդի, կոռպերատիվի աշխատանքի հետեանքը լինի գլուղի չքավորական խավի քաղաքականապես և տնտեսապես ամրապնդումը,—այս բոլորը կարելի լե և պետք ե կատարել միայն խորհրդին, կոռպերատիվի վարչությանը, գլուղկոմին կից չքավորական խմբում։

¹ «Красное знамя» 1927 №. 30 հոկտ.

Բջջին կից չքավորական խումբ, չքավորության միանական խումբ ունենալը, իհարկե, մեծ թեթևություն ե բջջի աշխատանքի մեջ, առանց այն ել ծալրահեղորեն ծանրաբեռնված գլուղական կոմմունիստների աշխատանքի մեջ, բայց այդ թեթևությունը լոկ ձեւական, արտաքին ե: Բջջին կից միանական խումբ ունենալն անպալման մի քայլ ե խումբը չքավորական կոմիտեի փոխարկելու (թող ձեռվ չինի, այլ ելությամբ), դա խորհրդի, կոռպերատիվի վարչության աշխատանքի թուլացումն ե, դա բատրակալին և չքավորական ակտիվի գործնական հողի վրա աճեցնելու դանդաղացում ե: Այդ քաղաքական մոմենտները, վորոնք բղխում են անճիշտ կազմակերպումից, պետք ե ծածկեն ավելի հարուր, քան տաս մարդուց բաղկացած խմբի ղեկավարության, ավելի մեծ հեղինակության թեթևացման մասին դատողությունները:

Վոր միանական խումբ ստեղծելու առաջադրությունը բղխում ե չքավորական խումբը «ձեռքի տակ» ունենալու ցանկությունից, իր աշխատանքը պարզացնելու ցանկությունից,—դա ցուց ե տալիս նաև հետեւյալը: Այս հարցն արծարծվում ե չքավորության խըմբեր կազմակերպելու ամենաառաջին քայլերում, արծարծվում ե այն ժամանակ, յերբ մենք դեռ նոր ենք ընդհուպ մոտեցել այդ աշխատանքին (ինքն Ոսկենսկին գրում ե,—«ամենուրեք սկսում են խմբեր կազմակերպելու գործը...»), յերբ կազմակերպման այդ ձեռ դեռ ինչպես հարկն ե հավանություն չի ստացած, յերբ վերջապես խմբերի կազմակերպման հարցերն անհրաժեշտ չափով պարզ չեն վոչ միայն տեղական շատ ստորին աշխատակիցների համար, այլև ավելի բարձր կանգ-

նածներից վոմանց համար։ Տեղերում շփոթել են չքա-
վորության խումբը չքավորության ժողովի հետ, կոլ-
լեկարիվի կամ հողը համայնորեն մշակող ընկերության
հետ։ Բայց մենք միտք չունենք անեկդոտալին դեպ-
քեր պատմելու մեր կուսակցական այս կամ այն ստո-
րին կազմակերպությունների աշխատանքի գործնակա-
նից, վորովհետեւ զիտենք նրանց աշխատանքի պար-
մանները, գիտենք մի շարք գլուղական բջիջներում
աշխատող ընկերների քաղաքական և ընդհանուր քա-
ղաքակրթական ուսառաստության մակարդակը։ Յեթե
նրանց համար լիովին պարզ չի լեզել այն հարցը, թե
ինչպես և կազմվում չքավորության խումբը, ինչ տար-
բերություն կա չքավորության ժողովի և չքավորու-
թյան խմբի մեջ, գործնականապես ինչպես կարգավո-
րել չքավորության խմբերի աշխատանքը զանազան
կազմակերպությունների (գլուղխորհրդի, կոոպերատի-
վի վարչության և այլն) կից, — ու լիովին հասկանալի
յեւ և ներելի։ Վերցնենք միքիչ բարձրը։ Ահա «Բակին-
սկի Ռաբոչի» («Բազվի Բանվոր») լրագիրը։ Այն-
տեղ տպված եւ «Չքավորության խմբերը գլուղում» հոդ-
վածը։ Մատնանշելով գլուղական չքավորություն կազ-
մակերպելու միջոցով միջակին նվաճելու անհրաժեշ-
տությունը՝ հեղինակը գրում եւ

«Սրա հետ կապված՝ կուսակցության առաջ
ծառացել ե այս խնդիրը. սկսել կուսակցության
բջիջների շուրջը գլուղում ալսպես կոչվող չքավո-
րության խմբեր կազմակերպել վորպես խորհուրդ-
ների աշխատացման գործում, իր կենսական շա-
հերի իրականացման մեջ, խորհուրդների, կոո-
պերացիալի, գլուղկոմի և այլն աշխատանքում

իր ակտիվության բարձրացման մեջ չքավորության մասնակցության ավելի ճկուն ձև, և արդպիսով ապահովել չքավորության ազդեցությունն ու ղեկավարող դերը տեղական խորհրդավիճ և հասարակական կազմակերպությունների աշխատանքում»:

Պմրգ ե արդիոք, թե ինչ ե ուզում ասել հեղինակը. Ընթերցողն իմանում ե, թե ուր և ինչպես ե կազմակերպվում չքավորության խումբը. Դուրս ե գալիս այնպես, վորպես թե չքավորության խմբերը կազմակերպվում են կուսակցության բջիջներին կից («կուսակցության բջիջների շուրջը գլուղում չքավորության խմբեր կազմակերպել»...): Կամ գուցե՛ հեղինակն ուղղակի պարզ չի արտահայտվել - «շուրջը» պետք ե հասկանալ այնպես, վորպես թե հենց կուսակցությունն ե կազմակերպում չքավորության ալդ խմբերը. Լսեցեք շարունակությունը: Հեղինակը բացատրում ե, թե ինչպես պետք ե դնել չքավորության խմբի աշխատանքը, ինչով պետք ե զբաղվի այս խումբը:

«Չքավորության խմբի աշխատանքը պետք ե կրի պարբերական բնույթ»... «առանձին (?) կազմակերպություն չպետք ե դառնա»... «չպետք ե ունենա իր բանվորական ապագարատը և պետք ե գտնվի ամբողջովին կուսակցության անմիջական ղեկավարության տակ»... «չքավորության խմբերն իրանց նիստերում պետք ե նախորոք քննության լենթարկեն այն հարցերը, վոր դըրվելու լեն խորհուրդների, ժողովների, կոոպերացիալի և հասարակական այլ կազմակերպությունների նիստին, միայն այն դեպում, իերբ տվյալ

հարցի վերաբերմամբ անհրաժեշտ ե ունենալ
չքավորների միասնական կարծիքը»...

Յեվ ապա միջակ գլուղացիների հետ աշխատելու
կապի մասին («չքավորության խմբերի աշխատանք
պատկերացնել չենք կարող առանց միջակի մասնա-
կցության և ոգնության»), ուրիշ հարցերի մասին, բայց
ընթերցողն այնպես ել չիմացավ, թե վորտեղ և ինչ-
պես են կազմակերպվում չքավորության խմբերը:

«Բակինսկի Ռաբոչի»-ն դեռ վոչինչ, վերցնենք
«Կոռպակերատիվայա Ժիզն» («Կոռպակերատիվային կյանք»)՝
թերթը: «Չքավորին ու բատրակին կոռպակերացիան
մտցնել» հոդվածն եւ: Հոդվածում պատմվում ե բատ-
րակների և գլուղական չքավորության կոռպակերացման
ասպարիզում մեր ունեցած հաջողությունների մասին
և ուղղակի կոռպակերացիայի մեջ չքավորության հետ
աշխատելու ուղիներ են գծվում: Տեսեք՝ այստեղ ինչեր
են առաջարկվում.

«Մենք դեռ նոր սկսում ենք շոշափել չքավո-
րության խմբական կազմակերպման մեթոդները:
Առաջին փորձերը բարեհաջող հետևանքներ են
տվել: Տեղերում չքավորական ժողովները տեղի
լին ունեցել գլխավորապես նախքան վերընտրու-
թիունները: Այս ու այնտեղ ստորին կոռպակերա-
տիվների վարչական մարմինների վերընտրու-
թիուններին այսպիսի՝ ոժանդակ միությունները
(?—ի. Բ.) նպաստել են ընտրված անձերի սո-
ցիալական կազմի բարելավումին: Չքավորության
և բատրակության ժամանակավոր ոժանդակ խըմ-
բալին միություններ ստեղծելը խիստ կերպով
թելադրում ե ինքը կյանքը»...

Պարզ և արդիոք: — Զեմ կարծում: Բոլորովին ընդհակառակն Սա ինչ բան և — «Հքավորության ոժանդակ միություններ» ընդհանրապես և «Հքավորության ժամանակավոր ոժանդակ խմբային միություններ» մասնավորապես: Յեթե դա կոռապերատիվների վարչություններում գտնվող չքավորական խմբերն են, հենց այդպես ել պիտք եր ասել, ասել նույնպես վորոշ և պարզ, ինչպես դա ասված և կե-ի կազմբաժնի հունիսյան (1926 թ.) վորոշումի մեջ («Հքավորության խմբերը կարող են կազմվել խորհուրդներում, կոռապերացիալի վարչություններում և փոխոգկոմների իրանց անդամների—բատրակների, չքավորների կողմէց»...): Հեղինակն ուզում է իրանից մի բան հնարել, մի ինչ-վոր մաղալու բան: Յեվ փոխանակ պարզիպարզո պատմելու, թե գործնականապես ինչպես իրականացնել կուսակցության վորոշ հրահանգներ, նա տեղական կուսակցական կազմակերպություններին առաջարկում է «իրանց վրա վերցնել նախաձեռնությունը և իրեւ փորձ միքանի շրջաններում ստեղծել չքավորության և բատրակության խմբերի մշտական միություններ կոռապերացիալի աշխատանքի հիմունքով»...

Կուսակցական բարձր մարմինների միանգամայն պարզ վորոշումների ալսպիսի անհասկացողության որինակները մենք կարող ենք իմացնել բազմապատկելու բայց բերածից ել պարզ ե, վոր մենք ալնքան ել բավականաչափ ուշադրություն չենք դարձրել ալս հարցի վրա, վոր գլուղական չքավորության մեջ աշխատելու նոր ձևեր վորոնելու փոխարեն մեզ անհրաժեշտ ե ավելի հաստատուն կերպով դիմել չքավորության խմբե-

ըի կազմակերպմանը, նրանց գործնական աշխատանքը կարգի գցելուն: Մի շարք շրջաններում արդեն չքավորության խմբեր են կազմակերպված (վորպես գյուղխորհուրդներում, այնպես ել կոռպերատիվների վարչություններում և գյուղկոմիններում), և նրանց աշխատանքըն արդեն դրական հետեանքներ ե տվել: Ընկ. Արբուղովը հետեւալ փաստերն ե բերում չքավորության խմբերի գործունելությունից: Կուտկովի գյուղատնտեսական վարկալին ընկերության մեջ (Մոսկվայի նահանգում) չքավորության խմբերի նախաձեռնությամբ կրճատված են վարչական ապագարատի ծախքերը, կանոնավորված ե փոխատվությունների բաշխումը չքավորությունը կոռպերացնելու մեջ աշխատանք ե կատարված: Կաշիրի գավառի Մոլցինսկի կոռպերատիվին կից խմբի անդամները 20 չքավորական տնտեսություններ են մտցրել կոռպերացիալի մեջ: Մծոլենսկի նահանգի Խմարսկի գավառակում կոռպերատիվին կից չքավորության խումբը գորոշում ե կալացրել կոռպերատիվի վարչությունը գործից հեռացնելու վատնումների և փոխադրությունն ունենորներին հանձնելու համար. բջջի ոգնությամբ այդ գորոշումը կիրառվել ե, և նոր վարչության կազմի մեջ են մտել չքավորներ ու միջակներ: Պենզայի նահանգի Մրցինովսկի խումբը ռահվիրա լե հանդիսանում գյուղում հողաշինարարության կիրառման մեջ. այնտեղ պուածին անգամ նրա նախաձեռնությամբ են սկսել խոտ ցանել: Նույն նահանգի Բոլշե-Դեմյանսկի գավառում չքավորության խմբերի նախաձեռնությամբ կազմակերպված ե 6 գյուղատնտեսական արտել, իսկ Պարշինո գյուղում կազմված են մեքենաների 2 ընկերություններ, ուր մտել ե չքավո-

բութիան $60^{\circ}/0$ -ը¹: Նորերս կուսակցութիւն Վատկալի
 գավառական կոմիտեն չքավորութիւն խմբերի աշխա-
 տանքի հաշիվն ե արել: Յ գավառակում կազմակերպված ե
 չքավորութիւն 25 խումբ, վորոնցից 16-ը գյուղխոր-
 հուրդներին կից և 9-ը վարկալին կոռպերացիալին կից:
 5 ամսվա ընթացքում չքավորութիւն խմբերը կալացրել
 են 53 նիստ, վորոնցում քննված են 83 հարցեր: Քննված
 հարցերի թվում ելական նշանակութիւնուն ունեն վար-
 կերի բաշխման, սերմֆոնդերի կազմակերպման, բազ-
 մացանի անցնելու հարցերը, տնտեսութիւնն ուժիմի
 իրագործումը ե այլն: Ալդ աշխատանքից ալսպիսի հե-
 տեանք ե ստացվել. Անկուշինսկի վարկալին ընկերու-
 թիւն մեջ չքավորների բաժինը վարկերի բաշխման
 մեջ ավելացել ե $37-49^{\circ}/0$ -ով. 4 գյուղ ունեցել ե բազ-
 մացանք. Սուլալեսկի վարկալին ընկերութիւնը փո-
 խանակ սնանկանալու (վոր սպասվում եր) 280 ոռոք-
 լի ոգուտ ե տվել կիսամլակում: Չքավորութիւնն խըմ-
 բերը գործնականապես մասնակցել են գյուղատնտե-
 սական հարկերի վերաբերյալ նոր որենքի բացատրու-
 թիւնն ազգաբնակութիւնն մեջ. խմբերի մի մասը մեծ
 հեղինակութիւնն ե ձեռք բերել գյուղի չքավորների
 մեջ: Նրանց վճիռներին բարլացակամ համակրանքով
 են վերաբերվում և միջակները²:

Կոտելնիկի գավառում չքավորութիւն 39 խումբ
 կա: Ալդ խմբերը միացնում են 304 մարդ: Վերջին
 ժամանակներս խմբերի աշխատանքում փոփոխութիւնն
 ե տեղի ունեցել դեպի բարելավումը: Խմբերի աշխա-
 տանքի դեկավարութիւնը կուսմարմինների կողմից

¹ «Кооперативная Жизнь», 1927 г., № 271.

² «Вятская Правда», № 187, 1927 г.:

ավելացել եւ Հետեանքն այն եւ լեզել վոր միքանի խմբերում սկսվել եւ ծրագրալին աշխատանք։ Ժողովսերում սկսել են լուծվել գործնական հարցեր, ինչպես, որինակ, վարկերի, փոխատվությունների բաշխումը, մեքենաների ընկերությունների կազմակերպություն, գլուղատնտեսության կոլեկտիվացում, գլուղատնտեսական հարկի մասին, գների իջեցում, տնտեսության ռեժիմի մասին։

«Զքավորության խմբերը, վորպես չքավորության համախմբման կազմակերպչական ձև, կուբանի շրջանում գործնական աշխատանքում պատվաստվում են և գործով իրանց ոգտակարությունն ապացուցել են։ Նրանց ոգտավետությունը լերեվացել եւ լերկու ուղղությամբ—համապատասխան կազմակերպությունների աշխատանքի վրա չքավորության կողմից կազմակերպված ազգեցության գծով և հենց չքավորության համար դաստիարակչական գծով։ Այդ բանի շնորհիվ բավական հեշտանում եւ լերկու հիմնական խնդիրների լուծումն ստանիցալի աշխատանքի մեջ. դա հասարակական և պետական կազմակերպությունների աշխատանքում դաստիարակալին մերձեցման պահպանման խնդիրն եւ չքավորական ակտիվի դարբնման խնդիրը»¹։

Առաջին քալերն արված են և արված են հաստատուն կերպով։ Բայց արված են հենց միայն առաջին քալերը, Այս աշխատանքը լայն ծավալով հենց նոր-նոր և սկսվում։ Մի շարք տեղերում դեռևս չեն ել

¹ «Красное Знамя», 1927 թ. 30 հոկտ.,

սկսելու Ահա միքանի ավելի ընորոշ հաղորդագրություններ.

«... Զքավորության կազմակերպչական աշխատանքում նկատվում ե չքավորական խմբերի կազմակերպման թուլություն, միքանի կուսկազմակերպություններ լավ չեն հասկացել դրանց կազմակերպման և դրանցում աշխատանքը կատարելու կարգը» (կուսակցության Անդրկովկասյան լերկրային կոմիտեի վորոշումից):

«... Գավառում չքավորության 12 խումբ կա... Յեթե ընտրական կազմակերպության մեջ լերեան և գալիս կուլակային բռնության սպառնալիք, այն ժամանակ կուսակցության գավկոմները չքավորության խումբ կազմակերպելով այստեղ անհրաժեշտ են համարում։ Վերընտրելություններից հետո, լերը կուլակությունն անցած չի լինում կազմակերպության ղեկավարող կազմի մեջ, գավմասկոմները ցըրում են խումբը, համարելով, վոր նա հարկավոր չե, քանի վոր միայն չքավորությունն ու միջակությունն ե ընտրված։ Նա, ասում են, ել անելու բան չունի»¹.

«... Դյուղական չքավորության ժողովների աշխատանքը բավարար ե դրված, մինչդեռ չքավորության խմբերի աշխատանքը դրված է չափազանց թուլլ։ Դա նրանով ե բացատրվում, վոր դեռ ալդ խմբերի, վորպես հատուկ ֆրակցիաների—վորոնք պետք ե կուսակցության ոգնությամբ ամեն որ ուղղություն տան խորհրդային, կոռպերատիվ և այլ կազմակերպությունների դորձու-

¹ «Վայեկան Правда», № 56,

նելությանը, — շատ թե քիչ կազմակերպված, մըշտական աշխատանք չկա»¹:

«... Զքավորության աշխատանքը դեռ չի կրում բավականաչափ սիստեմատիկ, մշտական բնույթ։ Զքավորական խմբերի աշխատանքի փորձի բավականաչափ հաշվառում չկա։ Մենք մեզ մոտ վոչինչ չդիտենք չքավորության խմբերի ուրիշ կազմակերպություններում, ուրիշ նաև հանդիներում, շրջաններում և հանրապետություններում կատարվող աշխատ ոնքի արդյունքների մասին։ Ազդ փորձի համախմբում չկա, հաշվառում չկա վոչ միայն համամիութենական մասշտարով, այլև տեղերում»²...

Համագումարն առաջարկեց

«կազմել և ամրացնել խորհուրդներին և կոոպերատիվներին կից գոլություն ունեցող չքավորական խմբերն այնպես, վոր ժամանակ առ ժամանակ այդ խմբերը խորհրդակցություններ կազմեն գլուղում և գալառակում (շրջանում) իրանց աշխատանքի փորձն իրար հաղորդելու համար։

Կուսակցությունը չի ընդունել չքավորության խմբեր կազմել խորհուրդներից, կոոպերատիվների վարչություններից գուրս, չքավորության խմբեր կազմել կուսակցության քիչներին կից։ Կուսակցությունը չի ընդունել նաև տրոցկիստական ոպպոզիցիալի առաջարկը՝ կազմելու «գլուղական չքավորության միու-

¹ Հնկ. Վարեյկիսի. (Սարատով) ճառը, «Правда», № 294, 1927 թ. 23 դեկտ.

² Հնկ Խառայելչի (Թաթկանը ապետություն) ճառը. «Правда», № 294, 1927 թ. 23 դեկտ.:

թյունն, վորը վոչ միայն չեր բարփոքիլ գյուղական չքավորության դրությունը, այլև նրան կկտրեր խորհուրդներից, կոռապերացիալից, այդ կազմակերպությունների ներսում կատարվող ակտիվ աշխատանքից, և քանի վոր մեզ մոտ անընդհատ տեղի լի ունենում տնտեսական վերելքի պրոցեսս, տնտեսությունների ստորին տնտեսական խմբերից բարձրագույնին աստիճանաբար անցնելու պրոցեսս, չքավորական տնտեսությունները միջակալին դառնալու պրոցեսս,—այդպիսի միություն կազմելով մենք վոչ միայն չենք ոգնիլ գյուղական չքավորության քաղաքական և տնտեսական աճումին, այլ մեզ համար կստեղծենք մի շաբք դժվարություններ, վորոնք կխանգարեն մեր այդ աշխատանքը:

«Մեր առաջ այժմ դրված և խորհուրդների աշխատացման և կոռապերատիվալին հասարակայնության հսկայական խնդիրը, և դա ստիպում և մեզ չքավորության կազմակերպման գործը և նրա քաղաքական լուսավորության գործը դնել գյուղի այդ հիմնական կազմակերպությունների միջոցով, և վոչ թե մեկուսացնել, վոչ թե անջատել չքավորությունը կոռապերացիալից, գյուղական խորհուրդներից վորպես հատուկ կազմակերպություններ» (Վ. Մոլոտով):

Խմբերի աշխատանքը պետք և կատարվի տեղական կուսակցական կազմակերպության անմիջական ղեկավարությամբ: Չքավորության խմբին վոչ մի մշտական նախագահ՝ քարտուղար, նախագահություն կամ բլուրո հարկավոր չի: Խմբի ժողովները գումարվում են հարկավոր լեղած դեպքում նրա համար, վոր նախո-

ըսք քննութլան լենթարկեն վորեե կարեոր հարց, վորը
դրվելու լե խորհրդում կամ գլուղկոմում, կամ նրա
համար, վոր խորհրդի, գլուղկոմի, կոռպերատիվի վար-
չութլան առաջ վորեե հարց արծարծեն։ Այն ամենն,
ինչ վոր վճռվում, վորոշվում և չքավորական ժողով-
ներում, դեռ չի համարվում վերջնական, անհապաղ
կիրառման լենթակա խորհրդի կամ կոռպերատիվի
վարչութլան կողմից։ Դրանք նախնական վորոշումներ
են, վորոշումներ, վօրոնց պետք և աշխատել ընդունել
տալ կոռպերատիվի վարչութլան մեջ, խորհրդում։ Վոր-
պեսզի այստեղ ևս վորոշումներն արագութլամբ անց-
նեն և նրանց կիրառելու ժամանակ չքավորութլան
քաղաքական տնտեսական կշռի բարձրացման հետ միա-
ժամանակ ամրանա միջակ գլուղացու հետ ունեցած
միությունը, —անհրաժեշտ և խմբի առաջադրած բոլոր
առաջարկությունները համաձայնեցնել միջակալին ակ-
տիվի հետ, այս կամ այն առաջարկությունը պարզա-
բանելիս հաշվի առնել գլուղացիութլան միջակալին
մասի շահերը։

Կուսակցական կոմիտեներում (սկսած շրջանալի-
նից մինչև կենտրոնական կոմիտեն) պետք և գլուղի
աշխատանքի բաժիններ հիմնվեն։ Կուսակցական Հա-
մագումարում միքանի պատգամավորներ ընկ. Մոլո-
տովի զեկուցման առթիվ հանդես գալիս առարկում
ելին գլուղի աշխատանքի բաժիններ հիմնելու դեմ։
Գլուղացիական նահանգում, —ասում ելին նրանք, —
կուսակցական ամրող կոմիտեն զբաղվում և գլուղա-
կան հարցերով; համարլա ամրողջովին ալդ հարցերով
են զբաղված կուսակցական կոմիտելի կազմբաժինը
և այլ մասերը։ Եեթե մի մարդ նստեցնենք գլուղի

աշխատանքի բաժնում,—միենուկնն ե, վոչինչ չի փոխվի. լեթե շատ մարդնստեցնենք,—դա կլինի նոր ապահուարատների ծանրաբեռնում, և անկասկած տեղի կունենա վորոշ պարավելիում¹:

Իհարկե, ալդ ընկերներն իրավացի չելին:

«Գլուղի աշխատանքի բաժինները կուսակցությանն ալժմ շատ ոգտակար կլինեն: Նրանք գլուղական չքավորության խմբերի գավառային և նահանգական խորհրդակցություններ կհրավիրեն, նրանք ընդհանրապես պետք ե ոգնեն գլուղի ամբողջ աշխատանքի ուժեղացմանը... Սակայն ալդ բաժինը պետք ե միքիչ տարբերվի մեր սովորական բաժիններից: Դա պետք ե բաղկացած լինի միայն հրահանգիչների խմբից և նրանց զեկավարից —բաժնի վարչից, ալդ գոծի համար վոչ մի գրասենյակ չի պահանջվում, իսկ գլուղի աշխատանքի համար հրահանգիչների խումբը, վոր կոգնի խորհուրդների և կոպերացիալի բարելավումին, մանավանդ ինկատի ունենալով նրա նոր անելիքները, վոր կոգնի արհմիություններին գլուղի աշխատանքին մասնակից անելուն, վոր կոգնի կուլտուրական աշխատանք ծավալելուն, կոգնի չքավորության կազմակերպվելուն և նրա պետքերին ճշտիվ բավարարություն տալուն և ալյն,— ալդպիսի խումբը շատ հարկավոր ե»:

(Վ. Մոլոտով—Յեղրափակման խոսք):

Գլուղի աշխատանքի բաժինների անելիքներից մեկն ե լինելու չքավորության խմբերի ներկայացու-

¹ Ընկ. Խատայեիչի (Թաթհանրապետություն) է ճառը, «Правда», № 294, 1927 թ. 23 դեկտ.

յիշների խոհրդակցությունների նախապատրաստությունն ու նրանց զումարումը։ Զքավորության խմբակների ներկայացուցիչների գավառակալին, ուայոնալին, գավառալին, շրջանալին և այլն խորհրդակցությունները կողնեն ընդհանրացնելու կուսակցական առանձին-առանձին կազմակերպությունների աշխատանքի փորձը, կողնեն խուսափելու մի անգամ արդեն կատարած սխալները կրկնելուց, կողնեն տեղական առանձնահատկությունները հաշվի առնելիս կուսակցական հրահանգների հիմունքով՝ գլուղական չքավորության մեջ կատարվող աշխատանքից ձեռք բերած արդյունքների ամրացման և հետազա ծավալման դրդնական ուղիները գծելու։ Զքավորության խմբերի խորհրդակցությունների մասին լեզած առաջին տեղեկությունները հաստատում են այլ բանը։ Այսպես՝ Կոլտովսկի գավառակում (Մոսկվայի նահանգի Կաշիրսկի գավառ) չքավորության խմբերի ներկայացրուցիչների առաջին գավառակալին խորհրդակցությանը 165 մարդ կար (վորոնցից 40 %,-ը կանալք)։ Խորհրդակցությանը ներկա ելին նաև ակտիվիստ-միջակները։ Այդ խորհրդակցության մեջ աջողվեց ընդհանրացնել գավառակի սահմաններում կատարված չքավորական աշխատանքի արդյունքները։ Զքավորությունը մեծ հաճուկ-քով եր արտահայտվում։ Խորհրդակցությունը ցույց տվավ, վոր չքավորության տրամադրությունների մեջ վորոշ փոփոխություն և տեղի ունեցել. լեթե գեռ զերծերս նա խնամակալական տրամադրություններ ուներ, այդ խորհրդակցությանը չքավորությունը հանդես լեկավ մեր ստորին ապահարատի աշխատանքի ալս կամ այն թերությունների և աղավաղումների առիթով առողջ և գործնական քննադատությամբ։ Խորհրդակցությունը վորոշեց. 1) հաշվի առնել և ամրացնել չքավո-

բության աշխատանքի յեղած փորձը. 2) համապատասխան կազմակերպությունների ուշադրությունը հրավիրել չքավորության նկատած թերությունների վրա և միջոցներ ձեռք առնել դրանք վերացնելու համար. 3) գլուղացիական մասսաների մեջ ընդարձակորեն բացատրել այս խորհրդակցության վճիռները¹:

Այժմ, յերբ գետ վոչ մի գործնական փորձ չկա, կատարելապես անհնարին և քիչ թե շատ կոնկրետ կերպով խոսել չքավորության խմբերի ներկայացուցիչների խորհրդակցությունների նախապատրաստման, հրավիրելու և կայացնելու աեխնիկական կազմակերպչական հարցերի մտախն: Մի բան միայն կարելի յե հաստատապես ասել և՝ այժմ—ամեն մի այդպիսի խորհրդակցության համար անհրաժեշտ և մանրակրկիտ նախապատրաստություն, անհրաժեշտ և, վոր այդ խորհրդակցությունները լինեն կրկնակի գործնական:

Չքավորության խմբերի կազմակերպման աշխատանքը պետք է ծավալել անհապաղ: Դրանց համար գործն արտասովոր չափով շատ և: XV Համագումարը վորակիս առաջնահերթ անելիք և համարել

«գլուղացիական բաժան-բաժան տնտեսությունների աստիճանաբար անցնելը խոշոր արտադրության ռելիզերի վրա գլուղացիության հետագայում շարունակվող կոռպերացման հիմունքով (հողի կոլլեկտիվ մշակում հողագործության ինտենսիֆիկացիայի և մեքենալացման հիմունքի վրա), ամեն կերպ պաշտպանելով և խրախուսե-

¹ «Եճոտա», № 2897, 1927 թ. 29 դեկտ.

լով գլուզատնտեսական աշխատանքի հասարակացած ընձևուղները:

Գլուզատնտեսության մեջ արտադրական ուժերի բարձրացման այդպիսի ուժեղացումը անհրաժեշտ է հետևյալ լեռեք պատճառներով. 1) միմիայն այդ հիմունքով—գլուզացիական մանր անհատական՝ տնտեսությունների՝ խոշոր հասարակացած տնտեսությանն անցնելու միջոցով կարելի լի հասնել գլուզացիության հիմնական մասսայի (չքավորների և միջակների) բարորության բարձրացման. 2) գլուզացիության հիմնական մասսայի բարորության բարձրացումը մի կողմից և գլուզատնտեսության ինտենսիֆիկացիան և մեքենայականացումը մլուս կողմից ընդարձակում են թե մեր արդյունաբերության արտադրության սպառման շուկան և թե հում նյութի շուկան. 3) միայն այն ուղիով մեզ կաջողվի վերակառուցել գլուզը, հաղթահարել գլուզացիական եկոնոմիկայի կապիտալիստական տարրերը և չքավորական-միջակային գլուզը տանել գեղի սոցիալիզմ։ Գլուզացիական չքավորության կազմակերպչական-տնտեսական ոգնությունը ծավալելով՝ մենք պետք են միշտ մեր առաջ ունենանք այս հիմնական դրությունը և նրանից յեխնենք։

Գլուզական չքավորությանը հասցվող կազմակերպչական-տնտեսական ոգնությունը, գլուզացիական մանր տնտեսությունների. վերակառուցումը խոշորի, անհատական տնտեսություններից կովկատիվայինին անցնելը, կապիտալիստական տարրերի տնտեսական վտարումը գնացել են և հետագալում կզնան մի շարք առուներով, կզնան (և արդեն գնում են) խորհրդական տնտեսությունների գծով, պետական սոցիալիստական

արդյունաբերության և գլուղատնտեսության առանձին-առանձին ճյուղերի միջև կնքվող պայմանագրերի գծով (կոնտրակտացիա), գլուղատնտեսական արդյունաբերության (պետական և կոռպերատիվ) միջոցով և այլն։ Բայց այս բոլորն այն պայմանով միայն, վոր արտադրապես կոռպերացվի գլուղացիության հիմնական մասսան, մանամանդ չքավորականը։

Խորհրդային տնտեսությունների տրակտորային կոլոն-նեաները, վարձատու պունկտերը (կայանները).

Կուսակցության ԽՎ Համագումարը գլուղի աշխատանքի վերաբերքալ իր վորոշման մեջ անհրաժեշտ է համարել

« ամրացնել խորհրդալին տնտեսությունները՝ նրանց դարձնելով իրականում սոցիալիստական տիպի որինակելի խոշոր տնտեսություններ՝ միաժամանակ ուժեղացնելով նրանց ոգնությունը գլուղացիական տնտեսությանը (խորհտնտեսություններում վարձատու, ագրոնոմիական պունկտեր (կայաններ), տրակտորալին կոլոննաներ և այլն հիմնելը)։

Ճիշտ ե, խորհրդալին տնտեսությունները մեզ մոտ շատ չեն (ընդամենը 4.647 տնտեսություն 3.205.474 հեկտար հողով), նրանք դեռ նոր-նոր են ամուր վոտքի վրա կանգնում, միայն մի յերկու-յերեք տարով են մեզ բաժանում իրանց վասարերության (յերաշխություն) շրջանից, բայց այդ գծով ել կարելի լի և անհրաժեշտ ե վորեւ բան անել կոլլեկտիվացման թափի ուժեղացման համար, մանը անհատավան գլուղացիական

անտեսություններից գլուղացիականտեսությունների հիմնական մասսայի և մանավանդ նրանց չքավորական մասի խոշոր հասարակայնացած տնտեսությունների անցնելու թափի ուժեղացման համար։ Վնասաբերության վերանալուց հետո արդեն առաջին տնտեսական աարին (1925/1926) տվել և այս տեսակետից վորոշ հետեանքներ։ Այսպես՝ մի տարվա ընթացքում խորհանտեսությունների զուգավորման պունկտերում զուգավորված և 115.000 գլուխ զլուղացիական անասուն, բաց և թողնված 58,000 գլուխ, խորհանտեսությունների սերմնազտիչ պունկտերում մաքրված և 708.000 փութ զլուղացիական սերմ. վարձու լին տրվել 33.000 զանազան գլուղատնտեսական մեքենաներ և գործիքներ և ալին¹։

Այս բոլորն, ինարկե, շատ լավ և, բայց կարելի լի շատ ավելի անել։ Այստեղ ինչ գծով, ինչ ուղիներով պետք և ընթանա հետագալում աշխատանքը Ռուղիները ցուց են տրված համագումարի վորոշման մեջ. վարձատու, ազրոնոմիական պունկտեր, տրակտորալին կոլոննաներ և ալին։

Ընդլայնելով վարձատու պունկտերը և ազրոնոմիական պունկտերը, ուժեղացնելով նրանց ազդեցությունը գլուղացիական տնտեսության վրա, անհրաժեշտ և այդ գործը կազմակերպել այնպես, վորպեսզի խորհանտեսությունների վարձատու պունկտերից կենդանի և մեռլալ ինվենտարից ոգտվելու արտօնյալ պահմանները (իսկ ուր վոր հնարավոր ե՞ ծրի) և ազրոնո-

¹ Գյուղի աշխատանքի հերթական անելիքների շուրջը։ Նյութեր համեկ ԽՎ Համագումարի համար, Ռեժիս Հողժողկոմատ. 1927թ..

միական ոգնությունն առաջին հերթին չքավորական տնտեսություններին տրվեն։ Դա—մեկ։ Իսկ ապա, հիմնականը—խորհրդալին տնտեսությունը պետք ե ոգնի իրան շրջապատող չքավոր-միջակ գյուղացիությանը (չքավորին առաջին հերթին) մանր տնտեսությունից անցնելու խոշորի, անհատականից հասարակայնացածին։ Ի՞նչպես հասնել դրան։ Այս կողմից վորոշ փորձ ունենք։ Դա այսպես կոչվող տրակտորալին կոլոննաների կազմակերպութիւն (ՈւԽՍՀ) իր տրակտորալին ջոկատով (24 տրակտոր) արտոնալ պայմաններով մշակել ե միքանի շենքերում 2.800 գեսիատին գյուղացիական հող։ Թե գյուղացիների վրա ինչ ազդեցություն ե արել դա և կոլլեկտիվացման գործին ինչ ոգուտ ե տվել, պերճախոսությամբ ասում ե Շեշենկոյի անվան, Կալինինի անվան, Կրասինի անվան, «Զերվոնա Զիրկա» և «Վոսխոգյաշեյ» Սոլնցե» գյուղակների գաղթական չքավորների հետեւալ նամակը, վորհրապարակել ե ընկ. ի. Ստալինը կուսակցության XX համագումարին արած իր զեկուցման մեջ։

«Մեր մեծամասնությունը չքավոր ե, առանց ձիու, առանց ինվենտարի. չելինք կարողանում մեզ տված հողը մշակել և հարկադրված ելինք վարձու տալ հին բնակիչ կուլակներին բերքի մի մասն ստանալու պայմանով,—գրում են գաղթականները։—Շատ վատ բերք եր ստացվում. հայտնի բան ե, վոր վարձական ուրիշի հողը լավ չի մշակիլ։ Այն փոքր վարկերը, վոր ստացել ելինք պետությունից, կերել-պրծել ելինք և տարեցտարի պելի ու ավելի ելինք աղքատանում։ Այս տարի

մեզ մոտ յեկավ ուկրայնական խորհանտեսությունների ներկայացուցիչը և մեզ առաջարկեց դրամական վարկերի փոխարեն տրակտորով մշակել մեր հողերը: Բացի այս կամ այն կուլակից՝ բոլոր գաղթականները համաձայնություն տվին, թեև քիչ ելին հավատում, վոր բանը տնտեսավարի գլուխ կգա: Ի մեծ ուրախություն մեր և կուլակների ջգրու տրակտորները հերկեցին ամբողջ խամերն ու հարոսների ցելերը, 5—6 անգամ իրար վրա հերկեցին ու աղբերից մաքրելու համար փոցինեցին և վերջապես ամբողջ դաշտում մաքուր տեսակի սերմ ցանեցին: Հիմա յել կուլակները տրակտորային ջոկատի աշխատանքի վրա չեն ծիծաղում: Այս տարի մեր շրջանում անձրև չլինելու պատճառով գլուղացիներն աշնանացան համարյա թե չեն արել, իսկ ինչ հողում վոր ցանել են, գեռ չի յել ծլել: Բայց մեր դաշտերում, հարոսներում հարյուրավոր դեսիատին հիանալի ցորեն ե կանաչին տալիս, վոր իսկի գերմանական հարուստ գաղութներում ել չկա: Բացի աշնանացան ցորնի ցանքսից՝ տրակտորներն ամբողջ հողը ցելել են գարնանացանի համար: Մեզ մոտ վոչ մի դեսիատին հող չկա հիմա, վոր ցելած չլինի կամ վարձու տրված լինի: Մեզ մոտ վոչ մի չքավոր չկա, վոր միքանի դեսիատին աշնանացան ցորեն չունենա հարոսում: Տրակտորների այն աշխատանքից հետո, վոր մենք տեսանք, ել չենք ուզում չքավորի մանր տնտեսություն վարել, այլ վորոշել ենք կազմակերպել հասարակայնացած տրակտորային անտեսու-

թիուն, վորաեղ առանձին-առանձին գյուղացիական ցանքների կտորներ չեն լինիւ Մեզ համար տրակտորալին տնտեսություն կազմելն արդեն իր վրա լի վերցրել Շեշենկոյի անվան խորհանակասությունը, վորի հետ մենք պարման ենք կնքելու:

Շեշենկոյի անվան խորհանակասության աջող փորձը մտադրություն կա կիրառելու մի շաբք ուրիշ խորհրդակին տնտեսություններում (մոտակա տարում վորոշված ե ունենալ մոտ 30 ալդպիսի տնտեսություն): Հնկար ուկրանացիները հաշիվ են արել, թե ինչ ու գուտ (անմիջական, նյութական) ե տալիս գյուղացիական տնտեսությունների տրակտորալին մշակումը: Բանից գուրս ե գալիս, վոր 30 խորհանակասալին տրակտորալին կոլոննաներ կարող են մշակել 46,000 դեսիմատին գյուղացիական հող (մշակման մեջ ե մտնում գյուղատնտեսական աշխատանքների ամբողջ շրջանը), վորը միջին թվով բերքը կավելացնի լուրաքանչյուր գեսիատինից 20 փութ, և հետեւապես այդ հողից մի միլիոն ռուբլի լրացուցիչ լեկամուտ կտա¹:

Խորհրդակին տնտեսության տրակտորալին կոլոննաների մշակմամբ գյուղացիական տնտեսությունների արդյունավետության ավելացման հետ միատեղ մենք այստեղ ունենք հսկայական խթան գեպի կոռպերացումը, մանր անջատ տնտեսություններից հասարակալնացածին, խոշորին անցնելը:

Ասում են—տնտեսությանդ մեջ կիրառել հողի լավագույն մշակում, ոգտվիր տեխնիկայի վերջին նվաճումներով, ձեռք բեր գյուղատնտեսական մեքենաներ. դա

¹ Հնկ. Շլիկտերի հառը. «Պրավդա» № 294, 1927 թ. 28 դեկտ.

բազմացանի անցնելու հետ միասին հունձը կառապացնի.
մեքենաներ գործածելով՝ ֆիզիկական նվազ աշխատանք
գործադրելով ավելի մեծ արտադրական եֆֆեկտ (ար-
դիունք) կտունաս, քան առանց մեքենաների աշխա-
տելով։ Հաճախ են այսպես ասում ու գրում՝ չմտածե-
լով մինչև վերջը, չհաշվելով այն, թե վորքան ձեռն-
տու լի մանր տնտեսություններում խոշոր գյուղատըն-
տեսական մեքենաների և գործիքների կիրառումը։
Վերցնենք միքանի թվեր։ ՌԽՖՍՀ հողժողկոմ ընկ. Ա.
Պ. Սմիրնովը վերջերս հրատարակել է տվյալներ գյու-
ղատնտեսական մի շարք մեքենաների և գործիքների
մի սեղոնում հնարավոր արտադրողականության մա-
սին և տվյալներ ալդ մեքենաների իրանց հասութա-
բերությունն ապահովող նվազագույն կիրառման վե-
րաբերլավ։ Դուրս ե գալիք, որինակի համար, վոր միաձի
թեթև արոտը տալիս ե առաջին դեպքում 5—6 դեսիա-
տին, յերկրորդում—2 դեսիատին. ծանր արոտը համա-
պատասխան դեպքերում—10—12 և 5 դեսիատին. հըն-
ձիչ մեքենան 100—և 15 դեսիատին. յերկշար ցանի-
չը—40—50 և 15 դեսիատին. ձիով և ձեռքով գործող
կալիչը—30—40 և 10—15 դեսիատին. քառաձի կալ-
սիչը—70—80 և 30—40 դեսիատին. շոգեշարժ կամ
տրակտորալին կալիչը—300—400 և 100 դեսիատին։
Այս փաստերի հետ նույն շարքում դրեք մինչև 2 դե-
սիատին ցանքս ունեցող գյուղացիական տնտեսու-
թյունների քանակի վերաբերլավ տվյալները (մոտ լոթ
և կես միլիոն տնտեսություն, ընդ վորում ալդ ընդ-
հանուր թվի մեջ լուրաքանչյուր մեկ տնտեսության
վարելահողի այսպիսի տատանումներ կան։ Սմոլենսկի
նահանգում 1,79—2,67 դեսիատին, Վյատկալի նահան-

կում 0,39—2,34 դեսիատին, Վլաղիմիրի հահանգում
1,36—2,55 դեսիատին) և զուք կտեսնեք, վոր մանր
տնտեսություններում վոչ միայն քիչ թե շատ խոշոր
գյուղատնտեսական մեքենաների և գործիքների, այլև
հասարակ արորի կիրառումը լերեմն շահավետ չե։
Ահա թե բանն ինչումն եւ Նույնիսկ ավելին։ Մենք
շատ հաճախ մեծ ինքնագործության զգացմունքով ա-
սում ենք, թե վարկի շնորհիվ արքան հարցուր, հա-
զար, տասնյակ հազար չքավորական ձիազուրկ տըն-
տեսությունների ձի լենք հայթալիթել։ Խոսում, գրում
ենք այս մասին՝ մոռանալով, վոր մանր տնտեսության
համար (իսկ չքավորական տնտեսությունները՝ մանր
ու մանրագույն տնտեսություններ են) ձի պահելը՝
վորպես կանոն՝ վնասարեր ե (բացառություն են կազ-
մում այն շրջանները, վորտեղ կատարվում են փալտի
մեծ պատրաստություններ, փոխադրությունը շատ զար-
գացած ե և այն։) Ընկ։ Մոլոտովն իր զեկուցման մեջ
մատնանշել ե, վոր ձիու կիրառումն անշահավետ ե գլու-
ղացիական տնտեսությունների (9 միլիոն տնտեսու-
թյունների) մոտավորապես մի լերորդում։

Չքավոր գաղթականները գրում են.

«Տրակտորների այն աշխատանքից հետո, վոր
մենք տեսանք, ել չենք ուզում չափորի մանր
տնտեսություն վարել, այլ վորուել ենք կազմա-
կերպել հասարակայնացած օրականություն տնտե-
սություն, վորտեղ գյուղացիական ցանքսերի ա-
ռանձին-առանձին կտորներ չեն լինիլ։»

Դա տրակտորային խմբի աշխատանքի մի սեղո-
նից հետո միայն։ Տրակտորային խմբի լավ նախա-
պատրաստված աշխատանք վոր լինի, հասարակայնաց-

ման պրոցեսոներն անխուսափելիորեն իրար կհաջորդեն իրար լեռներն իրար լեռներն թիթե հողը արակառուով և մշակված, պետք ե սերմանել շարքացանիչով: Բերքը հասնում ե—պետք ե հնձել: Հո չի կարելի խուրձերը բաժանել—պետք ե միատեղ կալսել կալսիչով: Միահամուռ կերպով կարելի լե և ավելորդ հացահատիկը վաճառել կոռպերատիվի միջոցով: Իսկ քանի վոր ալդպես ե, արտադրության հասարակախացումը քայլ առ քայլ առաջ ե շարժվելու խորհանտեսության տրակտորային կոլոննալի ոգնությամբ, ուստի բնականարար պետք ե վորպես ամբողջ շենի կամ տնտեսությունների խմբի համախական սեփականություն տրակտոր և գլուղատնտեսական խոշոր մեքենաներ ու գործիքներ ձեռք բերելու հարցը բարձրանա: Միատեղ մշակում, ցանք, հունձ, կալսել ապրանքի ավելցուկի վաճառում: Իսկ դրա լեռներն աստիճանաբար կատարվող համախացումնակ մլուս ճյուղերի—կոռպերատիվ սեղանատուն, բաղնիս, համախական ջերմացրած գոմեր, շտեմարաններ և այլն և այլն:

Ինքնըստինքյան հասկանալի լե, վոր մոտակամիքանի տարիներս մենք չենք կարող այնպես ընդարձակութեն ծավալել տրակտորային կոլոննաների կազմակերպման աշխատանքը, ինչպես վոր կցանկանալինք: Մեր խորհանտեսությունների ցանցը բավական նուր ե, տրակտորների անհրաժեշտ քանակություն ձեռք բերելու համար բավական միջոցներ չունենք: Այս աշխատանքն աստիճանաբար ծավալելով առանձին-առանձին խորհանտեսություններում, առավելապես նրանցում, վորոնք գտնվում են լեռկրագործական շրջաններում, անհրաժեշտ ուժովին թափով վա-

բել վարձատու պունկտերի միջոցով, սեփական ազրունութիւնի միջոցով գյուղական չքավորությանը կազմակերպչական-տնտեսական ոգնություն ցուց տալու աշխատանքը:

Այստեղ խորհտնտեսությունների բանվորների վրա խոշոր պատասխանատու խնդիր ե դրված: Խորհտնտեսությունների գյուղատնտեսական աշխատանքներում և ձեռնարկություններում աշխատանքների առավելագույն ծավալման սեզոններում մոտ կես միլիոն բանվոր ե զբաղված, վորոնցից մշտական են 220 - 230 հազարը: Գյուղատնտեսական պրոլետարիատի այս բանակը պետք ե և կարող ե խորհտնտեսությանն ոգնի չքավոր-միջակ տնտեսությունների վրա ազդելու գործում, գյուղական չքավորությանը կազմակերպչական տնտեսական ոգնություն ցուց տալու գործում: Խորհտնտեսությունների կուսակցական և կոմիերիտական բջիջներ և գյուղատնտեսական բանվորների արհմիության կազմակերպությունն այս հարցերը պետք ե մտցնեն իրանց աշխատանքի ծրագրի մեջ՝ սրա հետ կապված այս կամ այն միջոցների իրագործման համար նշանակելով իրանց լավագույն աշխատավորներին:

Կոնցերացիայի միջոցով գյուղացիական տնտեսության վերակառուցումը.

Խորհրդակին տնտեսությունների միջոցով արված ոգնության այս տեսակին անմիջապես հարում ե կոնտրակտացիան (պարմանագրալին հարաբերություններ պետական կազմակերպությունների միջև մի կողմից և գյուղատնտեսության այս կամ այն ճյուղը միացնող կո-

ուղերացիալի միջև մլուս կողմից): Ալսպիսի պարմանա-
զրավին հարաբերություններ մեզ մոտ կիրառվում են
ներկայումս շաքարի ճակնդեղի վերաբերմամբ (Սախա-
րոտրեստը պալմանագրեր և կնքում մոտ կես միլիոն
գլուղացիական տնտեսությունների հետ), բամբակի
վերաբերմամբ (մոտ չերեք քառորդ միլիոն գլուղացիա-
կան տնտեսությունների հետ), վշի վերաբերմամբ (մոտ
հարլուր հիսուն հազար գլուղացիական տնտեսություն-
ների հետ), արևածաղկի վերաբերմամբ (մոտ հարլուր
հիսուն հազար գլուղացիական տնտեսությունների
հետ): Ընդհանուր առմամբ ալսպիսի ոլալմանագրեշով
ընդգրկված և արգեն մուտ 2 միլիոն գլուղացիական
տնտեսություն:

«Կոնտրակտացիան գլուղում գլուղատնտե-
սության մեջ պլանաչափության զարգացման և
խոշոր համալնացված արտադրության տարրերի
աճման կարևորագույն պալմաններից մեկն եւ: (Վ.
Մոլոտով):

Խոչժու; Վորովինեան պալմանագրալին հարաբերու-
թյունների մեջ մտնելով այս կամ այն շենքի կամ
գլուղացիների խմբի հետ՝ պետությունն իր տնտեսա-
կան կազմակերպության (որինակ՝ Սախարոտրեստի,
Դյամավոր Բամբակալին Կոմիտեի և ուրիշների) միջո-
ցով հնարավորություն ունի ներգործելու մանր գլու-
ղացիական տնտեսությունների վրա, ներգործելու հո-
ղի մշակման բարելավման կողմից, պետական արդյու-
նաբերությանն անհրաժեշտ տեխնիկական մշակութ-
ների զարգացման կողմից, միաժամանակ բարձրացնե-
լով վորակը: Պետությունը հնարավորություն ունի ոգ-
նելու այդ մանր գլուղացիական տնտեսություններին

կոռպերանալու և հետզհետե անցնելու արտադրության համայնականացման պրոցեսներին:

Վերցնենք բամբակը: Գլխավոր Բամբակալին կոմիտեն կոռպերացիալի հետ պարման և կնքում: Բամբակ ցանողը կոռպերատիվի ընդհանուր լերաշխավորությամբ կանխավճար և ստանում: Գլխամբակկոմը կոռպերատիվին մատակարարում և սերմեր, արհեստական պարարտացում, մեքենաներ: Ընդհանուր ագրոնոմիական ցանցի հետ միասին բամբակի (կամ Սախարոտրեստի) կազմակերպությունների ագրոնոմները հսկում են գլուղացիական տնտեսությունները: Գլխամբակկոմի և կոռպերացիալի միջև կնքված պարմանագրում ցուց ե տրվում, թե ինչպես պետք և մշակել հողը, ինչպես պարարտացնել, ինչպես ժողովել բերքը, ինչպես կառարել հում նյութի նախնական մշակումը և ալյն:

«Փոխհարաբերությունների այս ամբողջ գումարը վկայում ե գլուղատնտեսության մի ամբողջ ճյուղի անցնելը պլանալին շրջանառության և պլանալին արտադրության: Պլանալին տնտեսությանն անցնելու՝ սոցիալիստական սկզբունքների վրա հիմնված բամբակաբուծության վերակազմակերպման համար հիմնական նախադրյալներ ստեղծող կարևորագույն պայմաններ են հանդիսանում սպառողի (սոցիալիստական արդյունաբերության) կազմակերպվածությունն ու պլանայնությունը մի կողմից, և գլուղատնտեսության այլ ճյուղի հետզհետե կոռպերացումը մլուս կողմից»¹:

Մոտավորապես նույն դրությունն ունեն նաև

¹ Գյուղի աշխատանքի հերթական ինդիքների հարցի շուրջը: Նյութեր Համեն ՏՎ Համագումարի համար: Ռեժիսուր կոմատ. 1927 թ.:

պլուղատնտեսության մի շարք ուրիշ ճյուղեր (շաքարի ճակնդեղը, ծխախոտը, վուշը, ալյուտեղ-այնտեղ հացահատիկների կոնտրակտացիալի փորձեր են սկսվում։

Կոնտրակտացիան նպաստում ե մանր գյուղացիան տնտեսությունների կոռպերացման արագ աճումին։ Ալսպես, որինակ, բոլոր բամբակագործների 95% /օ-ը և ճակնդեղի ցանողների 80% /օ-ն արդեն կոռպերացված են։ Հողժողկոմատի նկութերում հետևյալ հետաքրքիր տվյալներն են բերված բամբակաբուծալին կոռպերացիալի սոցիալական կազմի մասին, կոռպերացիալի, վոր ծագել և ամրացել ե կոնտրակտացիալին միջոցով գյուղատնտեսության այդ ճյուղի վրա գործած պլանալին ներգործության հետևանքով։

Բամբակաբուծական կոռպերացիա.

Խմբերն ըստ ցանքսերի	1925 - 1926 թ.		1926 - 1927 թ.	
	Անդամների թիվը	%	Անդամների թիվը	%
Մինչև 1 դես. ցանքս				
ունեցող	287,850	59 ₆	466,018	71 ₈
1 - 2 > > >	131,850	27 ₃	140,195	21 ₅
2 - 3 > > >	40,087	8 ₃	29,856	4 ₆
3 դեսիտինից ավելի	28,183	4 ₆	12,981	2 ₀
Գումարը	482,970	100₀	649,050	100₀

Բերած աղյուսակից լերևում ե, վոր կոռպերացիալի այս տեսակն ընդգրկում ե գյուղացիության չքավոր և միջակ խավերը։ Ալսպես՝ այլ տվյալների համաձայն, Ռւզբեկյան բամբակալին ընկերության մեջ կան

94,85% չքավորական և միջակալին տնտեսություններ. Թուրքմենական բամբակալին ընկերության կազմի 91,5% ը չքավորական և միջակալին տնտեսություններն են կազմում⁴:

Բայց ալտեղ կարեորը միայն պարզ կոռպերացումը չեւ նույնիսկ նեղ առևտրական տեսակետից կարեոր ե մանր գլուղացիական տնտեսությունները խոշորների փոխարկելը (մենք ալժմ գլուղալին հում բամբակի համար վճարում ենք փութին 4 ռ. 70 կոպեկ, մինչդեռ խորհանտեսություններում նրա մշակման արժեքը 3 ռուբլի 50 կոպեկ ե), բայց մենք ալդ տեսակետով չենք կարող մոտենալ այդ հարցին և չենք մոտենում: Մեզ համար կարեոր ե հիմնականը—պետական արդյունաբերության կազմակերպությունների ողնությամբ հնարավորություն ստեղծել համայնականացված արտադրական միությունը մտցնելու սոցիալիստական արդյունաբերության մեջ: Իսկ այդ դերը կոնտրակտացիան կարող ե կատարել,

«Վորովինետե լեթե Շաքարատրկստը կամ բամբակկոմը մատակալարում ե գլուղատնտեսական այն շրջաններին, վորոնց հետ պայմանագիր ե կնքում, գլուղատնտեսական բարդ մեքենաներ, և ալդ անում ե կոռպերացիալի միջոցով, և տօւլիս ե այնպիսի մեքենաներ, վորոնք, միևնույն ե, առանձին մանր տնտեսությունների համար անմատչելի լեն, բայց վորոնց կոլլեկտիվալին գործադրությունը ճակնդեղ ցանողին ապացուցել ե իր շահավետությունը,—դա ամենաստիպողական կերպով գլուղացիական տնտեսություններին իրանց սեփական շահի տեսակետից մղում ե

¹ Հնկ Զելենսկու ճառը. «Ուրագ», № 289, 1927 թ. 17 դեկտ.

արտադրական միություններ կազմելու, անցնելու համայնական գյուղատնտեսական արտադրության, ալսինքն սովորում ե կոլլեկտիվացնել գյուղատնտեսական արտադրությունը» (Վ. Մոլոտով):

Յեվ բնական ե, վոր ալս բանում առաջին հերթին տնտեսապես կրարձրանա գյուղական չքավորությունը:

Այսպես ե գյուղական չքավորության հասցնելիք կազմակերպչական-տնտեսական ոգնությունը ալս ուղղությամբ: Բայց վորպեսզի այստեղ, մեր տնտեսական ճակատի ալս շրջանում հենց միանգամից իրական աջողություն ձեռք բերենք, անհրաժեշտ ե ավելի սեղմում գործադրել համապատասխան պետական կազմակերպությունների վրա թե կուսակցական և թե խորհրդակին գծով: Այս գործում անհրաժեշտ ե վճռականապես հրաժարվել նեղ-վարչական, նեղ առևտրական քաղաքականությունից և պրակտիկալիցից:

Հիրավի, լեթե կարելի լե կոռպերացիալից այնպիսի արդյունքներ սպասել, վորոնց մասին վերը խոսվեց, լերը լուրաքանչյուր քալափոխում

«կանխավճարելու միջոցները հարկավոր չափով կապված չեն չքավորական տնտեսությունների բարձրացման խնդիրների հետ», լերը «պետական արդյունաբերության ձեռքում գտնվող ուսուուրսները ե այդ արդյունաբերության ազդեցությունը, վոր վորոշվում ե գյուղատնտեսական հում նութիշուկայում ունեցած մոնոպոլ գրությամբ, վոչ միայն վոչ միշտ են հարկավոր չափով ոգտագործվում աջակցելու համար գյուղացիական տնտեսության կոռպերացմանը և կոնտրակտացիալին,

այլև հաճախ նույնիսկ հակառակ ուղղություն են ստանում (ՌԽՖՍՀ Հողժողկոմատի նյութեր):

Այսպես, Գլխբամբակկոմի այս կամ այն բաժանմունքները ձգտում են իրանց ապահովատում պահել բամբակը ժողովելու և սկզբնական մշակման բոլոր դործողությունները, կոռապերացիալին թողնելով բամբակարուծներին տրված կանխավճարների յերաշխավորների դերը, վարկերի (դրամական և ապրանքային) տեխնիկական բաշխողի դերը. այս տեսակետից մի շարք ալլանդակություններ են կատարվում նաև «Տարակսըրիբու»-ում (հում ծխախոտ): Նույնառեսակ քիչ փաստեր չեն բերվել կուսակցության XV Համագումարում ժողովրդական տնտեսության զարգացման հընդամյա ծրագիրը կազմելու հրահանգների վերաբերմամբ զեկուցման շուրջը կատարված վիճաբանություններում: Վերցնենք մի ուրիշ որինակ վոչխարաբուծությունից: Մենք ամեն տարի արտասահմանից միքանի տասնյակ միլիոն ռուբլու բուրդ ենք բերում: Նախապատրաստողները պետք են վոր մտածելին վոչխարաբուծության զարգացման մասին, վորպեսզի իրանց հում նյութի շուկան ունենալին, աստիճանաբար պակսացնելով մեր վալլուտան արտասահման տանելը: Մակայն իրոք

«հում նյութի պետական այս կամ այն նախապատրաստողները զուտ առևտրական նպատակներով են առաջնորդվում... Աղիքի արդյունաբերական-առևտրական ընկերություն կա, վորը հոգում ե միայն այն մասին, վոր վոչխարի աղիքները հանի. «Բուրդ» ընկերությունը հոգում ե միայն, վոր վոչխարի բուրդը խուզի. կաշվի սինդիկատը հոգում ե միայն կաշվի մասին, միս նա-

խապատրաստողները—մսի մասին, բայց այն մասին, վոր վոչխարն ամբողջական առմամբ կհեղանարուծության մի տարր ե, այդ մասին վոչ վոք չի մտածում, այլ ամենքը կարծում են, թե վոչխարը հենց այնպես ինքն իրան կմեծանա, կզարգանա»¹:

Մի շարք պետական հաստատություններից դեռևս չի վտարված առանց կոռպերացիալի աշխատելու տեհնդենցիան, ընդ վորում պետական տնտեսական կազմակերպությունների և կոռպերացիալի փոխհարարերությունները յերբեմն ուղղակի պարզաբարի յեն հասնում:

Անհրաժեշտ ե այս բոլորը վճռականապես վերացներ, Կուսակցության XV Համագումարն առաջարկել ե «կոռպերացված գլուղացիության և պետմարմինների միջև գոլություն ունեցող պարմանագրակին հարաբերությունների (կոնտրակտացիալի և այլն) պրակտիկալի զարգացմանն ամեն կերպ աջակցություն ցուց տալ, հարաբերություններ, վորոնք անմիջական զոդում են հաստատում գլուղացիական տնտեսության և սոցիալականացված արդյունաբերության (շաքարի արդյունաբերության, տեքստիլ և այլն) միջև և հեշտացնում են համապատասխան ռայոնների և շրջանների գլուղատնտեսության պետական-պլանային կանոնավորումը»:

Կուսակցական Համագումարի այս վորոշումը պետք է գլուղացիական հում նկութի վրա աշխատող մեր սոցիալիստական արդյունաբերության ճյուղերի աշխատանքի հիմնաքար ընդունվի:

¹ Ընկ. Զելենսկու ճառը. «Պրավդա», № 289, 1927 թ. 17 դեկտ.

Պետական յեվ կոռպերատիվ գյուղատնեսա կան
ինքուստիա.

«Արտադրական կոռպերացման պըրոցեսում
կարևորագույն դեր ե խաղում արդեն ալժմ և ավելի
պիտի խաղա ապագալում գյուղատնտեսական կո-
ինդուստրիան (վորպես պետականը, այնպես ել
ուսերատիվայինը), վորն անմիջապես կապված
ե թե տեխնիկապես և թե տնտեսապես գյուղա-
տնտեսական արդյունաբերության հետ և կերպա-
րանափոխում ե այս վերջնի ներքին կառուցվածքը:
Այս պըրոցեսը կապ ունի ինտենսիվ մշակությունների,
կենդանաբուծության և նման բաների աճման
հետ և եքսպորտային հնարավորությունների աճ-
ման հետ (յուղ պատրաստող գործարաններ,
պանրագործարաններ, կոնսերվի գործարաններ,
չորացնող գործարաններ, բեկոնի գործարաններ
և ալյն և ալյն)» (XV Համագումարի վորոշում):
Այս ուղիով կարելի յե նույնպես ընդարձակորեն
ծավալել արտադրական կազմակերպչական-տնտեսա-
կան ոգնությունը գյուղական չքավորությանը:

Ծիշտ ե, այստեղ մեքն միայն առաջին քայլերն
ենք անում, ալժմ ենք ընդհուպ մոտեցել աշխատան-
քի ծավալումին: Գյուղատնտեսական արտադրանքի
վերամշակման կոռպերատիվ և պետական արդյունա-
բերությունը համարյա սաղմնային դրության մեջ են
գտնվում: Բայց միքանի նվաճումներ ունենք այստեղ
ևս: Այսպես, Յուղկենարոնի գծով ներկայումս
արդեն ունենք 6 հազար յուղ ու պանիր պատրաստող
գործարաններ, վորոնք միքացնում են մի միլիոնի չափ
անդամներ. գետնախնձորի կոռպերացիայի միության

գծով ունենք 168 հատուկ ձեռնարկություններ, նույնքան ել ոժանդակ ձեռնարկություններ և 21 ելեկտրակայան։ Միանգամայն ընդհանուր գծերով վերցրած՝ գետնախնձորի կոռավերացիան կառուցվում ե այս ձևով։ Մեծ քանակությամբ գետնախնձոր ցանելու հարմար (հողային, կլիմալական և այլն) պայմաններ ունեցող մի ռալոնում հիմնվում ե գետնախնձոր մանրացնող մի ընկերություն։ Ընկերության անդամներն սկզբում հողը մշակում են անհատորեն և միայն գետնախնձորը տալիս են արտելային (ընկերական) մի փոքրիկ գործարանի նախնական մշակման համար (գետնախնձորից ոսլա վերամշակելու)։ Բարդ գյուղատնտեսական մեքենաների շահավետությունը հետո ընկերության անդամներին մղում ե համախնական մշակումի, քաղելու և վաճառելու։ Ընկերությունները միանում կազմում են ռալոնային միություն, ուր արդեն կարելի լի հիմել ոսլան դոշաբ դարձնող գործարան, ուր կարելի լի կենարոնացնել բարելավված սերմերի հալթալթումը, վարձատու պունկտեր, կազմակերպել ագրոնոմիական ոգնություն և այլն։

Այս գործն անհրաժեշտ ե առավելագույն չափով զարգացնել։ Կոռավերացիալի ուժերով պետական սոցիալիստական արդյունաբերության անմիջական աջակցությամբ տեղում գյուղատնտեսական արտադրանքի նախնական վերամշակման զարգացումը շատ կողմերից ձեռնտու լի։ Գյուղացիական տնտեսությունների արդյունավետությունը կրարձրանա, վորովհետեւ ներկայումս գյուղացիական տնտեսության արտադրանքի մի մասը կամ դուրս ե նետվում կամ չնչին գնով վաճառվում (որինակ՝ շուտ փչացող պտուղները)։ արտադրության մեջ բանվորական ուժ կմուծվի, վորով

շրջանում գործազրկությունը կտակիր. դյուղաստուեսական արտադրանքի համայնական մշակմանն անպարհան կհետեւ գլուղացիական տնտեսությունների անցումն ավելի բարձր տեխնիկական մակարդակի վրա, բայց վրովինետև այդ անցումը կապված է տնտեսությունների խոշորացման հետ, հետեւապես և անհատական տնտեսությունից կոլեկտիվալինին անցնելը. վերջապես գլուղացիական խնայողություններն ամենից հետո կլինի մոտցնել տալ գլուղատնտեսության արտադրանքի նախնական վերամշակման համար գործարաններ կառուցելու գործի մեջ: Վերջինիս նկատմամբ ընկ. Բառումանը միանգամայն ճիշտ ասաց ԽV Համագումարում.

«Յերբ խոսում են ինդուստրալիզացիալի փոխառության մասին, գլուղացին հայտարարում ե. «Ինչ-վոր մի տեղ Դնեպրոստրու են շինում, իսկ մեզ մոտ վոչինչ չեն շինում»: Բայց յեթե նրան ասենք,—«Փոխառությանը գրվիր, վորպեսզի ալստեղ լուղ պատրաստող գործարան շինենք», նա անկասկած այդ բանը կանի: Մենք որինակներ ունենք, ուր գլուղացին վոչ միայն նախաձեռնություն ե յերեան հանում համայնական-կարեվոր ձեռնարկությունների կառուցման գործում, այլ և համառություն: Այսպես՝ Մոսկվալի նահանգի գավառներից մեկում չքավորությունը գլուղկոմի միջոցով մի հասարակական ջրաղաց եր կառուցել. այդ ջրաղացն ավելի եժան եր գործում, քան մասնավորինը. մի կուլակ ալրեց այդ ջրաղացը. չքավորությունը մի նոր ջրաղաց կա-

սուցեց և անվանեց «Հրդեհածիզների ոլատառ-խան»¹:

Այս զծով կոռազերատիվ և պետական գլուղատըն-տիսական ինդուստրիալի միջոցով գլուղական չքավո-րությանը ցուց տրվող ոգնությունը կարելի լի ըն-դարձակորեն ծավալիր: Ոգնությունը վարձատու պունկ-տերում ինվենտարով և սերմացվով, տրված նյութերի համար հաշիվ տեսնելու ժամկետների համար առավե-լություններ, տնտեսապես բարձրանալու հնարավո-րություն չունեցող չքավորությանը նախապատվու-թյուն տալը ձեռնարկություններում բանվոր մտնելիս, ձեռնարկությունների կարիքներին (հում նյութ, վա-ռելիք կրելուն, վերամշակված արտադրանքները տե-ղափոխելուն) բավարարելու հետ կապված ամեն տե-սակ աշխատանք առավելապես չքավորական տնտե-սություններին հանձնելը,—այս ըոլորն անհրաժեշտ և ոգտագործել առավելագույն չափով:

Այն բանի վառ պատկերը, թե ելեկտրիջիկացիան ինչպես և ոգնելու մասնը գլուղացիական տնտեսու-թյունը խոշոր համայնական տնտեսություն դարձնե-լուն, նկարել և ԽՍՀՄ Պետականի նախագահ ընկ. Կրժիժանովսկին:

«Յեթե դուք նաևեք,—ասել ենա,—թե ինչ-պես են զետեղվում մեր նոր կառուցած կայա-րանները (ժողովրդական տնտեսության զար-գացման հնդամալա ծրագրի համաձայն), ձեր ա-ռաջ նշանակալից տեսարան կրացվի: Դուք կը-տեսնեք, թե ինչպես մեր լերկրի հողագործական կենտրոնի շուրջը հետզհետե աճում ե ելեկտրա-

¹ Բնկ Բառամանի ճառը. «Правда», № 294. 1927 թ 28 դեկտ.

հաղորդակցությունների հսկալական ողը, վորը
 կենտրոնական-արդյունաբերական շրջանից գնում
 և վորգան, իջնում Ղազանի, Սարատովի շրջանա-
 վին կայարաններով Ստալինգրադ, Ստալինգրադից
 Շախտինյան կալարանով գնում դեպի Դոն-
 ավազանը, նրա բուն քարածխային կենտրոնները,
 դեպի Շտերովյան կալարանը: Յեկ ապա դուք
 կտեսնեք, թե ինչպես Մոսկվայից Կաշիրսկի և
 առմուսկովյան ածուխի շրջանի հետեւալ կալարա-
 նով, Բրյանսկով դեպի Խարկով և իջնում ելեկտրա-
 հաղորդակցությունների մի այլ մագիստրալ, վոր
 ահազին ող և կազմում այդ գլուղատնտեսական
 կենտրոնի շուրջը: Յեթե դուք հաշվելու լինեք, թե
 այդ հաստատությունների վորպիսի կարողու-
 թյուն և ռեալիզացիալի լենթարկվելու մոտակա-
 տաս տարում, կտեսնեք, վոր դա մոտավորապես
 5 միլիոն ձիու ուժ կլինի: Յեթե դուք ինկատի
 ունենաք, վոր 70 միլիոնի չափ գլուղացիական
 հողագործ ազգաբնակություն և ապրում այդ
 լերկրագործական կենտրոնում, վոր ելեկտրահա-
 ղորդակցությունների այդ հսկալական ողի մեջ
 5 միլիոն ձիու ուժի մեքենալական եներգիա յէ
 մոտենում նրանց, վոր հավասար և աշխատանքի
 հարկուր միլիոնալին բանակի, դուրս կգա, վոր
 այդ լերկրագործական կենտրոնում ապրող լու-
 րաքանչյուր աշխատունակ գլուղացի ելեկտրա-
 հաղորդակցությունների այդ ողից կարող և ստա-
 նալ 3—4 լրացուցիչ «մեքենալական ստրուկ»:¹

¹ «ՀԱՄԱԿԻԿ (ը) ԽՎ Համագումարի բյուլետեն», № 21.

Մանը անհատական գլուղացիական տնտեսությունից խոշոր համայնականին անցնելը նույնպես խիստ հարված կլինի գլուղական գործազրկության համար, այսպես կոչված ազրարային գերբնակչության համար: Իսկ ազրարային գերբնակչությունն ամենից ավելի ցավագնորեն և հարվածում գլուղական չքավորությունը: Իհարկե, ազրարային գերբնակչությունը կվերացվի վոչ մենակ այս ուղիով: Բարվոքման լենթարկված շատ աշխատավոր պահանջող տնտեսությունները, գլուղատնտեսական հում նյութի սկզբնական վերամշակման ձեռնարկությունները, տնայնագործական-արհեստալին կոռպերացիան և այլն հետզետե բանվորական ուժի ավելի ու ավելի մեծ քանակ մուծելու հետ միասին գլուղական գործազրկությունը կվերանանակ մեր պետական սոցիալիստական արդյունաբերության, տրանսպորտի և առևտուրի գծով: Վորքան արագ ինդուստրիալիզացիայի լենթարկվի մեր լերկիրը, վորքան արագ աճի արդյունաբերությունը, այնքան շուտով կզարգանան տրանսպորտն ու առևտուրը: Իսկ արդյունաբերության, տրանսպորտն առևտուրի աճումը բնականարար նոր բանվորական ուժի պահանջ կծնեցնի: Իսկ այդ բանվորական ուժի միակ մատակարարողը գլուղն եւ: Բայց, իհարկե, այն հիմնական հունը, վորով պետք և պակսի և պակսելու յի գլուղական գործազրկությունը, գտնվում և հենց այնտեղ գլուղում: Այդ ուղին և գլուղացիական գլուղատնտեսության վերակառուցումը տեխնիկական ավելի բարձր խարսխի վրա, սպառողական տնտեսությունից ապրանքալինին, անհատականից կոլեկտիվալինին անցնիլը:

Գլուղական գործազրկության վերացման գոր-

ծում վորոշ ոգնություն և ցուց տալիս դադիւմը։ Պրո-
լետարական պետությունն ամրողջ գլուղական չքավո-
րությանն այս բանում ելական կազմակերպչական և
նյութական ոգնություն և ցուց տալիս Այսպես, գաղ-
թական չքավորներն ստանում հնԹարտոննալ ճամպոր-
դություն, յերկարաժամ փոխատվություններ, տնտե-
սական կարիքների համար ձրի փայտ, ազատվում են
ապահովագրական վճարութիւններից և գլուղատնտեսական
հարկերից, Կարմիր բանակ կանչվելիս հետաձգում են
ստանում և ալլն։

Գյուղական ջքավորության կոռպերացումը.

«...Միայն արտադրողների կոռպերացումը կա-
րող է լուծել կուսակցության և խորհրդային իշ-
խանության դեմ գլուղում կանգնած յերկկողմանի
խնդիրը—շարունակել համնելու գլուղատնտեսա-
կան արտադրանքի հետագա առավելագույն հնա-
րավոր ավելացման և միենույն ժամանակ ավելի
ու ավելի մեծ չափով ծավալել գլուղի սակավա-
զոր տարրերին աջակցելը՝ նրանց տնտեսությու-
նը բարձրացնելու և կուլակի շահագործական
տենդենցները օհանմանափակելու նպատակով։ Այն
ձեսկան հակասությունը, վոր առաջ ե գալիս
յերկու խնդիրն ել միաժամանակ լուծելու ան-
հրաժեշտությունից, լուծվում ե միայն իսկական
կոռպերացիալի այն մասսալական աճումով, վորի
մասին գրել ե ընկ. կենինը»։

Գլուղատնտեսության կառուցման գործում կոռ-
պերացիալի ունեցած դերի վերաբերմամբ հարցն ար-

պես և դրել մեր կուսակցության ՀԱՅ Համագումարը։ Այն բոլորն, ինչի մասին գրել ենք վերը, գլուղական չքավորությանը կազմակերպչական ոգնություն ցուց տալու բոլոր ուղիներն ու մեթողները,—այս բոլորը պետք ե կիրառվի և կարող ե աջողությամբ կիրառվել միմիայն կոռպերացիալի միջոցով, միմիայն նրա հետ միասին։ Մոտակա ժամանակի համար վորպես ամենամարտական հարցերից մեկը մեր առաջ կանգնած ե կուսակցության ՀԱՅ Համագումարի դրած այս խնդիրը։

«Ընդլայնել և ամրացնել սպառողական, գլուղատնտեսական և տնայնագործական-արհեստական կոռպերացիալի ցանցը՝ ի նկատի ունենալով մոտակա ժամանակաշրջանի ընթացքում ամբողջ չքավորության կոռպերացման համար կոռպերացիալից բաց թողնվող միջոցները»։

Այս ասպարիզում բանն ի՞նչ դրության մեջ ե մեզ մոտ։ Վերջին տարին այստեղ մենք աչքի ընկնող առաջադիմություններ ենք արել։ Կոռպերացիալի բոլոր սիստեմներն իրանց շահերի մասհանումներից գլուղական չքավորության կոռպերացման հատուկ ֆոնդեր են կազմել։ Ալդ ֆոնդերի չափը բավական խոշոր ե — մոտ 7 միլիոն ռուբլի։ Այսպես, միմիայն Հյուսիսային կովկասի սպառողական կոռպերացիալի սիստեմի չքավորական կոռպերացման ֆոնդը միքանի հարլուր հազար ռուբլի լի կազմում։ Ուրալի սպառողական կոռպերացիան անցյալ տարի չքավորության կոռպերացման համար մաս ե հանել 23.000 ռուբլի։ Մտարողութիւն գավառում (Բրլանսկի նահանգում) կոռպերացիան չքավորության կոռպերացման՝ 4.145 ռուբլի ֆոնդ ունի։ Կուրսկի նահանգում չքավորության կոռպերացման ֆոնդը համանում է 100.000 ռուբլու և այլն։

Գլուղական չքավորութլան կոռպերացումը՝ առանձին ֆոնդերի ոգնութլամբ, բաժնեվճարների վճարման հետաձգելովը, բաժնի արժեքի փոխարեն կոռպերացիալում վորևե գործի վրա աշխատելու կարելիություն ընձեռելովը կամ այդ արժեքը բերքով վճարելովն արդեն աչքի ընկնող արդյունքներ ե տվել Այսպես, որինակ, սպառողական կոռպերացիալի սիստեմում ամբողջ նոր բաժնետերերի $30^0/_{\circ}$ -ը կոռպերացված ե չքավորութլան կոռպերացման ֆոնդի հաշվին:

Ֆոնդերը, մի խոսքով, բավական նշանավոր են, բայց նրանց ոգտագործումը դեռ այնքան ել կարգի չի գցված։ Այսպես՝ Անդրկովկասլան լերկրալին կոմիտեի Համեկի (բ) պլեզիդիումն իր վորոշման մեջ չքավորութլան կոռպերացման ֆոնդի ոգտագործման աշխատանքը համարում ե «վոչ-բավականաչափ ինտենսիվ»։ Միքրի լերկրալին կոմիտեյի բառուոն գտնում ե, վոր չքավորութլան կոռպերացումը վերջին կիսամյակում մի քիչ ուժեղացել ե գլխավորպես սպառկոռպերացիալի գծով։ Կոռպերացման ֆոնդեր կազմված են վոչ բոլոր կոռպերատիվներում, այդ աշխատանքը թույլ ե դրված գլուղատնտեսական կոռպերացիալում, կատարելապես անբավարար ե կատարված կաթնալին կոռպերացիալում։ Ֆոնդերի ոգտագործումն անցնում ե ծայրահեղորեն վատ, ընդ վորում չքավորութլան կոռպերացման մեջ մի շարք պակասություններ ե խեղաթլուրումներ կան։ Նկատվում ե ձգձգում (պահանջվում ե գրավոր դիմում գլուղկոմի հաստատութլամբ), կոռպերացվածների համար մանր մուծումներ են կատարվում, վորի շնորհիվ չքավորներն իվիճակի չեն լրացնելու բաժնեվճարը և վերջիվերջո դուրս են արվում կոռպերատիվի անդամու-

թլունից, բացակալությամբ կոռապերացում և տեղի ունենում, ձգտում են լեզած Փոնդերը պահել կոռապերատիվի շրջանառության մեջ, բատրակության կոռապերացումը միանգամայն թուլ ե, մանավանդ սպառողական և գլուղատնտեսական կոռապերացիալում, կոռապերատիվային միությունների կողմից այս գործի բավարար չափով դեկավարություն չկա, Փոնդերը ճիշտ չեն ոգտագործվում (Փոնդի հաշվին կոռապերացնում են չքավործառայողներին, նրանց ազգականներին և այլն):

Ուրալան իերկկոմը կունդուրյան կուսակցական կազմակերպության ղեկուցման վերաբերմամբ նկատում ե.

«... չքավորության թուլ կոռապերացում, կոռապերացման Փոնդերի թուլ ոգտագործում տեղերում և անոգտագործում շրջանավին միությունների համապատասխան Փոնդերի, իերբեմն վոչ բավականաչափ ճկուն կամ մեքենայական մերձեցում չքավորության կոռապերացմանը և չքավորության թուլ ազդեցություն կոռապերատիվների ղեկավարության և աշխատանքների վրա»:

«... Փոնդերի ոգտագործումն անբավարար ե: Այդ Փոնդերի մասին չքավորությունը հաճախ բան չգիտե: 210 Ժողովսերից միայն Յի մեջ են դրվել կոռապերացման հարցերը» (Մեղենի գալառ, Արխանգելսկի նահանգ):

Չքավորության կոռապերացման աշխատանքում Փորմալիզմ (ձևականություն) շատ կա, միայն խոսքով ագիտացիա շատ կա, շատ՝ են տարվում խոսելով պրինցիպների (սկզբունքների) մասին, կոռապերացիալի դերի մասին մեր խորհրդացին տնտեսության սիստեմում, չքավորության դերի մասին՝ կոռապերացիալի մեջ: Քիչ

ե, անբավարար և գործի վերաբերյալը, գործնականը, կոնկրետը: «Վոչ մի շրջկոմ չկա,— ասում ե ընկ. Սախարովը Սիրիբան լերկիոմի բլուրում,— վորը չքավորական ժողովակի քննությանը դրած լինի կոռպերացման արտոնալ ֆոնդի բաշխման ծրագիրը. դա չի լեղել գլուղական բջիջների վոչ մի ժողովում»:

Յեվ այդ դրությունն ըստ լերեւթին միայն Սիրիբում չեւ:

Անհրաժեշտ և այստեղ վճռական ընկում առաջ բերելու կուսակցական կազմակերպությունները տեղերում պետք ե ընդհուպ զբաղվեն գլուղացիական չքավորության իսկական կոռպերացման հարցերով: Գլուղական չքավորության կոռպերացումը չպետք ե սահմանափակվի այս կամ այն չքավորական անտեսությունը սոսկ կոռպերատիվի անդամագրելով: Պետք ե իրապես գործնական կերպով դնել կոռպերացիալի վարչական և վերաստուգիչ մարմինների (կոռպերատիվների վարչությունների, վերաստուգիչ հանձնաժողովների և այլն) մեջ ավելի մեծ քանակությամբ բատրակներ և գլուղական չքավորներ մուծելու հարցը: Կուլակությունը պետք ե մեկուսացվի:

«Ամրապնդելով չքավոր-միջակ գլուղացիության առավել հուսալի տարբերի ղեկավարող կոռպերատիվ աշխատանքում առաջացման աջողությունները և նրանցից սոցիալիստական կոռպերատորների նոր լայնատարած կաղըեր ստեղծելով, ուժեղացնել ստորին կոռպերատիվ կազմակերպությունները գրավելու կուլակալին տարբերի փորձերի դեմ մղվող պալքարը» (կուսակցության XVL Համագումարի վորոշումը):

«Քաղաքակրթված» կոռպերատորների կագրեր չքավոր-
ներից, Զբավորների մանուկները յեզ գպրոցը.

«Ճիշտն ասելով՝ մեզ մնացել ե «միայն» մի բան
անել. մեր ազգաբնակությունն այնքան «քա-
ղաքակիրթ» դարձնել վոր նա հասկանա կոո-
պիրացիալին զլխովին մասնակից լինելու բոլոր
ոգուտները և ալդ մասնակցությունը գլուխ բե-
րի: «Միմիայն» ալս: Այժմ մեզ վոչ մի ալլ գե-
րիմաստություն, հարկավոր չե սոցիալիզմին հաս-
նելու համար: Բայց վորպեսզի կատարենք ալդ
«միմիայն»-ը, հարկավոր ե ամբողջ մի հեղաշըր-
ջում, ամբողջ ժողովրդական մասսալի կուլտու-
րական զարգացման ամբողջ մի շրջան»:

Այսպես եր գրում Վ. Ի. Լենինն իր «Կոռպերա-
ցիալի մասին» հայտնի հոդվածում: Մենք դեռ շատ
քիչ բան ենք արել ալդ ասպարիզում, չքավոր-միջակ
գլուղացիության «քաղաքակրթության» ասպարիզում:
Յեվ մանավանդ այստեղ քիչ բան ե արել կոռպերացիան:
Կոռպերացիան վորպես հասարակական ամենալայնա-
տարած շարժում ամեն տեղ իրան այնքան ել զգալ չի
տալիս: Մի շարք տեղերում մինք ունենք կոռպերա-
ցիալի զուտ առևտրական թեքում. ընտրված մարմին-
ների և բաժնետերերի լայնածավալ մասսալի կապը
բավարար չե: Մեզ մոտ դեռ շատ բարակ ե վոչ միայն
կուլտուրական առաջավոր «քաղաքակրթված» չքավոր-
ների և միջակների շերտը, ալլ և նույնիսկ «քաղաքա-
կրթված» կոռպերատորների շերտը: Ընթացիկ տա-
րում տարած մանրածախսի գների իջեցման կամպա-
նիան, ապաբարատը ռացիոնալիզացիալի լենթարկելու
կամպանիան և ուրիշները ցուց տվին, վոր մեզ մոտ

դեռ շատ-շատ կան այնպիսի կոռպերատիվներ, ուր կոռպերացված մասսաները վոչ միայն ամեն որ սխտեմատիկաբար չեն հրավիրվում մասնակցելու ակտիվ կերպով ընթացիկ գործնական աշխատանքին, այլև զանազան կամպանիաների ժամանակի համարյա ամեն տեղ այնքան ել բավարար չեն ծավալված վերաստուգիչ և խանութայլին հանձնաժողովները։ Կոռպերատիվալին շինարարության մեջ ակտիվ, ամենորյա, անմիջական մասնակցություն ունենալու համար լայն չքավոր-միջակ մասսաներին, առանձնապես չքավոր մասսաներին գրավելու հարցերին, վերաստուգիչ և խանութայլին հանձնաժողովների աշխատանքը դնելու հարցերին, չքավորներից գործնական աշխատանքով գյուղի սոցիալիստական վերակառուցման նոր կադրեր, «Քաղաքակրթված» կոռպերատորների նոր կադրեր դաստիարակելու հարցերին—այս բոլորին կուսակցական կազմակերպությունները պետք ե պատշաճ ուշադրություն ընծալեն։

«Քաղաքակրթված» կոռպերատորներ սնուցելու անհրաժեշտության մասին խոսելիս հարկավոր ե մտածել ընդհանրապես գյուղական չքավորության կուլտուրական մակարդակը բարձրացնելու մասին։

«Զքավորական, բատրակալին խավերի և առավել չքավոր միջակալին մասի նկատմամբ պետք ե ասել, վոր դրանք կուլտուրական տեսակետից ամենահետամնացներն են։ Հնում չքավորությունն ու միջակությունն ամենևին ուսում չեն տվել իրանց լերեխաներին... Խորհրդակին իշխանության առաջին տարիները չքավորը չեր կարող նույնպես բավականաչափ ժամանակ նվիրել իր կուլ-

տուրական մակարդակը բարձրացնելու համար։
 Ուստի չքավորները իրեկար ժամանակ կուլտու-
 րական ճակատում լիոտ ելին մնում... Յեզ ահա
 միայն վերջին տարիներս ենք սկսում տեսնել
 կուլտուրական ճակատում չքավորների և միջակ-
 ների սակավ ունետը խավերի կողմից ակտիվու-
 թյուն։ Այժմ մել և հաճախում մեր խրճիթ-ընթեր-
 ցարանները։ Այժմ խրճիթ-ընթերցարանները հա-
 ճախում են պիտակորապես հասակավոր չքավոր-
 ները և միջակալին լերիտասարդությունը։ Առա-
 վել ունեոր մասն իր համար զրգույիներ և գնում
 և լրագրեր և բերել տալիս, իսկ խրճիթ-ընթեր-
 ցարանները չի գնում։ Մենք նույնպիսի դրու-
 թյուն ենք տեսնում նաև լիկկալանները հաճա-
 խելու ասպարեզում։ Այժմ չքավորությունն ինչ-
 պես և հականներգում (реагирует) այն բանի դեմ,
 վոր՝ զորորինակ՝ փակում են լիկպունկտերը։ Ա-
 վելի ունեոր մասն այդ բանին վերաբերվում և
 անտարբեր, իսկ ավելի չքավոր մասը, այն, վո-
 րին հարկավոր են լիկպունկտերը, չափազանց
 խորն և զգում ամեն մի լիկկալանի փակումը¹։
 Բատրակալին և միջակալին անկուսակցական ակ-
 տիվին խորհուրդներում, կոոպերացիալում և ալյն
 գործնական աշխատանքի վարժեցնելու աշխատանքը
 ծավալելով, ուժեղացնելով գլուղական չքավորության
 կուլտուրական կարիքների բավարարումը (քաղցուս-
 վարների գծով—խրճիթ-ընթերցարաններում, կարմիր
 անկուններում, լիկկալաններում և այլն), մենք առան-

¹ Հնկ. Ն. Կ. Կրուպսկայայի ճառը. «Правда». № 294. 1927 թ.
23 դեկտ.

ձնակի ուշադրություն պետք և դարձնենք լատրակալալին և չքավորական լերիտասարդության վրա, զյուղական չքավորության մանուկների վրա։ Պետք և ուղղակի ասել—զյուղական չքավորության ահագին տոկոսը դպրոցի պատերից դուրս և գտնվում։ Այս լեռնուկթի պատճառները շատ են, բայց դրանց մեջ հիմնականը նյութական անապահովությունն է։ Չքավորության մանուկները տաք զգեստ և վոտնաման չունեն, դասագրքեր ձեռք բերելու միջոցներ չունեն։ Այս հարցի վերաբերմամբ կուսակցության XV Համագումարը վորոշ հրահանգ և տվել։ Համագումարն առաջարկել և ռաշխատել, վոր բոլոր աստիճանների դպրոցները մեծ չափով ընդգրկեն զյուղատնտեսական բանվորների, բատրակների և չքավորության մանուկներին, վորի համար անհրաժեշտ և չքավորության մանուկներին ոգնելու դպրոցական հատուկ ֆոնդ հիմնել։ Ամեն մի միջոց գործադրել ապահովելու դպրոցներում չքավորության մանուկների, մանավանդ փոքրերի, վարձով աշխատողների և այլն, ուսուցման իրական կարելիությունը։

Պետք և ընդլայնել զյուղացիական լերիտասարդության դպրոցների ցանցը և թոշակները (ստիպենդիա) ավելացնելու, հանրակացարաններ հիմնելու և այլ միջոցներով ավելացնել այդ դպրոցներում բատրակների և չքավորների մանուկների միջնախավը։

Տեղական կուսակցական կազմակերպությունները կուսակցական համագումարի այս վորոշումներն այնպես չպետք և հասկանան, վոր չքավորության և բատրակների մանուկներին դպրոցն ընդգրկելու համար

արդ բոլոր Փոնդերը, բոլոր միջոցները կենտրոնից են առաջարկվելու։ Այս բանի համար հարկ կլինի աշխատել և՝ տեղերում, հարկ կլինի և՝ տեղական միջոցներ վորոնել։ Այդ ուղղությամբ կատարված աշխատանքի որինակներ կան։ Այսպես, Բորիսովսկի շրջգործկոմին աջողվել և լոթ ստիպենդիա հաստատել տալ գլուղացիական յերիտասարդության դպրոցում չքավորների մանուկների համար¹։

Ինչու չպիտի կարողանան նույնն անել այլ կուսակցական և խորհրդալին կազմակերպություններ։ Ինչու գործնական հարց չբարձրացնել համապատասխան մասհանումներ անելու տեղական բրուջելից, կոռուպերացիալի շահից, ինչու հարց չբարձրացնել, վոր սառնամանիքների ժամանակ մանուկներին ձիերով բերեն փոխոգության կարգով։ Միթե քիչ հնարավորություններ ե կարելի գտնել տեղում չքավորության մանուկներին դպրոցն ընդգրկելն ավելացնելու համար։ Հարկավոր ե միայն այս գործին լրջորեն կպչել, հարկավոր ե միայն այս բանը նպատակ դարձնել, վոչ թե վորպես բարեգործություն, այլ քաղաքական խնդիր համարել։

Տեսվել արտգրական կոռապերացիայի վրա։

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել գլուղական չքավորության արտադրական կոռապերացման վրա։

«Դեպի կոլլեկտիվ տնտեսությունը տանող ուղին, վորով մինչև ալժմ զիմավորապես գնա-

¹ «Սովորական Պարագաներ» 1927 թ. 26 հոկտ.

ցել և կոլտնտեսությունների կազմակերպումը
(կոմմունաներ, արտելներ, ընկերություններ),
մեզ համար ունեցել և և ունի հսկալական նշա-
նակություն։ Այսուհետեւ դա կունենա առանձին
խոշոր նշանակություն արդեն գյուղում սկսված
մասսալական կոլեկտիվացման համար» (Վ. Մո-
լոսով):

Ա. Պ. Սմիրնովը իր «Գյուղի կոլեկտիվացման
նոր խնդիրները»¹ հողվածում բերում է հետևյալ տվյալ-
ները ՌԽՖՍՀ մեջ կոլեկտիվ տնտեսությունների
աճման վերաբերյալ։ Կոմմունաների աճման կոր գիծը
մերթ իջնում, մերթ բարձրանում եւ Այսպես՝ 1918 թ.
լեզել և 950 կոմմունա, 1921 թ. 3.040 կոմմունա,
նոր տնտեսական քաղաքականության սկզբում՝ 1.448,
1923/24 թ.—1818, 1926 թ.—1233, Արտելների թիվը
աճում և հատված գծով, բայց վեր, 1919 թ. 3606 ար-
տելից 1926 թվին դառնալով 6.709։ Համալնորեն հող
մշակող ընկերությունները տալիս են համարյա անընդ-
հատ աճում՝ 1918 թվականի 622-ից դառնալով 1926
թվականին 4.157։ «Կոլեկտիվների ընդհանուր մաս-
սայի մեջ 10 տարվա ընթացքում կոմմունաների տե-
սակարար կշիռն ընկել է 31,6% -ից (1919 թ.) մինչև
10,2% (1926 թ.): Արտելների տեսակարար կշիռը շատ
քիչ և փոխվել. 58,2% -ից (1919 թ.) իջել է մինչև
55,5% (1926 թ.): Համալնորեն հող մշակող ընկերու-
թյունների տեսակարար կշիռն աճել է. 10,2% -ից
(1919 թ.) մինչև 34,4% (1926 թ.):»

Կամ ահա տվյալներ Խարկովի շրջանի (ՌԽՖՍՀ)
վերաբերյալ. 1920 թ. 10 միություն եւ լեզել (1 կոմ-

¹ «Правда», № 274, 1927. թ. 30 նոյեմբ.

մունա և 9 գլուղատնտեսական արտել), 1923 թ.-130 (3 կոմմունա և 123 արտել), 1927 թ.-222 (ավելացում արտելների հաշվին): Այս կոլլեկտիվ տնտեսությունների ամբողջ անդամների 75,9%¹-ը չքավորությունն և կազմում²: Պակովի նահանգում կոլլեկտիվ տնտեսությունների քանակը վերջին տարին 606-ից 905 և զարձել³: Տորոլսկի շրջանում մի տարվա մեջ զանազան արտելների քանակը 26-ից 39-ի լեռ հասել³: Ոմսկի շրջանում առ 1925 թվականի հոկտեմբերի 1-ը լեզել և 313 կոլտնտեսություն, առ 1926 թ. հոկտեմբերի 1-ը—509, առ 1927 թ. հոկտ. 1-ը—652: Կոլտնտեսություններում միացած և շրջանի ամբողջ գլուղացիական տնտեսությունների 6,7%⁰-ը: Իրանց սոցիալական կազմով ամենից ավելի բարեհաջող են գլուղատնտեսական արտելները (չքավորներ 50%, բատրակներ—10,4%, միջակներ—33,6%), հողի համարնական մշակման ընկերությունները (բատրակներ—0,9%, չքավորներ,—42,9%, միջակներ—51,2%): Ունկորների տոկոսը բարձր և սերմնարուծական և անասուններ աղնվացնող ընկերություններում:

Ինարկե, միքանի կոլլեկտիվ տնտեսություններում դեռ շատ բան կա անառողջ, շատ այնպիսի բան կա, վոր արգելք և հանդիսանում սոցիալիստական տիպի տնտեսությունների արդ ընձյուղներին առաջ շարժվելու, բայց չնայած դրան, արդեն ներկալումս ել կոլլեկտիվները մեծ դեր են խաղում գլուղական չքավորության կազմակերպման գործում, նրա տնտեսական և քաղա-

¹ «Харьковский Пролетарий», 1927 թ. 27 ոգոստոսի:

² «Псковский Набат», 1927 թ. № 199.

³ «Северянин», 1927 թ. 28 ոգոստոսի:

քական վերելքի գործում։ Մենք արդեն ներկայումս ունենք այնպիսի գուղատնտեսական կոլեկտիվների մի շարք, վորոնք վոչ միայն իրանք են բարձրացնել, այլ և իրանց լեռնից քաշում են և՛ շրջակա գուղացիությունը։

Կոլեկտիվ տնտեսություններ կազմակերպելու միջոցով գուղական չքավորությանն ուղնելու կարեւորության վրա նշել ե դեռվկենտրոնական Կոմիտեյի հոկտեմբերյան (1925 թ.) պլենումը։ Այս հարցի վերաբերմամբ ուղիղ ցուցումներ կան և՛ կուսակցության ԽIV Համագումարի վորոշումների մեջ և ԿԿ-ի Կազմբյուրոյի հունիսյան վորոշման մեջ։ Յեզ չնայելով այս բոլորին՝ մենք գործնականում յուրաքանչյուր քայլափոխում տեսնում ենք, վոր չքավորության արտադրական կոռպերացման հարցերին տեղական կուսակցական կազմակերպությունները բավականաչափ ուշադրությամբ չեն վերաբերվում։ Արտադրական կոռպերացման հիմնական խթանները—վարկն ու գուղատնտեսական մեքենաները հարկավոր չափով չեն ոգտագործվում։ Վարկերը բաժանելու գործում շատ կազմակերպություններ դեռ մեծ թեքում ունեն գեղի անհատի կողմը, դեղի անհատական տնտեսությունների վարկավորման կողմը։ Անհատական մանր տնտեսությունների ձեռքն ե ընկնում նաև բարդ գուղատնտեսական մեքենաների նշանավոր տոկոս։

Այս պակասություններն անհրաժեշտ ե վճռականապես վերացնել։ Անհրաժեշտ ե հիշել, վոր այժմ արդեն կոլեկտիվ տնտեսություններում մենք ունենք մի միլիոնի չափ մարդ, վոր այդ տնտեսություններն անում են։ Սրա հետ միասին անհրաժեշտ ե ամեն կերպ

ոժանդակել ամենապարզ միությունների կազմակերպմանը։ Դրանք գլուղացիության համար ավելի հասկանալի լեն։ Դրանցից ավելի հեշտ ե սկսել անհատական տնտեսությունը կոլլեկտիվալինի փոխելը։ Վերը բերած թվերից մենք տեսնում ենք, վոր ամենից արագ աճում են հենց արդ ամենապարզ միությունները։ Անհրաժեշտ ե ուժեղացնել այս տեսակ միությունների կազմակերպման գործը, անհրաժեշտ ե ձգտել ավելացնելու չքավորության տոկոսը կոլլեկտիվ տնտեսություններում ընդհանրապես և պարզագույն միություններում մասնավորապես։ Կուսակցության XV Համագումարն առաջարկել է ուժեղացնել կոլտնտեսական շինարարության գործին մատուցվող ոգնությունը, գլուղատնտեսական կոոպերացիալի սիստեմին համագումարն առաջարկել ե

«Իր գլխավոր ուշադրությունն ուղղել լայն չքավոր-միջակ մասսաների արտադրապես կոոպերացման աջակցությանը և զարգացմանը»։

Կոլլեկտիվ և չքավորական տնտեսություններին մեքենաներ հալթալթելու վերաբերմամբ համագումարն արտահայտվել է առանձին արտօնություններ սահմանելու վարկի, վճարումների պայմանների գծով և պետական ու կոոպերատիվ վարձատու կալանների ցանցի ընդարձակման ուղղությամբ։

Հոգածինարարություն.

Գլուղական չքավորությանը կազմակերպչական-տնտեսական ոգնություն ցուց տալու խնդիրը, նրա արտադրական կոոպերացման միջոցների գործնական կիրառումը դեմ ե առնում մեր հողի անմշակ դրությանը։ Հիրավի, միթե կարելի լի խոսել գլուղական

Հքավորությանն ոգնելու մասին տրակտորալիին խորհունտնտեսությունների կոլոննաներ կազմակերպելու միջոցով, կոնտրակտացիալի միջոցով, գլուղատնտեսական ինդուստրիալի միջոցով և ալճ, առանց այդ հարցերի հետ միատեղ գործնական մակարդակի վրա դնելու հողաշինարարության հարցն ընդհանրապես և գլուղական չքավորության հողաշինարարության հարցը մասնավորապես և հատկապես:

Հողաշինարարության վերաբերլալ դեկրետներ մեզ մոտ վորքան կուզես: Մասնավորապես քիչ չեն չքավորական տնտեսությունների հողաշինարարության վերաբերլալ դեկրետները: Բայց այդ ուղղությամբ արտասովոր չափով քիչ բան ե արված: Առաջները բացատրությունը գտնում ելին՝ «միջոցներ չկանչ ասելով: Պետությունը հնարավորություն չունի ձրի հողաշինարարություն անելու, իսկ չքավորությունը փող չունի հողաշինարարության աշխատանքների համար վճարելու: Ժողովրդական տնտեսության աճման հետ միասին այդ հարցը լուծվում եր բարեհաջող կերպով: Արդեն ԽՍՀ Միության Խորհուրդների III Համագումարը չքավորության հողաշինարարության ծախքերի մի մասն ընդունել ե պետության հաշվին: 1925 թ. ՌԽՖՍՀ մեջ չքավորական տնտեսությունների հողաշինարարության համար հատկացված ե լեզել մոտ $1\frac{1}{2}$ միլիոն ռուբլի, 1925—26 թ. թ. մոտ 3 միլիոն ռուբլ.: Միքիչ ավելի լե 1926—27 թվականի համար: Հողաշինարարված ե—1925 թ. 2.710.000 դեսիմին, 1925—26 թ. 3.981.400 դեսիմին:

Իհարկե, դա շատ քիչ ե, բայց ավելին անելն անհնարին եր—միջոցները չելին բավականացնում:

Բացի անմիջապես չքավորական տնտեսությունների հողաշինարարության ծախքերը վճարելու համար բաց թողած միջոցներից՝ պետությունը միջոցներ եր բաց թողնում հողաշինարարվողներին նոր շենքը գաղթելու (անվերադարձ նպաստներ և վարկ) և հողաշինարարության վարկավորման համար։ Այսպես՝ 1925—26 թ. թ. անվերադարձ նպաստներ են հատկացված շենքեր աեղափոխելու համար 540.000 ռուբլի և գաղթականներին բնակավորվելու համար վարկ ե. բացված 5 միլիոն 300 հազար ռուբլի։ Հողաշինարարության վարկը 1925—26 թ. թ. հավասար եր համարյա 3 միլիոն ռուբլու։

ԽՍՀՄ ԿԳԿ-ի վորոշումով (Մանիքեստ) բոլոր չքավորական գյուղացիական տնտեսությունների և միջակների սակավազոր տնտեսությունների հողաշինարարությունը պետական հաշվին և ընդունվում։ ԿԳԿ-ն առաջարկել ե բացի նախահաշվային հատկացումից 1927—28 թ.թ. բլուջելով լրացուցիչ հատկացնել այդ նպատակի համար 10 միլիոն ռուբլի¹։ Այն մասին, վոր չքավորական և սակավազոր գյուղացիական տընտեսությունները ձրի լին հողաշինարարվելու, ասվում ե նաև հողաշինարարության և հողոգագործման մասին միութենական որենքի մշակման համար տրված հրահանգչական ցուցումների մեջ (ԿԿ-ի 1927 թ. հոկտեմբերի 20-ի վորոշումը²), և վերջապես կուսակցության XV Համագումարի վորոշման մեջ, վոր արված ե ընկ. Վ. Մոլոտովի գեկուցման առթիվ («գյուղացիության չքավորական և սակավազոր խավերի հողաշինարարությունը կատարել պետության հաշվին»)։

¹ ԽՍՀՄ ԿԳԿ-ի Մանիքեստը «Правда», № 297, 1927 թ. 164 էկտ.

² Տպգած և «Правда»-յում, № 268, 1927 թ. 23 նոյ.

Ալսողիսով չքավորական գրուղացիական տնտեսությունների հողաշինարարության վճարման միջոցների հարցը լուծված եւ Մեր առաջ դրված և այս հիմնական խնդիրը—այդ միջացներն ավելի նպատակահարմար կերպով ոգտագործելը հասնել այն բանին, վոր չքավորական տնտեսությունների հողաշինարարությունն այդ մանր անհատական տնտեսություններն արմատապես կոլլեկտիվացինի վերակառուցելու սկիզբ դառնաւ։ Հողոգտագործման լավագույն ձեւը, լավագույն՝ կոլլեկտիվացին տնտեսության ավելի հեշտությամբ փոխարկվելու մտքով, հանդիսանում եւ շենը (փոքրիկ գուղղը)։ Հարկավոր եւ խոստովանվելի վոր մենք այնքան ել բավարար ուշադրություն չենք ընծալում այդ բանին։ Թող հողոգտագործման ձեւի ընտրությունը ցանկության գործ լինի, բայց չե՞ վոր քանի վոր շենը հողոգտագործման այնպիսի մի ձեւ, վորը հեշտացնում եւ անհատական գյուղացիական տնտեսությունից կոլլեկտիվացինին անցնելը, ուստի եւ, թվում եւ, թե մենք պետք եւ ագիտացիա անենք դրա համար։ Արդյոք ամեն տեղ եւ կատարվում այդ ագիտացիան։ Վժրքան համոզիչ կերպով եւ կատարվում։ Հավանորեն վոչ ամեն տեղ, հավանորեն վոչ բավարար համոզիչ կերպով։ Մեզ մոտ, հայտնի չեւ, թե ինչու, սովորել են այնպես կարծել, թե հողաշինարարությունը տեխնիկական գործ եւ Հողացին վարչություններ կան—բան հասկացողներն ել իրանք են։ Իսկ «հողացին մարմինների գործնականը, նույնիսկ Մոսկվայի նահանգում, լերեկմն ուրիշ գծով եւ ընթանում։ Հաճախ ագրոնոմներն ու լերկրաչափները դեռ հիմա յել նպաստում են զատված և ագարակալին տընտեսության զարգացմանը»¹։

¹ Հնկ. Բառմանի ճառը. «Правда», № 294, 1927 թ. 23 դեկտ.

Քանի վոր բանն ալդպես և Մոսկվալի նահանգում, Խորհրդալին Միության մալրաքաղաքի կողքին: ԽՍՀՄ խոշորագույն կուլտուրական-քաղաքական կենտրոնի կողքին, արժի միթե կասկածել, վոր ամբողջ շենով հողաշինարարություն անելու ազիտացիան այնպես չի կազմակերպված, ինչպես վոր պետք ե:

Կուսակցության կենտրոնական կոմիտեն նշել ե, վոր Միության հողաշինարարության և հողոգտագործման որենքի մեջ պետք ե նախատեսված լինի գլուղի չքավորներին և սակավագոր միջակ գլուղացիական տնտեսություններին

«Հ ողաշինարարության և հողոգտագործման շրջանում առանձին տնտեսական առավելություններ տալը (արտօնություններ հողաշինարարության մեջ, ուրիշ խավերից ավելի հող ստանալու նախապատվության իրավունք. ավելի հարմար հող ստանալու իրավունք և նրա ոգտագործման դրույթուն. արտօնություններ գաղթելու և անջատվելու դեպքերում, վարձակալական պարմանագրեր կապելիս չքավորության շահերի ապահովություն և այլն):»:

Կուսակցության XV Համագումարի վորոշման մեջ նշվում ե, վոր

«Հողաշինարարության կիրառումը պետք ե սերտորեն կապված լինի կազմակերպչական-տնտեսական մալլ միջոցների հետ (ագրոնոմիական ոգնություն, վարկ, մելիորացիա (հողի բարվոքում), մեքենամատակարարում և այլն): Համագումարն առաջակում է Շհետեկել, վոր հողաշինարարությունը կիրառելիս չքավորագույն խավերի շահերն ապա-

հովվեն նաև հենց հողամաս տալուց (հատկությունը, դիրքը և այլն):

Գյուղական չքավորության վարկավորումը հատուկ
ռոնդի գծով.

Կենտրոնական կոմիտեի հոկտեմբերիան (1925 թ.) պլենումը անհրաժեշտ ե համարել հիմնել մշտական հատուկ ֆոնդ, այդ ֆոնդը նախորոշելով

«հատկապես չքավորության և մասնավորապես կոլեկտիվներին առանձին արտոնյալ պարմաններով վարկավորելու նպատակի (արտոնյալ ժամկետներ, ապահովության առանձին արտոնյալ պարմաններ և այլն)»:

ԽՍՀՄ պետական բյուջելով 1925/26 թ. գյուղական չքավորության արտոնյալ վարկավորման մշտական ֆոնդի համար հատկացված ե յեղել 10 միլիոն ռուբլի: Մինչև կուսակցական XV Համազումարը (1927 թ. դեկտեմբեր) գյուղական չքավորության վարկավորմար հատուկ պետական ֆոնդը հավասար եր 32.745.000 ռուբլու (ՌԽՖՍՀ—20 միլիոն ռուբլի, ՌւԽՖՀ—7.400.000 ռուբլի, ԱԽՖՍՀ—1.070.000 ռուբլի, Ռւզբեկստանի ԽՍՀ—3 միլ. ռ., ԲԽՄՀ—900.000 ռ. և Թուրքմենստանի ԽՍՀ—375,000 ռ.)¹:

Տեղական կազմակերպություններն ի՞նչպես են մոտեցել այդ միջոցն իրականացնելուն, ի՞նչպիսի նվաճումներ և թերություններ են յերեան յեկել մեր աշխատանքի մեջ այդ ասպարիզում:

¹ Գյուղատնտեսական վարկի նվաճումներն ու ի՞նդիբներն առ հոկտեմբերիան հեղափոխության 10-ամյակը. Մոսկվա, 1927 թ.:

Նահանգների մեծ մասում չքավորության վարկավորման ֆոնդ հիմնելու գործի վրա տեղերում (նահանգական կենտրոններում) կուսակցական կազմակերպությունները հարկավոր ուշադրություն են դարձրել կուսակցական կոմիտեները ֆոնդի հարցը զրել են իրանց նիստերում, վորի հետևանքն այն և իդել, վոր կենտրոնից ստացված միջոցները վորոշ նահանգներում բավական մեծացել են (տեղական բլուզներից, հատկացումներ, կոռապերացիալի մասնանումներ և այլն), թեև գլուղական չքավորության վարկավորման հատուկ ֆոնդի մեջ տեղական միջոցների գումարն այնքան ել բավարար չե դեռևս:

Մի շարք շրջաններում դեպի չքավորության վարկավորման գործը միանգամայն ճիշտ մերձեցում և հաստատվել Առաջին հերթին վարկավորվում են չքավորական կոլլեկտիվները, ընդ վորում ինքը վարկն ոգտագործվում և վորապես չքավորության կոլլեկտիվացման խթան: Այսպես, որինակ՝ Մոսկվայի նահանգում նպաստներ տալիս մեկնելես հազարից ավելի չքավորական տնտեսություններ կոռապերացիալի մեջ են մտցված: Վարկը զարկ և տվել պարզագույն միություններ կազմակերպելուն—կոլլեկտիվորեն արտադրության գործիքներ ձեռք բերելու և ոգտագործելու աշքի ընկնող քանակությամբ սկզբնական բջիջներ են ծնունդ առել նահանգում: Առաջ կազմված մի շարք չքավորական կոլլեկտիվներ բավականաչափ նյութական ոժանդակություն են ստացել տրակտորներով, գլուղատնտեսական խոշոր մեքենաներով և այլն: Վարկի շնորհիվ ել ընականաբար ուժեղացել և վարձատու կայաններից չքավորական տնտեսություններին գործիքներ վարձու տալը:

Հքավորութիւնը մատուցվող կազմակերպչական անտեսական ոգնությունը, վորը ընթանում և չքավորութիւն վարկավորման փոնդերի մեծացման և այդ փոնդերի գործնական ոգտագործման գծով, կազմվում և չքավորութիւն քաղաքական ակտիվութիւն բարձրացման, գլուղում նրա քաղաքական կշռի ուժեղացման վերաբերյալ կուսակցական կազմակերպությունների աշխատանքի հետ:

Բայց չի կարելի լսութիւն տալ և թերությունները: Այստեղ մենք նշում ենք թերություններից միայն նրանք, վորոնք ավելի հաճախ են պատահում, վորոնք վորոշ չափով ծովում են կուսակցության դասակարգալին ուղիղ գիծը, վորոնք վորքրացնում են գործադրված միջոցի գործնական արդյունքը:

Առաջին տեղերից մեկն և ըստում տեղական կուսակցական կազմակերպությունների ստորին մարմինների կողմից չքավորութիւն վարկավորման գործին բավականաչափ ուշադրությամբ չվերաբերվելը: Միջոցները բաշխելու աշխատանքի հիմնական ծանրությունն ընկած և գլուղատնտեսական վարկի սիստեմի ստորին բջիջների վրա: Վորպեսզի վարկն իր նշանակութիւնը ծառայի, վորպեսզի գործնական աշխատանքում սխալներ քիչ լինեն, կենտրոնական հաստատությունների հրահանգներում առաջարկվել և նպաստները բաշխելու գործին մասնակից անել շրջանի այն կազմակերպությունների ներկայացուցիչներին, վորոնք ծանոթ են վորպես շրջանի չքավորական անտեսական դրութիւնը, այնպես ել չքավորական միությունների և զատկատ անտեսությունների դրութիւնը (գավգործկոմ, գլուղխորհուրդ,

գլուղղոմ): Այստեղ ե չքավորութիւնն վարկավորման գործում ունեցած մեր աշխատանքի ամենաթուլ կողմերից մեկը: Չքավորութիւնն ֆոնդից պուածին անգամ միջոցները բաշխելու սկզբին վարկալին գլուղատնտեսական ընկերությունների վարչություններին կից չքավորական խմբերը համարյա թե չկալին: Գավործկոմների, գլուղխորհուրդների և գլուղկոմների ներկայացուցչությունը բազմաթիվ դեպքերում ձեական եր: Միքանի շրջաններում հանձնաժողովները կազմվում ելին վոչ թե ընկերությունների վարչություններին կից, այլ գավործկոմներին կից, և յերբեմն իրանց աշխատանքը սահմանափակում ելին այս կամ այն միութիւնն կամ առանձին տնտեսութիւնն կարողութիւնն մասին տեղեկանքներ տալով՝ որգանական մասնակցութիւնն չունենալով ընկերութիւնն վարչութիւնն պատճեն բաշխելու աշխատանքի մեջ: Հանձնաժողովների աշխատանքի կուսակցական ղեկավարությունը մի շարք դեպքերում կատարելապես բացակայում եր և այստեղ, ուր դա կամ այն ձեռվ իրագործվում եր (գավկոմի, բջջի ներկայացուցչութիւնն կամ հանձնաժողովի կոմմունիստ անդամների միջոցով), շատ հեռու յեր բավարար չափով լինելուց:

Այս բոլորի հետևանքն ի՞նչ եր լինում: Հետևանքը լինում եր այն, վոր նախ՝ ֆոնդերը չելին ոգտագործվում կամ քիչ ելին ոգտագործվում: Այսպես՝ ՌԽՖՍՀ մեջ գլուղատնտեսական վարկի ընկերությունների ձեռքով ֆոնդի ոգտագործումը տատանվում է $100^{\circ}/_0$ -ի (Մոսկվայ) և $55,1^{\circ}/_0$ -ի (Նրիմ) և նույնիսկ մինչև $41,5^{\circ}/_0$ -ի (Յարոսլավլ) և $23,2^{\circ}/_0$ -ի (Որենբուրգ) միջև, ստորին ցանցի ձեռքով՝ $100^{\circ}/_0$ -ի (Վոտսկ, Տամբով) և $21,2^{\circ}/_0$ -ի

(Ստալինգրադ) միջև, Զքավորության ֆոնդերի թույլ ոգտագործման վերաբերյալ տեղեկություններ կան միշտ նահանգներից:

Յերկրորդ՝ դրա հետևանքը լինում եր այն, զոր ֆոնդերն ըստ նշանակության չելին ոգտակործվում, վարկավորման ժամանակ դասակարգալին գծից դուրս ելին գալիս: Յեղել են դեպքեր, յերբ չքավորության վարկավորման ֆոնդից կոռապերատիվների պարտքը վճարելու համար են ծախսել, յերբ այդ ֆոնդի միմասը կոռապերատիվի առևտրական շրջանառության մեջ ե դրվել, յերբ վարկի հաշվին մարդկանց գլխին են կապել «վեր ընկած», չծախսվող ապրանքներ և ալյն: Ալատըիրսկի շրջկոմի պլենումն, որինակ, մատնանշում ե, վոր տեղերում հաճախ թույլ են տալիս, վոր միջոցներն ոգտագործվեն վոչ իրանց նշանակության համաձայն, մասնավորապես յեղել են դեպքեր, յերբ չքավորության վարկավորման հատուկ ֆոնդից միջոցներ են տրամադրվել ազգաբնակության վոչ-չքավորական խավերին»...

Վարկերի մի մասն անպայման ստացել են գյուղացիների այն խմբերը, վորոնք պետք ե վարկավորվելին գյուղատնտեսական վարկի ընդհանուր սիստեմով և վոչ թե չքավորության արտոնյալ վարկավորման ֆոնդից: Վարկն ըստ իր նշանակության ոգտագործելու բանն ավելի քան վատ ե դրված: Ամեն մի կասկածից դուրս ե, վոր վարկերի մի խոշոր մաս գնացել ե վոչ թե նպատակալին արտադրական նշանակության վրա, այլ կերպել ե:

Իսկ այստեղից—չքավորության վարկավորման գործի վրա տեղական կուսակցական կազմակերպու-

գլուղկոմ): Այստեղ եւ չքավորութիւնն վարկավորման գործում ունեցած մեր աշխատանքի ամենաթույլ կողմերից մեկը: Չքավորութիւնն ֆոնդից առաջին անգամ միջոցները բաշխելու սկզբին վարկալին գլուղատնտեսական ընկերութիւնների վարչութիւններին կից չքավորական խմբերը համարյա թե չկալին: Գավկործկոմների, գլուղխորհուրդների և գլուղկոմների ներկայացուցչութիւնը բազմաթիվ դեպքերում ձևական եր: Միքանի շրջաններում հանձնաժողովները կազմվում ելին վոչ թե ընկերութիւնների վարչութիւններին կից, այլ գավկործկոմներին կից, և յերբեմն իրանց աշխատանքը սահմանափակում ելին այս կամ այն միութիւն կամ առանձին տնտեսութիւնն կարողութիւն մասին աեղեկանքներ տալով՝ որգանական մասնակցութիւնն չունենալով ընկերութիւնն վարչութիւնն սպասաները բաշխելու աշխատանքի մեջ: Հանձնաժողովների աշխատանքի կուսակցական ղեկավարութիւնը մի շարք դեպքերում կատարելապես բացակալում եր և այնտեղ, ուր դա այս կամ այն ձևով իրագործվում եր (գավկոմի, բջջի ներկայացուցչութիւնն կամ հանձնաժողովի կոմմունիստ անդամների միջոցով), շատ հեռու լեր բավար չափով լինելուց:

Այս բոլորի հետևանքն ի՞նչ եր լինում: Հետևանքը լինում եր այն, վոր նախ՝ ֆոնդերը չելին ոգտագործվում կամ քիչ ելին ոգտագործվում: Այսպես՝ ՌԽՖՍՀ մեջ գլուղատնտեսական վարկի ընկերութիւնների ձեռքով ֆոնդի ոգտագործումը տատանվում է $100\%_0$ -ի (Մոսկվա) և $55,1^0/0$ -ի (Նովոչերկասկ) և նույնիսկ մինչև $41,5^0/0$ -ի (Յարովյան) և $23,2^0/0$ -ի (Որենբուրգ) միջև, ստորին ցանցի ձեռքով $-100\%_0$ -ի (Վոլոգդա, Տամբով) և $21,2^0/0$ -ի

(Ստալինգրադ) միջև, Զքավորության Փոնդերի թուլլ ոգտագործման վերաբերյալ տեղեկություններ կան միշտ նահանգներից:

Յերկրորդ՝ դրա հետևանքը լինում եր այն, վոր Փոնդերն ըստ նշանակության չելին ոգտագործվում, վարկավորման ժամանակ գասակարգավին գծից դուրս ելին գալիս: Յեղել են դեպքեր, յերբ չքավորության վարկավորման Փոնդից կոռպերատիմների պարտքը վճարելու համար են ծախսել, յերբ այդ Փոնդի միմասը կոռպերատիվի առևտրական շրջանառության մեջ ե դրվել, յերբ վարկի հաշվին մարդկանց գլխին են կապել «վեր ընկած», չծախվող ապրանքներ և այլն: Ալատըիրակի շրջկոմի պլենումն, որինակ, մատնանշում ե, վոր Շտեղերում հաճախ թուլլ են տալիս, վոր միջոցներն ոգտագործվեն վոչ իրանց նշանակության համաձայն, մասնավորապես յեղել են դեպքեր, յերբ չքավորության վարկավորման հատուկ Փոնդից միջոցներ են տրամադրվել ազգաբնակության վոչ-չքավորական խավերին»...

Վարկերի մի մասն անպայման ստացել են գյուղացիների այն խմբերը, վորոնք պետք ե վարկավորվելին գյուղատնտեսական վարկի ընդհանուր սիստեմով և վոչ թե չքավորության արտոնյալ վարկավորման Փոնդից: Վարկն ըստ իր նշանակության ոգտագործելու բանն ավելի քան վատ ե դրված: Ամեն մի կասկածից դուրս ե, վոր վարկերի մի խոշոր մաս գնացել ե վոչ թե նալատակալին արտադրական նշանակության վրա, այլ կերպել ե:

- Իսկ այստեղից—չքավորության վարկավորման գործի վրա տեղական կուսակցական կազմակերպու-

թրուններից կողմից բավականաչափ ուշադրություն
 չդարձնելուց—բղխում և և լեռը որդը.—վարկի բավա-
 կանաչափ չոգտագործելը վորպես չքավորական տնտե-
 սությունների կոլեկտիվացման խթան, վորպես ապ-
 րուստի տրամադրությունների դեմ պատքարելու զենք:
 Ահա այս բանն ապացուցող միքանի փաստեր: Ուսու-
 գլուղբանկի սիստեմի մեջ մտնող վարկալին գլուղա-
 տնտեսական ընկերությունները «միջոցների $28^0/_{\circ}$ -ը
 տվել են կոլեկտիվսերին և $72^0/_{\circ}$ -ը անհատ փոխա-
 ռուներին»¹: Զանազան ընկերությունների կոլեկ-
 տիվսերին և անհատներին բաց թողած վարկերի
 փոխադարձ հարաբերությունը շատ խայտարդետ ե:
 Որինակ՝ Պակովի նահանգում 1926 թ., հոկտ. 1-ից
 մինչև 1927 թ. ոգոստ. 1-ը չքավորության փոխա-
 ռվություն ե բաց թողնված $1.615.300$ ռուբլի: Խոշոր
 գումար ե: Բայց այդ գումարի $92^0/_{\circ}$ -ը գնացել ե ան-
 հատական տնտեսությունների վարկավորման վրա²):
 Տարաբի շրջանում բաժանված 48.284 ռուբլի չքավո-
 րական վարկից 36.990 ռուբլին տրված ե անհատա-
 կան տնտեսություններին³: Տվերի նահանգում ամ-
 րող փոխատվությունների $80^0/_{\circ}$ -ն ստացել են կոլեկ-
 տիվսերը. Տուլամի նահանգում կոլեկտիվսերն ստացել
 են 50.895 ռուբլի, անհատները— 6.189 ռուբլի և այլն:
 Բայց ընդհանուր առնմամբ գերակշռությունն անհատ-
 ների վարկավորման կողմն ե:

Չքավորության վարկավորման գործում տեղերի
 սխաների և թերությունների մեջքի վորոշ մասն ան-

¹ «Հօպերատուա Ժաւոն», № 262, 1927 թ. 16 նոյ.:

² «Պետական Կազմակերպություն», № 199, 1927 թ.:

³ «Սովետական Հայաստան», № 4, 1927 թ. 20 նոյ.:

կասկած պետք ե գցել նահանգական, շրջանալին և գավառալին կենտրոնների ղեկավար մարտինների վրա: Միշարք տեղերում թույլ ե տրված յեղել տեղական մարտիններին հրահանգման գործը վորպես կուսակցական, այնպես ել խորհրդալին գծով: Նահանգական և շրջանալին կենտրոններից միջոցները գլուզն են հասել արտասովոր չափով դանդաղորեն: Այսպես՝ ՌԽՖՍՀ Հողժողկոմատի տվյալների համաձայն՝ կենտրոնից մինչեւ փոխառուն կատարած միջոցների ճանապարհորդությունը տեսում ե... 200 որ:

«Զափազանցություն չի լինիլ, լեթե ասենք; —գրում ե ընկ. Ա. Իզյումովը, —վոր չքավորության ֆոնդի դրամները, վոր հատկացված են լեղել 1925/1926 թ., փոխառուների տնտեսություններն են հասել 1927 թ. գարնանից վոչ շուտ կամ դրանից միքիչ առաջ: Վարկերի հապաղում ե նկատվել թե ընկերություններում, թե ստորին մարմիններում: Որինակ՝ Ռյազանի նահանգում ընկերությունը վարկն ստացել ե 1927 թ. փետրվարի 27-ին, բաժանել ե 1927 թ. մայիսի 5-ին, այսինքն Ռյազանում վարկը պահպել ե 66 որ: Քաղաքի այդ հապաղումին միացել ե միջոցների վոչ պակաս հապաղումը և ընկերություններում»¹:

Վարկերի տեղ հասցնելու ձգձգումը գլուղացիների դժգոհության հետ միասին առաջ ե ըերել և միշարք զուր ծախքեր: Որինակ՝ Մոսկվայի ընկերություններն ասում են, թե վարկերն ուշ բաց թողնելու շնորհիվ նրանք ստիպվեցին ձի գնելիս լուրաքան-

¹ «Կոոպերատիվայ Խոզե», № 262, 1927 թ. 17 նոյ.

Առուր ձիուն վճարել միջին թվով 280 ռուբլի, մինչդեռ
լեթե վարկերը ժամանակին բաց թողնելին, կարելի
կլիներ մի ձին 225 ռուբլով գնել:

Ի՞նչ արտադրական եֆֆեկտ (արդյունք, հետևանք)՝
ե տվել այդ ֆոնդով գլուղական չքավորության վար-
կավորումը։ Տեղական կազմակերպություններն այս
հարցին քիչ ուշադրություն են նվիրել։

«Համարլա վոչ մի ընկերություն մինչեւ¹
Ռուսպաղանակի հետազոտության ձեռնարկելը
չի զբաղվել չքավորության կազմված ե բաժան-
ված ֆոնդի ոգտագործման ստուգումով։ Այդ բա-
նում նախաձեռնություն չեն ցուց տվել նաև
գյուղական հասարակական հաստատությունները,
մասնավորապես գյուղկոմները, վորոնք կոչված
են չքավորության ինքնաստուգում կազմակեր-
պելու։ Ստուգման բացակալությամբ ամենուրեք
թույլ ե նաև միջոցների ոգտագործման հաշվե-
տվությունը¹։

ՈՒՖՄԸՀ Հողժողկոմատի նյութերում, վորոնք
պատրաստված են կուսակցության XV համագումա-
րի համար, նշվում ե, վոր

«տեղերում ծանոթանալով չքավորական փոխա-
տվությունների ոգտագործման եֆֆեկտիվության
հետ՝ հայտնագործված ե, վոր կոլտնտեսություն-
ներին տրված փոխատվություններն ոգտագործվել
են ավելի ուսցիոնալ կերպով վորոշ արտադրական
արդյունքով։ Իսկ անհատները շատ դեպքերում

¹ Գյուղում կատարվող աշխատանքի հերթական խնդիրնե-
րի հարցի շուրջը։ Նյութեր Համեկ XV Համագումարի համար,
ՈՒՖՄԸՀ Հողժողկոմատ։ 1927 թ.։

փոխատվությունները գործադրել են վոչ ըստ
նշանակության (փոխատվությունների չափը
սահմանափակ լինելու պատճառով), և աղղիսով
այդ փոխատվությունները ցրված լինելով ան-
հատական տնտեսություններում՝ ավելի քիչ ար-
դիունք են տվելու:

Հետագալում անհրաժեշտ ե վճռականապես վե-
րացնել վերը նշած բոլոր թերությունները՝ առավելա-
գույն չափով ոգտագործելով չքավորական տնտեսու-
թյունների կոլեկտիվացման համար կազմված գյու-
ղական չքավորության վարկավորման ֆոնդերը։ Մաս-
նավորապես կուսակցական կազմակերպությունները
պետք ե աշխատեն, վոր ավելացվեն չքավորության
վարկավորման ֆոնդերը տեղական միջոցներով (տե-
ղական բյուջե, կոոպերացիալի մասհանումներ ևայլն),
ավելի լրիվ և, իհարկե, նպատակահարմար կերպով
ոգտագործվեն այդ ֆոնդերը, վարկերն արագապես
հասնեն տեղերը, ֆոնդերը բաշխելու, չքավորական
ֆոնդից փոխատվությունները տալու գործում ակտիվ
մասնակցություն ունենան խորհուրդները, գլուղկոմինե-
րը, գլուղի հասարակական կազմակերպությունները։
Այս տեսակենտից անպայման ուղիղ պետք ե համարել
կուսակցության Սիրիրի լերկրային կոմիտեի բլուրովի
հատելալ վորոշումը։ Նշելով, վոր չքավորության ոգ-
նության վերաբերյալ կիրառվող բոլոր միջոցները
գործադրվում են առանց հենց իր—չքավորության ակ-
տիվ մասնակցության, վոր ոգնության վերաբերյալ
հարցերը չքավորական ժողովներում և՝ խմբերում դնելն
ընդհանուր բնույթ ե կրում, լերկկոմի բլուրոն վորո-
շել ե

«բոլոր կուսկազմակերպություններին առաջար-
կել չքավորությունը մասնակցել տալ թե
տվյալ շրջանում կամ գլուղում գծված ալս կամ
ալն ֆոնդի բաշխման ծրագրի քննությանը, և
թե այս առանձին կոլլեկտիվները և տնտեսու-
թյունները վորոշելուն, վորոնց պետք և չքավո-
րական ֆոնդերից վարկ արվի»:

Գլուղի կուսակցական կազմակերպություններին
իրանց այդ աշխատանքի մեջ կարող են մեծ ոգնու-
թյուն ցուց տալ և պիտի ցուց տան քաղաքային
խորհրդակին հիմնարկությունների (որինակ՝ գլուղա-
տնտեսական վարկի ընկերությունների) կուսակցա-
կան բջիջները: Կուսակցության ԽV. Համագումարը
վորոշել ե

«անհրաժեշտ համարել չքավորության ֆոնդերի
մեծացումը պետական և տեղական բլուջեներով՝
այդ ֆոնդերին սահմանելով՝ արտադրական-կոո-
պերատիվ նշանակություն (կոլտնտեսություն-
ներ), միաժամանակ մյուս վարկերում մեծացնե-
լով չքավորության բաժինը»:

Գյուղատեսեսական չբավորության վարկավորումը
գյուղատեսեսական վարկի ընդհանուր սիստեմով.

Իսկ ընդհանուր վարկավորումով գլուղական չքա-
վորության վարկավորման գնրծն ինչ դրության մեջ եւ
Մենք այստեղ ել աչքի ընկնող նվաճումներ ունենք,
բայց քիչ չեն նաև թերությունները: Այդ թերություն-
ներից գլխավորապես նրանց վրա, վորոնք դանդաղեց-
նում են հետագա առաջխացումը, անհրաժեշտ ենք

համարում հրավիրել կուսակցական կազմակերպությունների ուշադրությունը։ Մեր աշխատանքի այդ ճյուղում ամենից հաճախ պատահում են հետևյալ թերությունները։

Առաջինը—գլուղատնտեսական վարկերը բաշխելիս վոչ միշտ են զեկավարվում դասակարգային մոտեցումով, վոչ միշտ են կիրառում կուսակցության, խորհրդակին իշխանության ցուցումները չքավորությանն առանձին ուշադրությամբ վերաբերվելու նկատմամբ։ «Փոխատվությունների միջին չափն ընկնում է իշխող գծով ունենորից դեալի չքավորը»,—գրում են Միքիրից։

Ֆրունզեկի շրջանի (Ղըրղըղստանի) ինն վարկալին ընկերությունների հետազոտման նյութերը ցուց են տալիս, վոր «ամենաձեռնառ գրության մեջ են կոռպերատիվների ունենոր անդամները թե վարկի ընդգրկման տեսակետից, թե փոխատվությունների չափի տեսակետից։—վորքան խումբն ունենոր ե, այնքան ել փոխատվության չափը բարձր ե»։

Խորհրդակին Միության շատ շրջաններից յեկող այս գանգատները հաստատելու համար միքանի թվեր բերենք։ Ահա, որինակի համար, Բարլուկի վարկային գլուղատնտեսական ընկերությունը (Իրկուտսկ): Դա 338 բաժնետեր ունի. դրանցից 151-ը չքավոր ե, 151-ը միջակ, 36-ն ունենոր։ Բայց այդ ընկերությունից 84 ե վարկ ստացել։ Տարբեր խմբերի յուրաքանչյուր բաժնետիրսջ տված վարկի միջին չափը վորքան ե։ Միջին թվով կարճատե փոխատվություն են ստացել ամեն մի չքավորական տնտեսություն 23 ուռելի, միջակային—40 ուռելի, ունենոր—133 ուռելի։ Համարյա

Նույն դրությունն ենակ լերկաբատեւ փոխատվությունների վերաբերմամբ, միջին թվով չքավորական տընտեսությունն ստացել ե 53 ռուբլի, միջակալինը—51 ռուբլի, ունկորինը—153 ռուբլի: Ել ավելի ապշեցուցիչ տվյալներ են տալիս Մարինսկի շրջանի (Տոմսկի) հետազոտման նյութերը: Մի վարկալին ընկերության (տեղական աշխատավորների կարծիքով՝ միանգամայն տիպիկ վհչ միայն այդ շրջանի համար) փոխատվությունների բաշխումը նկարում ե հետևյալ աղյուսակը:

Տնտեսությունների խմբերը	Տնտեսությունների ընդհանուր թվի վոր տոկոսն են կազմում	Ընդհանուր գու- մարի վոր տոկոսն ե կազմում
Զիազուրկ	18,6	2,5
1 ձի ունեցող	22,1	19,6
2 »	41,3	47,8
3 »	14,6	5,4
4 »	6,1	5,1
5 և ավելի ձի ունեցող	2,0	—
	100%	100%

Այս աղյուսակով դուրս ե զալիս, վոր ստորին խումբը (ձիազուրկ և միաձի, ազգաբնակության 36%) ստացել ե վարկի 22,1% -ը, միջակ խումբը (լերկձի—ազգաբնակության 41,3%) ստացել ե 67% -ը, Մինչ 6,1% քառաձիներն ստացել են վարկի 5,2% -ը, 13,6% ձիազուրկներն ստացել են միայն 2,5% -ը:

Այս կարգի տվյալները քիչ չեն: Յեվ դրանք բոլորը մի բան են ցուց տալիս—տեղերում, գլուղատընտեսական վարկի բաշխման գործնական աշխատան-

քում այս կամ այն շրջանում լերբեմն շեղվում են դասակարգային գծից, մոռանում են ազգաբնակության չքավոր մասի շահերը, վոչ միշտ են ըստ հարկին հաշվի առնում և միջակի շահերը, ուժեղացնում են մեր թշնամի կուլակների խումբը:

Յերկրորդը—անհատական տնտեսություններին վարկավորումով հրապուրելը։ Այդ հրապուրումն ամբողջովին ծագում ե վերը բերած թերությունից։ Վորքան վոր վարկային ընկերության ղեկավարները պարզ գաղափար չունեն պետական գյուղատնտեսական վարկի գործնական ոգտագործման գործում կուսակցության և խորհրդային իշխանության բռնած գծի մասին, այնքան ել մոռացվում. ե, վոր այդ վարկը ցըգած մանր և մանրագույն գյուղացիական տնտեսությունների կոլլեկտիվացման նպաստող լծակ ե հանդիսանում։ Ուստի և՛ ուժ են տալիս անհատական տնտեսությունների վարկավորմանը։ Այստեղից ել ծագում ե այն դրությունը, վոր գտելե Բանվորա-գյուղացիական տեսչության ժողովրդական կոմիսարիատը՝ ՌԽՖՍՀ մեջ գյուղատնտեսական վարկի ստորին ցանցի հետազոտություն կատարելիս։ ԲԴՏ լեզրակացություններում ասվում ե.

«Սոցիալիստական ոեղերմների միջոցներն ոգտագործելով՝ գյուղատնտեսական վարկի սիստեմը նպաստում ե առաջմ անհատական, բաժան-բաժան լեզած գյուղացիական տնտեսության ամրապնդմանը, և վոչ թե նրա կոլլեկտիվացմանը»։

Յերրորդը—դեռ գործադրվող լերաշատավորության սիստեմը։ «Միքանի ընկերությունների պրակտիկա-

լում յերաշխավորությունը դեռ շատ ամուր և պահպանվում,—գրում են Սիբիրից:—Փոխատվությունների այդ սխտեմը չքավորին ունենություն կախման մեջ և դնում և ճորտալին հաբարերություններ և ստեղծում»:

Թե գործնականում ինչի յե հասցնում այդ, «Власть Труда» («Աշխատանքի Խշանություն») լրագրի եջերում պատմում ե ընկ. Զերը: Զալարինսկի շրջանում ընկերությունը մի չքավորին փոխատվության իրավունք ե տվել այն պարմանով, վոր նա յերաշխավոր գտնի: Չքավորը դիմել է կուլակ Լարիոնովին: Լարիոնովը, իհարկե, համաձայնել ե, բայց առաջարկել ե.

— Յերաշխավորություն կտամ, միայն թե դրա փոխարեն մի դեսիատին ցորեն պետք ե հնձես:

Նույն հեղինակը պատմում ե-և՝ մի ուրիշ դեպք: Մի չքավոր 40 ռուբլի փոխատվություն ե վերցրել և գրանից 25 ռուբլին տվել իր ունեոր հարեանին «յերաշխավորության համար»:

Չորրորդը—փոխատվությունների կարճատեսությունը: Կարճ ժամկետով տրված փոխատվությունը կարող ե բավարարել միայն ամուր տնտեսությանը: Չքավորի համար այդպիսի փոխատվությունն ոգնություն չե, այլ ուղղակի ճորտություն: «Կարճատե փոխատվություններ տալը չքավորական տնտեսություններին իրական ոգնություն չի հասցնում»,—զանգատվում են Պերմի շրջանից:

«Կրասնոյե Զնամյա» («Կարմիր Դրոշակ») թերգոր գրում ե.

«Վճարաժամերը չքավորության համար անշար են: Որինակ՝ չքավորոց գարնանը մի ձի

յե գնում 80 ռուբլով, իսկ աշնանը փողը պետք է վճարի: Բայց ձին աշնանն արժե վոչ թե 80, այլ 50—60 ռուբլի: Ժամկետների տեսակետից վարկերը բաց են թողնվում միենուկն պայմանաներով թե չքավորին, թե ունեորին»:

Չքավորական տնտեսության վրա կարճատե վարկի ունացած բացասական ազդեցությունը հաստատում է նաև ԲԳՏ-ը գյուղատնտեսական վարկի ստորին ցանցի իր հետազոտության նյութերում: ԲԳՏ նյութերում բերված են նույնիսկ այսպիսի իրողություններ—չքավորն ստիպված է փոխատվությունը վճարելու համար մասնավոր անձերից փող վերցնել՝ վճարելով նրանց տարեկան $180—200^{\circ}/_0$:

Վարկավորման ժամկետների հարցին ե հարում անմիջապես նաև վարկի չափի հարցը: Զանազան կազմակերպությունների և հիմնարկությունների տրամադրության տակ գտնվող բոլոր տվյալներից յերևում ե, վոր չքավորական տնտեսություններին տրվող վարկի չափը բավարար չե: Տնտեսության մեջ այս կամ այն ձեռնարկը գլուխ բերելու համար վարկի անբավարար լինելու հետևանքն այն ե լինում, վոր վարկն այն բանի վրա չի գործադրվում, ինչի համար վոր ստացվել ե, այլ անոգուտ ծախսվում ե, ուտվում ե:

Ցեղ վերջապես ելի՞ մի անառողջ յերևույթ. դա չքավորական տնտեսությունների վարկերի պակասեցման տենդենցիան ե, վորը գյուղատնտեսական վարկի աշխատավորները շատ հասարակ կերպով են բացատրում.

— Գյուղական չքավորության վարկավորման համար հատուկ ֆոնդ ե կազմված: Այդ ֆոնդից ել

պետք ե վարկավորել չքավորությունը և վոչ թե գյուղատնտեսական վարկի սխստեմի ամբողջ ֆոնդից:

Այս հարցը միքանի շրջաններում շատ սուր ե դրված: Այսպես, որինակ, մի գյուղական կուսակտիվի խորհրդակցություն (ԽՀկուտսկ) առաջարկում ե «վճռականապես պալքարել վարկալին ընկերությունների բաժնում լերեացող այն տենդենցիալի դեմ, թե չքավորության վարկավորումը պետք ե սահմանափակել բացառապես չքավորական ֆոնդով»¹:

Վերը նշած այս բոլոր պակասություններն անհրաժեշտ ե կտրականապես վերացնել: Դրա համար անհրաժեշտ ե. — ա) անշեղ կերպով ընթանալ առաջին հերթին կոոպերատիվ միություններին վարկավորելու և այնպիսի միջոցներ ձեռք առնելու ուղիով, վորոնք նպաստելով գյուղացիական տնտեսության բարձրացմանը՝ միաժամանակ խթանելին տնտեսավարության կոլեկտիվ ձևերին անցնելուն. բ) վերացնել անձնական յերաշխավորությունը՝ ոգտվելով գյուղկոմների յերաշխավորությամբ այն դեպքում, իերբ դա անհրաժեշտ ե. գ) չքավորական անտեսություններին տրվող փոխառվությունների չափն ավելացնել. դ) չքավորական տնտեսությունների վարկավորման ժամկետը յերկարացնել՝ յեխելով այդ տիպի տնտեսությունների շրջանառությունների հնարավորությունից. ե) վճռականապես պալքարել չքավորական տնտեսությունների վարկերի կրճատման փորձերի դեմ, վորոնք պատճառաբանվում են գյուղական չքավորության վարկավորման հատուկ ֆոնդի գոյությամբ: Վոր դա չպետք ե անդրադառնա ընդհանուր վարկավորման գնով վարկ

¹ «Վласть Труда», 1927 թ. 12 նոյ.

ստանալու վրա, բավական համոզիչ կերպով ասված ե յեղել դեռ Համ Կ(բ)Կ ԿԿ-ի հոկտեմբերյան (1925) պլենումի վորոշման մեջ.—

«Չքավորական տնտեսությունների բարձրացման գործում ոգնություն ցույց տալու նպատակով,—ասվում ե վորոշման մեջ,—ընդհանուր հիմունքներով գյուղատնտեսական վարկի միջոցներից ալդ տնտեսություններին վարկավորելու վրա դարձրած ուշադրության ուժեղացման հետ միասին անհրաժեշտ ե մշտական հատուկ ֆոնդ հիմնել կենտրոնական գյուղատնտեսական բանկի կազմի մեջ»:

Այս վորոշումն ել ավելի կատեզորիկ ձևով հաստատված ե կուսակցության XV Համագումարի կողմից։ Անհրաժեշտ համարելով գյուղական չքավորության վարկավորման հատուկ ֆոնդի չափերն ավելացնելը՝ համագումարն առաջարկել ե միաժամանակ ավելացնել չքավորության բաժինն այլ վարկերի մեջ։

Գյուղական չքավորությանն արտօնություններ տալը յեվ գրանց իրականացումը.

Այս բոլորին անհրաժեշտ ե ավելացնել նաև այն զանազան արտոնությունները, վոր պըռլետարական պետությունը տալիս ե գյուղական չքավորությանը։ Որինակ՝ միանական գյուղատնտեսական հարկը։ Կենտրոնական կոմիտեի ապրիլյան (1926 թ.) պլենումը հետեւալ հրահանգն ե տվել գյուղատնտեսական հարկի նկատմամբ։

«Ապրանքադրամական հարաբերությունների և
 գլուղում առաջացած կուտակման ձեռք բերած
 աստիճանը մի կողմից, պրոլետարական պետու-
 թյան շահերին համապատասխան՝ այդ կուտակման
 կանոնավորման անհրաժեշտությունը մէուս կող-
 մից առաջադրում են գլուղացիական ազգաբնա-
 կության հարկադրման այնպիսի սիստեմի կա-
 ռուցման խնդիրը, վորը թեթևացնելով գլուղա-
 ցիության սակավազոր խավերի համար հարկա-
 լին ծանրությունը, իր տիպով առավելապես մո-
 տենար լեկամտալին տուրքադրման սիստեմին»:
 Բայց գործնականում ինչ ենք տեսնում: Միթե
 վոչ այն բանի կիրառումը, ինչ վոր նշում ե կենտրո-
 նական Կոմիտեի պլենումը: Այսպես, գլուղատնտեսա-
 կան հարկի որենքի համաձայն 1927 թ. ամեն մի հո-
 գուն 30 ռուրլի լեկամուտ տվող տնտեսությունները
 վճարում են իրանց լեկամտի մի հիսներորդ մասից
 միքիչ ավելի, մինչդեռ ամեն մի հոգուն 300 ռուրլի.
 Լեկամուտ տվող տնտեսությունները վճարում են իրանց
 լեկամտի մի հինգերորդ մասից ավելի¹: 1926/27 թ.
 գլուղատնտեսական հարկ վճարելուց կատարելապես
 ազատված ե ամբողջ գլուղացիության 25% -ը. հար-
 կատվության լենթարկված սակավազոր տնտեսություն-
 ներն աչքի ընկնող զիջումներ են ստացել: ԽՍՀՄ ԿԳԿ-ի
 հոկտեմբերյան սեսսիան «Հքավորության և ընդհան-
 րապես սակավազոր գլուղացիության նլութական դրու-
 թյունը բարվոքելու նպատակով» վորոշել ե գլուղա-
 ցիական տնտեսությունների նորից 10% ազատել գլու-

¹ Փաստեր և թվեր ոպպողեցիայի խուժանավարության և հե-
 րյուրանքների դեմ: Մոսկվա, 1927 թ.:

դատնտեսական հարկ վճարելուց։ Այսպիսով գյուղատնտեսական հարկից ներկայումս միանգամայն ազատված և գյուղացիական տնտեսությունների 35% -ը։ Յեզ սրա հետ միաժամանակ կուսակցության XV Համագումարը հանձնարարել է կենտրոնական Կոմիտեին

«... գյուղի առավել ունեող խավերի աճող յեկամուտները հարկադրելու նպատակով... մշակել առավել լրիվ պրոցեսսիվ-լեկամտաբին հարկադրման անցնելու հարցը»։

ԽՍՀՄ կԳԿ-ի սեսսիալի նույն վորոշումով (Մանիքեստ) վերացվում ե գյուղացիական տնտեսությունների փոխատվություններով արած այն պարտքը, վորպետությունից ստացել են 1924/25 թ. անբերրիության ժամանակ։ գյուղացիական տնտեսություններից վերացվում են անցած տարիների գյուղատնտեսական հարկի ապառիկները, արտոնություններ են տրվում ապառիկների, տուգանքների և այլն և հարկադրման այլ տեսակների վերաբերմամբ։ Սեսսիան հանձնարարել ե ԽՍՀՄ կԳԿ-ի և ԺԿԽ-ի պրեզիդիումին

«գյուղացիական սակավազգոր խավերի զառամած հասակի տեր անձանց տետության հաշվին աստիճանաբար ապահովելը ձեռնարկելու համար ուրենք մշակել»։

Միքանի ընկերների հաշվելով՝ մեզ մոտ $1\frac{1}{2}$ միլիոնից ավելի արդարիսի ծերեր կգտնվեն¹, լրիվ ապահովությունը կգործադրվի 5 տարվա ընթացքում։ Կենսաթոշակի չափը տարեկան 50 ռուբլի յեւ

Այս արտոնություններին պետք ե ավելացնել մի շարք զանազան արտոնություններ ևս փակտ—շինա-

¹ Բ. Մ. Գյուղացիական կենսաթոշակներ։

բարական ճյութ և վառելիք—հալթալթելու վերաբեր-
մամբ (ազգարնակությանը և հասարակական կարիք-
ների համար նշանակված փալտի ընդհանուր արժեքի
 $17,5^0/0$ -ը ձրի և արտօնլալ պայմաններով ե բաց թող-
նըվում), ընդհանրապես սիրմացու և մասնավորապես
ընտիր սերմացու հալթալթելու վերաբերմամբ (նախկին
փոխատվություններից մնացած պարտքի վոչնչացումը,
ընտիր սերմեր տալը մոտագա բերքից վերադարձնե-
լու պայմանով), պետական հողային գուլքերը վարձու
տալու վերաբերմամբ (առավելապես չքավորական տըն-
տեսություններին տալն արտօնլալ պայմաններով—
իջեցված վճարով և առանց աճուրդի), մելիորացիայի
և ձկնալին տնտեսության վերաբերմամբ (ձուկ վոր-
սալու տոմսեր վաճառելը՝ վճարումների համար ժամա-
նակ տալով, հատուկ արտօնլալ վարկերը և այլն), պե-
տական ապահովագրման վերաբերմամբ (կոպարային
վճարումից լրիվ կամ մասնակի ազատելը,—տարեկան
մոտ 9 միլիոն ռուբլի) և այլն:

Թե կուսակցության XIII Համագումարը, թե Կեն-
տրոնական Կոմիտեի հոկտեմբերյան (1925 թ.) պլե-
նումը մատնացուց են արել, վոր գլուղական չքավո-
րությանը խորհրդային որենքներով տրվող բոլոր ար-
տօնությունների և առավելությունների լուրաֆամա-
նակ և լրիվ իրագործման ասպարիզում տեղական կազ-
մակերպությունների աշխատանքը բավարար չե։ Զնա-
յած վոր կուսակցության XIII Համագումարից և հոկ-
տեմբերյան պլենումից բավական մեծ ժամանակ ե ան-
ցել, բայց և այնպես մենք չենք կարող ասել, թե ներ-
կայումս մեզ մոտ ամեն բան կարգին ե։ Կուսակցու-
թյան XIV Համագումարն առաջարկել ե-

«Հսկել վոր գլուղատնտեսական հարկից սակավազոր գլուղացիությունը (միության մեջ լեղած գլուղացիական տնտեսությունների 35 տոկոսը) ազատելու կուսակցության և խորհրդավիճանության վորոշումն իրադործվի ամենալնաշտությամբ»:

Հավասար չափով տեղական կուսակցական կազմակերպությունները պետք ե հոգ տանեն, վոր գլուղական չքավորությանը տրվող բոլոր արտօնություններն ու առավելությունները, վորոնք սահմանված են խորհրդավիճանությունում, իրապես հասնեն չքավորությանը, հասնեն ժամանակին և խկանապես իրականացվեն:

Այս տեսակետից մեր միքանի կուսակցական կազմակերպություններ լավ կանեն՝ որինակ վերցնեն կալուգալի նահկոմից, վորի հրահանգով չքավոր տնտեսությունների գլուղատնտեսական հարկի վերաբերմամբ ազատման և արտօնությունների կիրառման ստուգումն ե կատարվում։ Այդ ստուգման գործնական նպատակները հետևյալ կերպով ե ձևակերպել ընկ. Գ. Ռակիտովը։

«Մենք պետք ե ինչ ել վոր լինի հասնենք այն բանին, վոր 1) չքավորության համար սահմանված բոլոր միջոցներն ոգտագործվեն ամբողջ $100^0/_{\text{o}}$ -ով, 2) վոր այն գլուղացի-չքավորները, վորոնցից ապորինաբար հարկ են վերցրել, գրամք յետ ստանան, վոր ուղարկեն տունը, վոչ թե գոռշներ ստանալու համար նրանց տանեն քաղաք, գոռշներ, վոր այս կամ այն չքավորն ստիպված ե լեղել տալ չինովսիկ-բլուրոկրատի տիմար կա-

մակորության պատճառով, 3) վոր ամենախիստ կերպով պատժվեն այն հանցավորները, վորոնք ամեն մի անգամ խախտել են չքավորության շահերը, նրանք, վորոնց շնորհիվ այս կամ այն չքավորը չի ստացել որենքով իր համար սահմանված արտոնությունները»¹:

Գլուղական չքավորության ժողովների միջոցով, խորհուրդներին, կոոպերատիֆլսերի վարչություններին և գլուղկոմիներին կից չքավորության խմբերի միջոցով, խորհրդային կոոպերատիվ և հասարակական կազմակերպությունների կոմմունիստական ֆրակցիաների միջոցով տեղական կուսակցական կազմակերպությունները պետք ե աշխատեն և հասնեն պրոլետարական պետությունից չքավորության ստացած զանազան արտոնությունների ոգտագործման, վորը չամրապնդի, չպահպանի չքավորության մեջ ապրուստալին տրամադրություններ, այլ նպաստի չքավորության ինքնագործունելության և նախաձեռնության ազատ լերեան դալուն, նպաստի նրա տնտեսական վերելքին մանր տնտեսությունների հետզիետե միացումով և կոլլեկտիվներ դառնալով։ Անհրաժեշտ ե ձգտել և հասնել այն բանին, վոր պրոլետարական պետության այդ ոգնությունը բազմապատկվի հենց չքավորության ինքնագործունելությամբ, մեր կուսակցական կազմակերպությունների ձեռքով ուղղվի ուղիղ հունով։

¹ «Կոմունա», № 294, 1927 թ. 24 դեկտ.։

Կուլակության գեմ մղվող պայքարի լրացուցիչ
ուղիթեր յեզ մերոգներ.

Ելի ի՞նչ լրացուցիչ ուղիներով, ի՞նչ մեթոդներով
պետք է մղվի պալքարը կուլակության դեմ, պալքարը
կուլակության մեկուսացման համար, պալքարը կապի-
տալիստական տարրերը դուրս մղելու համար:

«Կուլակի դեմ պալքարը պետք է մղվի ինչպես
չքավորությունը կուլակի դեմ կազմակերպելու
ուղիով, այնպես ել պրոլետարիատի ու չքավո-
րության՝ միջակ գյուղացու հետ հաստատած մի-
ության ամրապնդման ուղիով, վորապեսզի կուլա-
կի մեկուսացման նպատակով կուլակից միջակը
կտրվի» (կուսակցության XIV Համագումարի վո-
րոշում):

«Երավացի չեն այն ընկերները, վորոնք կար-
ծում են, թե կարելի յի և պետք է կուլակի հետ
հաշիվը վերջացնել աղմինխստրատիվ միջոցների
կարգով ՊԲՎ միջոցով. ասացի, կնիքը դրի և
վերջակետ: Դա հեշտ միջոց, ե, բայց այնքան ել
իրական չե: Կուլակին պետք է հաղթել տնտե-
սական կարգի միջոցներով հեղափոխական որի-
նականության հիմունքով... դա, ինարկե, չի խան-
գարում միքանի անհրաժեշտ աղմինխստրատիվ
միջոցներ գործադրել կուլակի դեմ» (Ստալին):

Այն բոլորն, ինչի մասին մենք խոսեցինք այս
գրքույկի սկզբից սկսած մինչև այստեղ, գյուղական
չքավորության կազմակերպման այն բոլոր ձեռքերը—
չքավորության ժողովներն ու խմբերը, կազմակերպչա-
կան-տնտեսական ոգնությունը, վոր պրոլետարական

պետությունը ցուց և տալիս չքավորությանն անմիջապես և կոռպերացիալի միջոցով (հարկալին և այլ արտոնությունները, գյուղատնտեսական արտադրանքի ապրանքների և արդյունքների գների քաղաքականությունը, վարկը, հողաշինարարությունը, կոլեկտիվացումը, խորհուժածությունների, կոնտրակտացիալի միջոցով արվող ոգնությունը, գյուղատնտեսական հումնութի նախնական վերամշակման ձեռնարկությունները և այլն), —այս բոլորի նպատակն և գյուղական չքավորության և բատրակության քաղաքական և տընտեսական ամրապնդման հետ միաժամանակ, գյուղի արտադրական ուժերի աճման հետ միաժամանակ, գյուղացիության հիմնական մասսալի մանր անհատական տնտեսություններից խոշոր, համայնացված տնտեսություններին անցնելու հիմունքով, —դուրս անել կուլակին իր տնտեսական դիրքերից, դուրս մղել գյուղական եկոնոմիկալի կապիտալիստական տարրերը սոցիալիստականով, քաղաքականապես մեկուսացնել կուլակությունը:

Վերը բացատրած՝ գյուղական չքավորության կազմակերպչական-տնտեսական ոգնության հիմնական առուների հետ միաժամանակ մեր կուսակցությունը գծել ե մի շարք լրացուցիչ միջոցներ և, վորոնց նպատակն ե նպաստել սոցիալիստական տարրերի ավելի արագ, ավելի աջողակի առաջխաղացմանը և ամրապնդվելուն՝ կապիտալիստական տարրերի աճումն արգելելու համար:

Հողաշինարարության և հողոգտագործման միութենական որենք մշակելու համար մեր արդեն վերը հիշած հրահանգչական ցուցումների մեջ կուսակցության կենտրոնական կոմիտեն առաջարկում ե որենքը

մշակելիս կանխատեսել մի շաբք միջոցներ ևս՝ բացի խուրհուրդների ընտրողներից ցուցակից հանվածներին հողային համայնքներում (ժողովներում) ձայնի իրավունքից զրկելուց։ Ընդհանրապես հողաշինարարության և հողոգտագործման խորհրդային որենքում պետք ե մշակվեն

«գյուղացիական հիմնական մասսալի — չքավորական և միջակալին տնտեսությունների հողաշինարարությանը և հողոգտագործմանը մեծագույն չափով ոժանդակելու միջոցներ, հողոգտագործման կոլեկտիվ ձևերին և գյուղացիության կոռպերացման զարգացմանը, գյուղի չքավորագույն խավերի շահերի պաշտպանությանը և շահագործող տարրերի աճումն առավելագույն չափով սահմանափակելուն ամեն կերպ նպաստելու հետ միասին»։

Որենքում պետք ե հաստատապես նշված լինի հողի ազգայնացման անսասանությունը, վորը հանդիսանում ե «գյուղացիության մեջ սոցիալիստական շինարարության իրականացման համար հիմնական նախադրյալ»։ Որենքում պետք ե նախատեսված լինի հատուկ աջակցություն և խրախուսանք (տնտեսական, ֆինանսական, տեխնիկական և կուլտուրական գծով) կոլեկտիվ տնտեսություններին (կոմմունաներ, ընկերություններ, արտելներ) և խորհրդային տնտեսություններին։ Վարձակալության ժամկետները կրճատել մինչև 6 տարի։ պետական ֆոնդային հողերը վարձու տալ աշխատավորական տիպի տնտեսություններին (վարձատվության ժամանակը նույնպես սահմանափակել վեց տարով), վարձել և նորից վարձու տալը պատճել վորպես քրելական հանցանք»։

Կուսակցութիւն XV Համագումարը հաստատել ե
կենտրոնական կոմիտեի այս բոլոր վորոշումները՝ ա-
վելացնելով մի շարք նորերը ևս։ Այսպես, «գյուղի ա-
ռավել ունենոր խավերի աճող լեկամուտները հարկա-
դրելու նպատակով» համագումարը հանձնարարել ե կեն-
տրոնական կոմիտեին

«մշակել ավելի լրիվ պրոգրեսսիվ-լեկամտային
հարկադրման անցնելու հարցը»։

Կոլտնտեսություններին և սակավազոր տնտե-
սություններին գլուղատնտեսական մեքենաներ և գոր-
ծիքներ ձեռք բերելը հեշտացնելու հետ միասին՝ հա-
մագումարն առաջարկել ե մշակել նորմաներ, վորոնք
սահմանափակելին կուլակալին գլուղացիութիւնը գլու-
ղատնտեսական մեքենաներ հալթալթելը։ Համագումարն
առաջարկում ե

«վճռական պալքար մղել կեղծ-ընկերությունների
(և ընդհանրապես կեղծ-կոռպերատիվների) դեմ,
վորոնք սովորաբար ծառայում են կուլակալին
տարրերին իրեն սքողում ապորինի միջոցով վար-
կի, հալթալթման և այլ ամեն տեսակ արտոնու-
թյուններ ստանալու գործում»։

Առաջարկելով հողաշինարարութիւնն կիրառման
ժամանակ աջակցել հողոգտագործման այնպիսի ձևերի,
վորոնք նպաստեն անհատական տնտեսություններին
ավելի արագ կերպով կոլեկտիվալինի անցնելուն (շե-
ներ, գաղթավայրեր), համագումարն առաջարկել ե սահ-
մանափակել

«առանձին կալվածների և մանավանդ ագարակ-
ների համար հող բաց թողնելու պրակտիկան և
հիմնովին գաղաքացնել այդ այն դեպքերում, լեռը
նպաստում ե կուլակալին տարրերի աճումին»։

Յեթե այս բոլորին ավելացնենք նաև համագումարի նպատակադրած միջոցները բատրակության կազմակերպման և շահերի պաշտպանության ուժեղացման վերաբերյալ այն ժամանակ ամենքի համար պարզ կլինի, թե վորքան անճիշտ, վորքան սուտ են յեղել այն մարդկանց պնդումները, ովքեր մեղադրում եյին կուսակցությունը և նրա կենտրոնական կոմիտեն կուլակալին թեքում ունենալու մեջ, գլուղական չքավորության շահերը մոռանալու մեջ։

Մենք աճել և ամրապնդվել ենք քաղաքականապես և տնտեսապես։ Պրոլետարիատի քանակը մեծացել է։ Մի շարք քաղաքական ստուգումներ, վոր վերջին տարին տեղի ունեցան (խզումն Անգլիայի հետ, հարձակումը մեր ներկայացուցչությունների վրա Զինաստանում, Վոյկովի սպանությունը, կապիտալիստական պետությունների սպառնալիքը պատերազմական հարձակում գործելու ԽՍՀՄ վրա, Հոկտեմբերյան հեղափոխության տասնամյակի տոնումը), ամբողջ պարզությամբ ցուց տվին պրոլետարական շարքերի դասակարգային կոնսոլիդացիայի (ի մի գումարման) աճումը, քաղաքական ակտիվության և համախմբման աճումը, լայն պրոլետարական մասսաների դեպի իր ավանդարդը—կոմմունիստական կուսակցությունը—և բանվոր դասակարգի դիկտուրալի մարմինները—խորհուրդները տածած հավատի աճումը։ Մրա հետ միաժամանակ, կոմմունիստական կուսակցության՝ գլուղում վարած լենինյան ուղիղ քաղաքականության շնորհիվ, գլուղատնտեսական արտադրական ուժերի ընդհանուր աճումի հետ միասին, գլուղացիության հիմնական մասսայի տնտեսական աճումի հետ միասին,

Ահնք ունենք նաև գլուղում քաղաքակին արդյունաբերական պրոլետարիատի նեցուկ բատրակության և գլուղական չքավորության կազմակերպվածության աճում, նրա քաղաքական և տնտեսական դրության բարվոքում, Գյուղի հիմնական մասսան ընթանում և մեր կուսակցության, խորհուրդների լեռնից, Բանվորական դասակարգի և գլուղական պրոլետարիատի ու կիսապրոլետարների միությունը մեր հոգագործության կենտրոնական դեմքի—միջակ գլուղացիության հետ—ամրապնդվում և կույտակն ավելի և ավելի լի մեկասացվում:

«Կուսակցության՝ գլուղում վարած քաղաքականության ձեռք բերած աջողությունները և սրա հետ կապված նոր ստեղծված դրությունը պրոլետարիատի կուսակցությանը թույլ են տալիս՝ տնտեսական մարմինների ամրող կարողությունից ոգտվելով և առաջվա պես գլուղացիության չքավորմիջակ մասսաների վրա հենվելով շարունակել դարձացնել կուլակի վրա գործվող հարձակումը և մի շարք նոր միջոցներ ձեռք առնել, վորոնք սահմանափակեն կապիտալիզմի դարձումը գլուղում և գլուղացիական տնտեսությունն առաջնորդեն սոցիալիզմի ուղղությամբ» (կուսակցության XV Համագումարի վորոշումը):

ՑԱՆԿ

Գլուղի գարգացումն ի՞նչ ուղիով ե ընթանում,	bջ
կապիտալիստական, թե սոցիալիստական .	3
Զքավորության ազգեցության աճումը: Զքավո-	
րությունը խորհուրդներում	11
Գլուղական չքավորության ժողովները	17
Զքավորության խմբերը: Գլուղում կատարվող	
աշխատանքի բաժինները	26
Խորհրդային տնտեսությունների տրակտորային	
կոլոնանաները, վարձատու կալանները . . .	45
Կոնտրակտացիայի միջոցով գլուղացիական	
տնտեսության վերակառուցումը	53
Պետական և կոռպերատիվ գլուղատնտեսական	
ինդուստրիա	61
Գլուղական չքավորության կոռպերացումը . .	67
«Քաղաքակրթված» կոռպերատորների կադրեր	
չքավորներից: Զքավորների մանուկները և	
դպրոցները	72
Հենվել արտադրական կոռպերացիայի վրա . .	76
Հողաշխարարություն	80
Գլուղական չքավորության վարկավորումը հա-	
տուկ ֆոնդի գծով	85
Գլուղական չքավորության վարկավորումը գլու-	
ղատնտեսական վարկի ընդհանուր սիստեմով	94
Գլուղական չքավորությանն արտոնություններ	
տալը և դրանց իրականացումը	101
Կուլակության դեմ մղվող պալքարի լրացուցիչ	
ուղիներ և մեթոդներ	107


51

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0063456

[3_n]



9-1-65-409.